

Բարձր

7-8-9/94

արևին
...
تداعيات الأم بائع التماثيل
تساؤلات بريئة خريفات
وردان قرب البحر
ريح أغنية إلى صاصون صورة يبرم
خريفات صورة يبرم كوردان

رحيل اللقالق ...

أغنيات حب إلى إارات

النصوص الفائزة بمسابقة نادي الشبيبة السورية في الشعر والقصة القصيرة

كنون الماء آرتين الصهرج أغنية إلى
رتين يسائل الصحراء تداعيات الأم بائع
القلب تساؤلات خريفات يسكنون
ب البحر ذب رسالة إلى "آزو"
ل الصحراء تداعيات الأم بائع التماثيل
خريفات يسكنون الماء تساؤلات بريئة

كتاب
الحلقة الأولى
نيسان ١٩٩٣

Հրածեշտ տուի փոքրիկ աշակերտուհիներուն եւ սկսայ վննել
աշխարհի մէկ ծայրը առանձինն մրափող այս մարդը. հիմա, իր
այս մրափին մէջ, ան թերեւս կ'որոնէ Եփրատի պոյգ ափունքնե-
րուն... դարէ մը ի վեր իր կորսուած հարապատները, կամ Կիլիկիոյ
դաշտերուն մէջ ձմրան եղանակին մոլորած գաղթականներու
կարաւանները, պորս գիշերով կը հալածեն տափաստաններու
բորենիներուն մրմոցներն ու գայլերու ռոնոցները՝ «Կորսուած...
փոքրիկ... աղջիկ մը...»:
ՖԱԹԷՆ ԷԼ-ՄՈՒՏԱՐԲԵՍ
...Արթին, մի՛ վախնար, ես մեծ հայրդ եմ եւ սսիկա Մուշն է. շատ մի
հեռանար, ա՛ն այս գորգը եւ փոէ տանդ մէջ, որպէսզի
տարութեան համը եւ տոհմիդ բոյրը ճանչնաս, շօշափե՛
մատներովդ եւ անոր մէջ պիտի պգաս սիրտ մը, որ կը բարբախէ, եւ
հոգի մը, որ կը շարժի. հոտոտե՛ եւ ռունգերդ պիտի լեցունին
երիտասարդուհիներու, նուրի եւ գինիի բոյրերով:
ԻՊՐԱՆԻՍ ԷԼ-ԽԱԼԻԼ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1.-ՄԱՐՈՒՇ	Սբրորե
13.-Գ. ԱԲԷԼԵԱՆ	Պէյրուբ
19.-Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Մեռեալ կէտ
23.-Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ	Տեմդեր
58.-Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	Գիշերային ակումբի եւ մարդկային սիրոյ մասին
67.-Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ- ԳՐԻԳՈՐԵԱՆ	Վիգէն-Վրէժ
83.-Ֆ. ԷԼ-ՄՈՒՏԱՐՐԷՍ	-Արձաններու վաճառորդը
89.-Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Դիակի սայլը
91.-Ա. ԷԼ-ՏԸՊԸԲ	Երգ Սասունին
95.-Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	«Արագիլներուն գաղթը»
105.-Ա. ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ	Հայ առաջին թերթին՝ «Ազգարար»ի 200ամեակին առթիւ.
117.-Ն. ԱԴԱԼԵԱՆ	Պօղոս Սնապեանի Միջնարարը
124.- * * *	Մշակութային լուրեր

Բագրու

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԳ. ՏԱՐԻ 7-8-9 ՅՈՒԼ.-ՕԳՈՍ.-ՍԵՊՏ. 1994 ՊԷՅՐՈՒԹ

ՄԱՐՈՒՇ

ՍԹՐՈՒՔ

մենք կը մեռնինք թէ աստուածներ չստեղծենք
մենք կը մեռնինք թէ աստուածներ չսպաննենք

ԱՏՈՆԻՍ

ՃԻՆ

հողին ճիշը դեռ չէ մեռած
կնճիռներու մէջ լուսեղէն
որ ներսիդին ձեր կը փրկէ փճացումէ
միայն եթէ կարենայի հասնիլ այնտեղ
եւ փրկել զայն
ճիշը հողին

տեղնչ

երկիր սէր իմ
 արուի նման պիրկ պիտի գամ քու վրայէդ
 սիրոյ անպէտք բառերու
 հագուստները հանելու
 եւ հարսնաքողը այրիութեանդ ողբացող
 ծեքծեքումներուն աւելորդ
 պատուելու
 քեզ պահելու մերկ
 գեղեցիկ անահիտի մը նման
 եւ այն ատեն միայն այնժամ
 երկրպագել ես քու քարիդ պիտի գամ

մահ

աչքերս գոց են մահապարտի սետութեամբ
 երկիր իմ
 լուսաւորեր են քեզ հազար հազար
 նայուածքները գայլերու
 կը բարձրանամ ոտնաձայներէն արեւին
 անձրեւներու կաթիլներէն ուղղութիւն կը հարցնեմ

հողն ու մահը

հողն ու մահը բարեկամներ են ինձի
 կոպերուս տակ հովն իր զաւակը կ'օրրէ
 մահը հազար ձեւերով իմ մէջ ծաղկեր է արդէն
 սերմնափոշի կը սրսկէ
 խաչերուն քիթ ու բերնին
 ժամանակը զիստերուս մէջ կը քնանայ առշուտ
 արեւն է որ իր անցումը կը նշէ
 ինչպէս տղեկ մը որ մատով
 փոշեթաթախ ապակիին
 իր անունը կը գրէ

աստուածներ

կա՞ն աստուածներ որ կը մեռնին
 տառապանքէն ու ինչ հասցիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ԳՐԱԴԱՐԱՆ
 ԵՐԵՎԱՆ

187-2019

մէկը ես եմ մէկը Միհեարն ու երրորդը՝
 այն որ եղաւ կամբջումը
 մեզ իրարու ընծայող

ուրիշը

մէկը չկար որ ըսէր թէ կը մեռնիմ
 բայց աստղերուն զրոյցը ինձի ուրիշ բան ըսաւ
 հեռուէն անցնող դոփիններուն արձագանգը
 արգանդիս մէջ թրթռաց
 ինձի ուրիշ բան ըսաւ
 ու երկինքը երբ վարագոյրը քաշեց ու գրկեց զիս
 ինձի ուրիշ բան ըսաւ

վեցիս

դիտեցէք զիս գեղեցիկ եմ
 թէեւ բեկուած անդամներով
 կուրացուած եւ անտրոփ

բայց գեղեցիկ եմ ան-ամբողջ
 եւ կատարեալ

արին

փողոցներուս մէջ անմարդ
 արինն է տես որ արեւով արթնցած
 խաղընկերներ կը փնտռէ

յետոյ հովին սրունքներէն քարշ եկած
 կ'երթայ մինչեւ անապատը մարդկութեան
 եւ վրէժը անոնց դէմքին կը փսխէ

լուութիւն

լուութիւնը
 արինս է
 որ իմ բացուած երակներէս
 պարզօրէն կը պարպուի

արին

ափը մահիկին նետեց
 նորափթիթ ու ծպտուն

ափը խորունկ արիւնեցաւ մանգաղէն

խաշերն արին կաթեցին

վաղը

ծառուղիներ հանգոյցներու պէս ուներէն կը կախուին
 եւ պատմութիւնը վարսերուս մէջ խճճուած
 կ'արգիլէ որ վաղուան հիւսքերը կապեմ

խենթութիւն

վերջին անգամ տեսաք զիս
 երբ յուշերու որդերը ալ իմ գլուխէս
 դուրս կու գային
 մերկութիւնըս կը ծածկէին
 եւ հիւանդոտ ծառի նման հովերուն հետ տենդագին
 փտութեան եւ վարակումի երգչախումբեր սարքեր էի

փողոցները
 պատառոտած աղիքներ
 խեղճութիւն կը փսխէին

իմ խեղճ քրքիջս միայն
 մայթերուն տակ շունչ կը փնտռէր
 խեղդուած աստղեր
 եւ ջրամոյն գերանդիի նման ժանգոտ լուսին մը որմէ
 կարենար քուրջն իր կախել

անէծք

ոչինչներու սպասումն է ահա այս
 անապատին մէջ ծարախն ձեր անսկիզբ

անէծքի պէս կու գամ թափիլ քաղքենի
 ոչինչներու հանգստութեան ձեր օրհաս

կուսութիւն

քու հողերուդ առագաստին վրայ միայն
 իմ բիրերորդ կուսութիւնըս կրնամ ապրիլ
 առաւօտներն
 պատառոտած սաւաններ կը մնան միայն
 երէկ գալիք երազներէն

քաղցկեղ

քաղցկեղ է ինք
 եւ շղթայուած
 իր ցաւին դէմ անկարող

ինչպէ՞ս ապրիլ մահը առանց
 մեռնելու

ցոլացում

իմ դէմքըս մութ է
 բայց ցոլացումն իր
 քու անեզրիդ մէջ
 գիտեմ պայծառ է

դիցուհին

եւ մոռցուած դիցուհին եմ
 ձեր սիրոյ մէջ բանտուած
 ձեր աղօթքէն խեղդուած
 ձեր բառերէն խողխողուած

մինչ բուռ մը լոյս
 կողերուս մէջ պիտի կեանքը յղանար

ոչինչ

հիմա արդէն եւ ոչինչն եմ
 այն կէտը ուր սկսեք է եւ կ'աւարտի
 սկսեալը
 տարածութիւնն ուր կը գրեն կը կարդանք

ու կը ջնջուի
եւ քառուը հեղ մը եւս ծրագրումով
կը կերտուի

յարալէզ

ազնուական դիակ որպէս
ողբի յարալէզներուն տուին զիս
եւ զարմացան երբ մնացի անկեւեղան

ընտրել

ինչպէ՞ս ընտրել ճամբաները
երբ գիտես որ բոլորը միշտ պիտի տանին
հոն ուր չես ուզեր ըլլալ

վերադարձի ուրախութիւնն ինչպէ՞ս ապրիլ
երբ դուն կեցած
նոքերուդ տակ միայն օրերն շարժեր էին

հակաքերթուած ինչպէ՞ս գրել
օրերուն մէջ հակակեանքին

քար

եւ քարացած ցաւն եմ բոլոր դարերուն

լուծիւնը ամանակներու կը բաժնեմ
եւ անոնց մէջ որմերս կը գետեղեմ

եւ քարացած լկտիութիւնը մարդկութեան

եւ խիղճը քար
եւ ճիշը քար
եւ աղօթքը հայհոյուած

եւ հաւատքն եմ մարդկութեան

քոլած

կ'ըսեմ ձեզի
ոչինչ նոյնը պիտի ըլլայ ասկէ ետք

բառերն ալ օրերուն նման
չեն վերադառնար բնա

ապրիլ պէտք է ապականած
սենեակին մէջ երկիր կոշուող
պատուհանները փակ են բոլոր
լուսամտիփէ արեւներ
հառաչանքէ լուսիներ
եւ հանկարի մէջ աճեցուած
մարդկութիւն

քոլած եղած ի՞նչ պատկեր է
որ կ'արձակէ վատ կիրքերը
ժամանակի արեւներէն կոնծուած
եւ փոքրացած հողերով

սպասում

ու եթէ իմ բառերըս քար չըլլային
քարերըս խօսք չըլլային
կը սպասէի՞ այսքան երկար
ձեր գալուն

վերադարձ

ձեզի կու գամ մոռացումի երկիրէն
ուր հովը միս-մինակ է
եւ երկինքը իր երկունքի
անծայրածիր լուծեան
զգուանքներէն կը կառչի

ձեզի կու գամ անվերջ մահուան հողերէն
աչքերուս մէջ դուք ձեր կեանքը
թերեւս գտնէք
թէ կարենաք պարկեշտօրէն
մոռացումի եւ մահուան կոյր
աչքին նայիլ

մոռացում

մոռացումի մանգաղները
այդ որքան բան
հնձեցին

չուրը ժանգ կապեց ժայտերուն վրայ
խոտերն կախուեցան ինքնասպանօրէն
ճառագայթներէն
եւ մնաց քարը ծանրախոհ ցառով
գալիքին դիմաց

հող

կ'ուզէի
գեղեցիկ բառերու հասկերով
օրհներգել քեզ հող
բայց երբ բառերս կապեցի
քու օրերուդ նարօտներով
ափերս ամբողջ արիւն լեցան
ու հասկերըս խեղդուեցան

հող չգիտցայ
քո՞ւ արիւնդ էր
թէ իմըս

գալ

պէտք է գամ ու լռեմ հետդ
թոյլ տանք երկուքով
որ ժամանակը ինքզինք գտնէ
եւ փորձէ պահ մը
պահ մը գոնէ քնանալ
իմ եւ քու թեւերուն մէջ օտար
որ յետոյ երբ կրկին անգամ բաժնուինք
կարենանք մեր վաղուան օրերը ապրիլ

պէտք է գամ եւ մինակ ըլլամ
քեզի հետ
ինչպէ՞ս հասկնալ սէրը որ ծաղկեր է
աւազներուն վրայ
առանց նոյնիսկ համբոյրի
եւ ինչպէ՞ս ծներ է կարօտը

առանց բառի մերձեցումի զուգաորման

պէտք է գամ
հողերուդ վրայ քարտէսներն իմ փոած
փնտռեմ ճամբան հինհնացող ամէն քարի
ամէն վանքի աչքաբաց սպասումին
անվերադարձ անյոյս ամէն մեկնումի

պէտք է գամ

անապարանք

ոգիներու սանաթորիում մըն է այս
այստեղ ոչ ոք կ'անապարէ

եկուր ինձի քեզի ցոյց տամ
թէ քարերը ինչպէս հողին կը ժպտին
մողէզները ժամանակին հետ կը զուգուին
եւ պատմութիւն կը ծնին

ժամացոյցները հոն ձգէ եւ մերկ եկուր
որ տատասկները մազերուս մաշկդ լիզեն
հովը քեզի կնճիռներուդ սերմի հատիկներ
պահ տայ
եւ անութներդ լեցընէ
իմ այրերուս զարհուրանքով

ան-ժամանակ եւ մերկ եկուր

մոխիր

վերջին անգամ երբ նայեցար
ուրուագիծ մը կար անաղարտ

յետոյ կրկին երբ նայեցար
ուրուագիծն այդ
ոջիլներու կեր դարձեր էր

հիմա բնաւ չես նայիր

եթէ նայիս
ապրող-կեցող մոխիրի մը հրաշք-սիլուէթն

պիտի գտնես

ճայիր
եկուր
մարմինը իմ ախտավարակ
սեռ ու սերմիդ կը սպասէ

մի ճայիր լոկ
եկուր
եկուր

վերջաբան

ոչ պիտի չուզեմ որ վաղըդ լքած
գաս փայփայելու երէկըս փոշոտ
եւ կոշտուկ կապած


պիտի չուզեմ որ մարող լոյսին հետ
շուքեր երկարես դէպի մարմինըս

բայց կ'ուզեմ որ գաս թերեւս միակ
եւ վերջին անգամ
եւ հետըդ բերես այդ քացիսու դրած
ժառանգութիւնըդ
քարերուս վրայ լայն բանաս ծալքերն
ու գատես կամաց
որ յետոյ անգիղջ թաղես դիերը
վերցնես հետդ ինչ որ կայ առողջ
եւ քայես առաջ

յետոյ...

կրնաս ետ ճայիլ առանց վախճալու
ալ քար դառնալու վտանգը չկայ

Գ. ԱԲԷԼԵԱՆ



Պ Է Յ Ր Ո Ւ Թ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Պէյրուսի հետ երկրորդ հանդիպումս տեղի ունեցաւ առաջինէն ուղիղ ինը տարի ետք: Երկար ընդմիջում մըն էր այդ: Պայմաններս չէին ներեր: Յետոյ, որոշողն ալ ես չէի կրնար ըլլալ:

Այդ երկարատեւ ընդմիջումի ընթացքին, սակայն, երազը, Պէյրուսի երազը մնաց մէջս: Մանաւանդ վերադարձիս յաջորդած անմիջական շրջանին, որքա՛ն շատ կ'երազէի գայն: Երազիս մէջ յաճախ կը տեսնէի «գոճապաշ» ծախող խոշոր պեխերով մարդը, նոյնիսկ կ'առնէի իր ծախած եւ անոնց վրայ այնքան գուրգուրացած ճակընդեղներուն հոտը: Կը լսէի «Անթիլիաս մալը, թաթլը փորթուգալ» կանչող հօր ու զաւկին կանչը: լայկան ձայնով մածուն ծախողն ալ կը տեսնէի, թէեւ բնաւ չէի սիրած անոր ծախած մածունը: Մեր գիւղի մածունին հասնող չկար: Բնականաբար երազիս մէջ կու լայի, երբ տեսնէի խոշոր զամբիւղով ստահակը, որ ձեռքէս սուլիչս խլած էր. տակաւին, դիմացի մայթին անցնելով՝ հեզնած էր մեզ, անտարբերութեամբ սուլելով իմ իսկ սուլիչովս: Հապա՞ շարան-շարան ինքնաշարժները, «հարսանիք» ընող շոքեկառքը՝ իր արտադրած ահագին շոգիով եւ մուխով: Յաճախ ես զիս կը դըռնէի հանրակառքի մը մէջ: Երբեմն անկողնիս մէջ մէկ կողմ կը քաշուէի, երկար ձողին վրայ պանանի երկու հսկայ ողկոյզներ կրող մարդուն ճամբայ տալու համար: Օթէլ Լիւքս ալ կ'այցելէի, բայց վերելակը հազիւ կէս ճամբան հասած... կ'արթննայի:

Միայն գիշերով չէր, որ Պէյրուս կ'երթայի: Յերեկով ալ յաճախ հոն կ'ըլլայի: Պղինձէ պնակ մը եւ դգալ մը կ'առնէի. դգալը պնակին գարնելով՝ հանրակառքս կը քշէի: Ընկերներուս շրջանակին մէջ հերոս էի ես: Այնքա՛ն շատ բան ունէի պատմելիք: Եւ որքա՛ն

կը նախանձէին ինծի ընկերներս: Անոնց բերաններէն ջուր կը վազցընէի իմ տեսած ու չտեսած պէյրութեան գեղեցկութիւններով:

Այդ ամառ Պէյրութէն գիւղ եկաւ Թուրիկը: Այո՛, նոյնինքն Օթէլ Լիւքսի Մեծ Թուրիկը: Հիմա այլեւս անոր «հսկայութեան» գաղտնիքը լուծուած էր: Խօսող, խնդացող եւ կատակող մարդ մըն էր: Անշուշտ որ թէ՛ ինք եւ թէ՛ իր կինը գէր, շատ գէր էին, բայց վարժ էի անոնց: Երբեմն իրենց կ'ընկերանար նաեւ Տարօնեանը: Սա դարձեալ հետս մրցումի կ'ելլէր, իր խելքը բաղդատելով իմ խելքիս հետ: Բնականաբար իրեն համար իր ուղեղը հսկայ տունի մը չափ էր, իսկ իմս՝ փոքր, սիսեռի հատիկի մը չափ: Ժամերով կը խաղցնէր զիս, առանց իսկ յոգնելու:

Օր մը ասոնց հետ ուրիշ մարդ մը տեսայ: Հայրս ինծի ըսաւ, որ այդ մարդը Ռուբէն փաշան էր: Խելքս չէր հասներ. ինծի համար մէկ փաշա կար, մեր դրացի Փաշան, որ խանութ ունէր Պէյրութի մէջ: Սա տարբեր մէկն էր: Ուշ, շատ ուշ միայն պիտի ճանչնայի զինք՝ իր գործերուն ընդմէջէն, բնականաբար:

*
* *

Այդ ամառ ուրիշ բան մը պատահեցաւ, որ ծանր ազդեց ո՛չ միայն իմ, այլեւ բոլոր գիւղացիներուն վրայ: Ներգաղթեց գիւղին շուրջ կէսը: Տուններ, որոնց մէջ ունէինք հարազատներ, դրացիներ կամ ընկերներ, մէկ օրուան մէջ պարպուեցան: Ընկեր գրեթէ չմընաց: Պարապ տունները թալանի ենթարկեցինք մնացեալ մէկ-երկու ընկերներով: Չէ, դժուար էր առանց այդ հարազատներուն ըմբռնել գիւղը: Ապա, աստիճանաբար, տունները լեցուեցան ալաուի ընտանիքներով, որոնք բերուեցան չնորգաղթած գիւղացիներուն կողմէ, որպէս մշակ կամ հովիւ:

Մինակութեանս մէջ, ցերեկային երազներս զիս կը փոխադրէին հոն, Պէյրութ:

*
* *

Ամէն ամառ, գիւղ կը վերադառնային Պէյրութ բնակող գիւղացիները: Ասոնց ներկայութեան գիւղը կը շէննար, կը լեցուէր: Բնականաբար, կ'ուրախանայի, մանաւանդ շատ կ'ուրախանայի, երբ ժամանէր Գարուն տատը: Անհամբերութեամբ կը սպասէի անոր ժամանումին: Բնական էր, որ իրեն հետ բերէր Պէյրութի շաքար, քեխկէ եւ, անխուսափելիօրէն՝ պանան: Այդ բոլորին հոգի կու տայի ես, բայց անկախ ասոնցմէ, շատ կապուած էի անոր: Երբ գար եւ մեր տան կպած տան մէջ լոյսը վառիլ սկսէր, սանկ տարբեր ուրախութիւն մը կը զգայի:

Գիւղը տարբեր կենսունակութիւն մը կ'ապրէր, երբ մէկ-երկու շաբթուան համար Փաշայեց դար անոր գործընկեր ժիրայրը: Ան անպայմանօրէն իրեն հետ կը բերէր իր թառը: Իր աղուոր ու թաւ ձայնով կ'երգէր Սայաթ-Նովայի, աշուղ Զիւանիի եւ այլոց երգերէն: Շէն մարդ էր եւ ամբողջ գիւղը կը շէնցնէր իր թառով եւ երգերով: Իր բացակայութեան, Սիրվարդն ու Արփիկը, ձեռնադաշնակով, գիւղը կը լեցնէին երաժշտութեամբ: Չէ, Պէյրութը ուրիշ էր, ուրիշ: Պէյրութցիներն ալ ուրիշ էին բնականաբար:

Ինը տարի ետք Նոր տարին Դամասկոս պիտի անցընէինք: Անկէ պիտի անցնէինք Պէյրութ: Դամասկոսի մասին բաւական բան լսած էի. հոն եւս հարազատներ ունէի: Դամասկոս գացող ինքնաշարժ չգտնելով, Պէյրութ գացինք: Այս անգամ փոքր ինքնաշարժով էր երթը: Որքա՛ն արագ կ'ընթանար սա, Աստուած իմ, դրեթէ բան տեսնել կարելի չէր: Տակաւին պէնզինի հոտը սիրտխառնուք կը պատճառէր: Շատ դժուարին եղաւ ճամբորդութիւնը: Դուրս տալու հարկադրանքը ահռելի բան էր: Վերջապէս հասանք Պէյրութ: Հիմա քեռիս հոն չէր, ոչ ալ մեր գէր Յովհաննէս փեսան: Հոն էր սակայն Թուրիկը: Գիշերով շատ կանուխ քնացայ, իսկ առաւօտուն շատ կանուխ արթնցայ: Կարօտցած էի Պէյրութիս: Կ'ուզէի վայրկեան առաջ փողոց իջնել, բայց որո՛ւ կ'ըսես: Նախաճաշ պէտք էր ընել, սպասել էր պէտք: Ելայ տանիք: Նաւերուն կայմերը հոն էին դեռ. որքա՛ն զարմանալի էր. նոյն կայմերն էին. վարէն՝ նոյն տիւրը ճչակները: Հիմա այնքա՛ն շատ էին ճչակները:

Ես շատ լսած էի Քոքա Քոլային անունը: Պէյրութէն եկող ընկերներս յաճախ կը պատմէին անոր մասին: Բերնիս ջուրերը կը վազէին ամէն անդամ, որ Քոքա Քոլայի պատմութիւնը պատմէին ինծի:

—Աագոզ չէ՞ սա Քոքա Քոլան...

—Ի՞նչ կազոզ, ատիկա ուրիշ բան է, Քոքա Քոլան ուրիշ է, ուրիշ:

Տարիներով այդ «ուրիշ»ին մասին լսած էի: Երբ փողոց իջանք, չորս կողմս կը դիտի՝ տեսնելու համար նորութիւններ, բայց մա՛նաւանդ Քոքա Քոլա: Ամէն կողմ էին ասոր ցուցատախտակները: Շիշին նկարին գոնէ ծանօթ էի: Ա՛հ, ե՞րբ պիտի խմէի այդ չնաշխարհիկ խմիչքէն:

Կ'երթայինք Գարուն տատին տունը: Հիմա այլեւս Երկաթէ կամուրջին քովը չէին բնակեր ինք եւ իր զաւկին ընտանիքը: Փոխադրուած էին բուն Պէյրութ, Զոքաք էլ-Պլաթ: Մեր երթը անակընկալ էր իրենց համար: Որքա՛ն ուրախացաւ Գարուն նէնէրս: Իսկ ես նոյնքան եւ աւելի ուրախ էի, միայն թէ սա չըլլալիք Քոքա Քոլային հետ ծանօթանայի: Որքա՛ն երկար տեւեց տան մէջ բանտարկուիլը:

Փրկութիւն եղաւ, երբ դպրոցէն ժամանեց նէնէրիս թողը՝ Վահէն, որ զիս տարաւ իրենց նորաբաց խանութը: Եւ հոն, մեր

Յովհաննէս փեսան, առաջին անգամ ըլլալով, ծանօթացուց զիս Քոքա Քոլային: Մինչ այդ քանի մը անգամ կազող խմած էի, բայց սա իսկապէս ուրիշ էր: Դժուարութեամբ խմեցի զայն. պղպղջակները կը խուժէին եւ կ'այրէին քիթս ու բերանս, բայց համով էր անպիտանը:

Հիմա, ինծի համար տարօրինակ կը թուէր Յովհաննէս փեսային վիճակը: Ես զինք տեսած էի Օթէլ Լիւքսէն ներս: Հոն ինք թագաւոր էր: Իսկ հոս, իր նպարավաճառի խանութին մէջ, թէեւ բան զիջած չէր իր գիրութենէն, սակայն կարծէք գահագուրկ արքայ մըն էր: Քոքա Քոլա կը ծախէր սառն անտարբերութեամբ: Սէնտուիչ կը շինէր: Ասոր մասին ալ բաւական բան լսած էի, բայց հիմա էր, որ կը տեսնէի զայն: Ճարտարութեամբ կը ճեղքէր երկար սոմուն հացին փորը եւ մէջի խմորը ինք կ'ուտէր: Տեսակ մը միս կը մանրէր. ասոր ալ մէկ մասը ինք կ'ուտէր, իսկ մնացեալը կը լեցնէր հացին մէջ. քիչ մը թթուաչ ալ կը դնէր, ապա՝ կը հրամցընէր յաճախորդին: Երբ յաճախորդ մը կէս սէնտուիչ ուզէր, մեր փեսան կէսը յաճախորդին կը փաթթէր, միւս կէսն ալ իրեն կը վերապահէր: Բնականաբար իր սէնտուիչը աւելի գիրուկ կ'ըլլար, քան յաճախորդինը:

Այդ օր քիչ մը թափառեցանք վողոցներուն մէջ: Անցանք մեծ եկեղեցիի մը քովէն:

Ս. Նշանն էր:

Անոր դիմացը, կառքի մը մէջ, մէկը նարինջ դրած էր եւ քամելիք մը: Կառքին վրայ հայերէնով գրած էր՝ «Գաւաթը 10 դահեկան»: Քիչ մը վարը կային աստիճաններ. ասոր երկու կողմերուն վրայ՝ թիթեղագործներու խանութներ: Օ՛, որքան աղմուկ կար հոն: Որքա՛ն ճարտարութեամբ թիթեղէ զանազան իրեղէններ կը շինէին ասոնք: Հասանք Պուրճ: Որքա՛ն խճողուած էր հիմա: Առաջին այցելութեանս ընթացքին շատ էին ինքնաշարժները, բայց հիմա եռապատկուած էին: Եւ քանի՛-քանի՛ հսկայ ցուցանակներ կային: Լոյսերով բանող սա ցուցանակները իսկապէս որ հրաշալիքներ էին: Անհաճոն այն էր, որ ձեռքս դարձեալ սեղմումի ենթակայ էր: Մայրս մէկ ձեռքով իմ աջս կը սեղմէր, իսկ միւսով՝ քրոջս ճախը: Եւ լաւ կը սեղմէր, այլապէս կրնայինք կորսուիլ կամ ինքնաշարժի մը տակ մնալ: Շատ լաւ էր Պէյրուսը, եթէ երբեք չըսեղմուէր ձեռքս:

Որքա՛ն կարօացեր էի երկար ձողով պանան կրողներուն: Ահաւասիկ անոնցմէ մէկը. «ուս, ուս» կանչելով կ'երթար: Զամբիւղով բռնակիրները այնքան շատ էին: Հիմա սուլիչ չունէի սակայն. զիս ալ չէին կրնար իրենց զամբիւղին մէջ ծածկել. հիմա մեծցած էի:

Ո՞ւր էր սակայն «գոճապաչ» ծախողը:

—Ով գիտէ ի՞նչ եղաւ, տղաս: Անիկա հեռու է. անոր տեղը հոս չէ:

Հիմա Պէյրուսը փոխուած էր: Փաստերէն մէկն ալ այն էր, որ «Անթիլիաս մալը, թաթըր փորթուգալ» ծախող երեակը եւս չկար: Լալկան ձայնով մածուն ծախողն ալ չկար: Անշուշտ չէի կրնար ըմբռնել նաեւ, որ սա Պէյրուսի միւս ծայրն էր, Երկաթէ կամուրջի շրջանը չէր:

Նոր տարին անցուցինք մեր նոր խնամիենց: Քեռիս, որ Դամասկոս կը մնար, նշանուած էր Պէյրուս բնակող համագիւղացի աղջկայ մը հետ: Մինչ այդ ես ծանօթ էի մեր պարտէզի ճամբուն վրայ գտնուող անմշակ պարտէզի մը. ասոր կ'ըսէին Գժօ Ժոզէֆին կտորը: Լսած էի, որ նշանաւոր մարդ էր Գժոն: Հիմա եղած էր մեզի խնամի: Իրենց անցուցինք նոր տարին: Շատ ուրախացանք: Ասոր տունը կը գտնուէր հանրապետութեան նախագահին պալատին կից: Մէկ սենեակնոց տուն մըն էր: Ապագային, դպրոց երթուղարձի ճամբուս վրայ, անիկա պիտի ըլլար կարեւոր կայան մը: Խոշոր բակին մէջ կ'ապրէին քանի մը ընտանիք: Ասոնք իրարու հետ կը բաժնեկցէին խոհանոցն ու բաղնիքը: Բազմանդամ ընտանիքը շատ լաւ տեղաւորուած էր հոն:

Անցաւ նաեւ ծնունդը: Եւ ես ուրախ չէի: Դարձեալ պիտի բաժնուէի Պէյրուսէն: Աստուած գիտէր, թէ ե՞րբ պիտի վերագըտնէի զայն:

Կարելի չէր աւելի մնալ: Դամասկոս պիտի երթայինք: Երեկոյ մը, հրաժեշտ տուինք Պէյրուսի հրապոյրներուն, աղմուկին եւ խրճողումին: Ուղղուեցանք Դամասկոս: Տողանցող կարգ մը անուններուն ծանօթ էի, ուրիշներ առաջին անգամ կը տեսնէի: Քեռիս էր մեր առաջնորդը:

—Սա Ալէյն է: Թուրիկը հոս տուն մը ունի:

Թուրիկն ալ մեզի այդ մէկը ըսած էր արդէն: Նոյնիսկ իր տնամերձէն խնձոր հրամցուցած էր մեզի, այս այցելութեան ընթացքին:

—Հոս Պհամտունն է:

Երեկոյեան կիսամութին մէջ տուններ կ'երեւէին, բայց մութ էին: Ի՛հ, սա ամարանոց էր: Զմեռը՝ կիսամայի:

—Սա Սոֆարն է...

Փոքր աղբիւր մը կըրցայ նկատել միայն:

Խորքին մէջ, այս նորութիւնները այնքան ալ չէին հետաքրքրեր զիս: Կարեւորը այն էր, որ ես Պէյրուսէն կը հեռանայի, ինչ որ ցաւալի բան էր: Միւս կողմէ, սակայն, պիտի տեսնէի Դամասկոսը, որուն մասին շատ բան լսած էի:

—Սա Տահր էլ-Պայտարն է:

Բայց արդէն իսկ մութ էր: Եւ որքա՛ն ձիւն կար հոն:



127-2019

—Յաճախ ճամբան կը գոցուի ձիւնին պատճառով,— բացատրեց քեռիս: Հետաքրքրական նորութիւն էր, բայց ինչի՞ս էր պէտք:

—Շթորա՛,— ձայնեց ինքնաշարժին շարժավարը:— Իջէ՛ք:

Շթորա՞, Շթորա՞: Ա՛, այս անունն ալ շատ ծանօթ էր ինծի: Ամառները, երբ պատուելի կարապետին ընտանիքը մեր գիւղը գար, իր աղջիկը կը յայտնէր, որ յաջորդ ամառ Շթորա պիտի երթան գիւղագնացութեան: Եւ ես չէի ուրախանար բնականաբար: Թող միշտ մեր գիւղը գային:

Շատ բան չէի տեսներ: Շարժավարը ըսած էր, որ ձարճուրային խանութն էր դիմացինը: Մենք վար չիջանք: Առնելիք չունէինք: Չորս դիս կը գիտէի. Ոչի՛նչ: Անշուշտ, չէի կրնար երեւակայել, որ, օր մը հոն, այդ ձարճուրային խանութին կից դպրոցի մը տէրը պիտի ըլլայի. եւ կամ չէի կրնար պատկերացնել, որ հոն, Շթորայի մէջ, այս պահուն թերեւս ալ արդէն քունի անցած է ապագայ կողակիցս:

Շարժավարը երկու սէնտուիչ առած էր:

—ձարճուրային լէպնիին պէս համով բան չկայ,— կ'ըսէր ու բերանը կը չփացնէր, իմ ալ ախորժակս սրելով:

Անցանք նաեւ Շթորայէն: Չեմ դիտեր, թէ բան մը զգա՞ց ապագայ կողակիցս:

Քիչ մը քալելէ ետք, խեղճուկ կերպով լուսաւորուած գիւղի մը քովէն կ'անցնէինք: Մինչ այդ բոլոր գիւղերն ու աւանները լաւ լուսաւորուած էին: Սա բացառութիւն էր: Որքա՛ն խեղճ էին քարիւղէ լապտերները ելեկտրական լամպերուն քով:

—Սա Այնճարն է, ըսաւ քեռիս:

—Այնճա՞ր, Այնճա՞ր:

Ա՛, այդ անունը լսած էի: Սուէտացի կրպոն, որ մեր դրացին էր, երբեմն կ'ըսէր, որ Այնճար պիտի երթայ: Այդ Այնճարը ինծի համար անըմբռնելի եւ խորհրդաւոր բան մըն էր: Կրպոյին ծնողները Հայաստան ներգաղթած էին: Միս-մինակ մնացած էր: Երբեմն հայրս կը հրաւիրէր զինք ընթրիքի կամ ճաշի: Ինք աղուոր թմբուկ կը զարնէր: Կը պատմէր, որ իր ազգականներէն շատեր Այնճար կը մնան:

Ուրեմն, սա էր կրպոյին գոված Այնճարը: Բայց ի՛նչ խեղճութիւն էր: Այնքա՛ն վտիտ էին լոյսերը: Հոս կը բնակէին սուէտացիները: Այդ պահուն բնաւ չէի կրնար երեւակայել, որ օր մըն ալ, վալիզ մը շալկած, պիտի ժամանէի հոն, իբրեւ գիշերօթիկ աշակերտ: Ապա, հոն տուն-տեղ կազմէի եւ դառնայի Այնճարի բընակիչ:

Անցանք լիբանան-սուրիական սահմանէն: Սուրիական կողմին վրայ քիչ մը դժուարութիւն ունեցանք, անոր համար, որ մայրս մոռցած էր միասին բերել մեր «ընտանեկան տետրակ»ը, բայց անցանք: Շուրջ կէս ժամ ետք սկսան երեւիլ լուսաւոր գիւղեր եւ

աւաններ: Շատ չանցած՝ հասանք Դամասկոս: Քեռիս կարգադրեց եւ փոքր ինքնաշարժով մը գացինք իր տունը:

Քեռիս ուրախ էր, որ տան մէջ պիտի հիւրասիրէր մեզ. բայց կը զգայի, որ տխուր էր նաեւ: Հոն, Պէյրութ ձգած էր իր հարսնցուն: Ես ալ տխուր էի որոշ չափով, անոր համար, որ հեռացած էի Պէյրութէն: Աստուած դիտէր, թէ ե՞րբ նոր առիթ մը պիտի ստեղծուէր ինծի համար: Բնաւ չէի երեւակայեր, որ քանի մը ամիս ետք, այս անգամ առանձինս Պէյրութ պիտի երթայի, անկէ Այնճար հասնելու համար...

Դամասկոս:

Սա ալ քաղաք էր:

Պէյրութի պէս, այն ալ մայրաքաղաք: Հոս եւս կային հանրակառքեր, ինքնաշարժներ, խճողում, բայց Պէյրութի հմայքը ուրիշ էր: Քեռիս տունը կը գտնուէր Պապ Թումա ըսուած թաղին մէջ: Հոն ծանօթացայ արաբական բաղնիքին: Անշուշտ ներս չմտայ: Դուրսէն կ'երեւէր ան: Տարօրինակ էր քեռիս տունը: Երկրորդ յարկի վրայ էր: Քանի մը սենեակներ կային. իւրաքանչիւր սենեակ ընտանիքի մը վարձու տուած էր տանտէրը, ուրՖացի Խորէնը: Վարը կար բակ մը: Առաջին անգամ ըլլալով կը տեսնէն խճաքարերով սալարկուած ու նաշխուած բակ: Իսկ գամասկեան դուռները եւ ձեղունները որքա՛ն զարդարուն էին: Չէ՛, Դամասկոսի մէջ եւս նորութիւններ շատ էին: Բայց Պէյրութը գերած էր դիս:

Մէկ շաբաթ մնացինք Դամասկոս: Ժամանակիս մեծ մասը անցուցի քեռիս հետ՝ իր աշխատած գործարանին մէջ: Հոն էր նաեւ Գարուն նէնէրիս տղան՝ Յովհաննէսը: Ինք գործարանին ընդհանուր վարպետն էր եւ նաեւ բաժնետէրերէն մէկը: Պէյրութի գործարանը Աբրահամեան շրճիին ձգած էր: Հոս նետուած էր աւելի մեծ գործի: Որքա՛ն մեծ էր քառաչուկէ կօշիկի սա գործարանը: Բաւական մեծ նորութիւններ կային հող ինծի համար:

Կը կարծէի, որ միշտ հող պիտի մնամ: Սակայն մեծ եղաւ ափսոսանքս, երբ առաւօտ կանուխ գացինք կարաժ: Հոն հսկայ պաս մը բարձրացանք եւ ուղղուեցանք Լաթաքիա: Անկէ՛ Քեսապ:

Հիմա այլեւս պատանի էի: Մանկութեան երազները չկային: Տեսած էի երկու մեծ քաղաքներ: Ասոնք կը դնէի բաղդատութեան: Դամասկոսի փողոցները որքա՛ն լայն էին. որքա՛ն մեծ պասեր կ'երթեւեկէին այդ փողոցներուն մէջ: Ինք, Դամասկոսն ալ փրուած էր հսկայ տարածութեան մը վրայ: Սակայն ո՞ւր էր ծովը: Ո՞ւր էր Քոքա Քոլան:

Երկուքն ալ աղուոր էին, բայց սիրտս Պէյրութինն էր: Ե՞րբ զայն տեսնելու առիթ պիտի ունենայի: Դարձեալ ի՞նչ տարի սպասել պէտք պիտի ըլլար:

Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՄԵՌԵԱԼ ԿԷՏ

Ինչպէս հասանք հանգրուանն այս անձանօթ,
Ուր վայրկեաններ մեզ կ'ողջունեն
Անդոհազեղ լուրեամբ...

Ինչպէս կրցանք ասի առնել
Հանգրուանն այս մահաշուք,
Ուր կը շրջին դիմաստուերներն անանուն՝
Դիպուածներու բախտորոշ...

Պիտի մնա՞նք դեռ երկար
Այս ասիունքին բեւեռուած,
Ծնչելով բոյրն աստածէտ
Ծիրմածաղիկ տխրութեանց...

Մերձաւոր իմ,
Ո՞ւր մնացին թովչանքները սրտառուչ
Ջրածիծաղ մեր երգերուն
Եւ ո՞ւր մնաց վայելչութիւնն անթարշամ՝
Խոյանքներուն մեր դասկեկիր...

Պիտի երբեք չտեսնե՞նք
Հին օրերու զմայլանքով հոգեգրաւ,
Երկնաշաւիղ խոհերով մեզ ոգեշնչող՝
Հեռաստաններն արեւշող.
Պիտի երբեք չըմբռնէ՞նք

Հին օրերու մտերմութեամբ յանկուցիչ,
Համայնախոհ ձգտումներով մեզ համակող՝
Հոգեհորոգ զգայութեանց պահերն անանց.
Եւ չըմբռնէ՞նք ալ երբեք
Դիցազնական սխրանքներով մեզ վարակող՝
Ըմբոստութեան ոգի՛ն անսանձ
Եւ պայքարի տե՛նդը բոցուն...

Մերձաւոր իմ,
Հարկ է կառչիլ
Փամանակի խնկազալար գնացքին,
Ըլլալ տէրը բացարձակ
Եւ ղեկավարն ըլլալ ճարտար՝
Մեր գոյութեան հողմահալած առազաստին...

Հոլովն ըլլալ կեանքի հետքին անվախճան,
Կենսահողով թովչանքներուն աշխարհի.
Յանկերգն ըլլալ գարնան տարփոտ ցայգերգին
Եւ մինչեւ իսկ ըլլալ թախծերգը անբուն
Նոճեպսակ շիրիմներու շուրջ յածող՝
Աշնան մոռալ հողմերուն...
Հարկ է յուսալ,
Հարկ է անվերջ մաքառիլ,
Ըլլալ զարկը բաբախուն՝
Կեանքի ցաւոտ հրճուանքին.
Սիրել հոգին՝
Փայլակնային տեսիլներով յայտնակերպ՝
Արարչութեան հրաշագործ խորհուրդին.
Սիրել ոգին՝
Բերկրամատոյց ճառագայթին բնութեան.
Ընդելուզուիլ մինչեւ իսկ
Տառապանքի հոլովոյթին անեզրական,
Տիեզերքի տարերազօր ցաւերուն,
Բայց չմնալ ներփակուած՝
Դամբանաբոյր նկուղին մէջ մեռեալ կէտի...

Մերձաւոր իմ,
Կը տագնապիմ լուրեանէն այս ներասույզ,

Զիս պարուրող խոկումներէն ստուերական.
 Եւ բօթաբեր վայրկեաններու յաճախանքէն,
 Որ սրտիս մէջ կը սփռեն վիշտ եւ անդոհանք:
 Ես կ'իմանամ խուլ կոհնչներ ագռաւի
 Եւ կարապի երգեր տրտում,
 Երգեր ցաւոտ եւ յուսաբէկ,
 Կարծես մահուան նախագաւիթն եմ հասած,
 Որ կը լսուի նոճեսաղարթ թախծութեամբ
 Անապաշտ հոգիներու
 Հուսկ բաղձանքը անամոք...

Մերձաւոր իմ,
 Թող իղձերուս ջերմութիւնը հրատենը
 Ներարկուի ակօսներուն մէջ սրտիդ՝
 Իբրեւ աւիւն կենարար.
 Թող տարփանքիս կենսաժպիտ հրայրքով՝
 Յառնեն կրկին տեսլահարսերն մեր յոյսերուն՝
 Պայմանական իրենց մթին կալանքէն.
 Վերագարթնին նայուածքիդ տակ հրաշուշան՝
 Մեր հաւատքին աղանիւներն ընդարմացած.
 Թող երագիս բարտիները հողմահեւ
 Արտաբերեն յաղթերգութիւն մը ցնծուն՝
 Իբրեւ պատգամ դիցալուշ.
 Թող որ յաւէտ մաքրաջրուին.
 Արեւատենչ մեր ընթացքը խափանող՝
 Անցարգելներ փշածաղկ,
 Որ մեզ տանջող երկունքէն ետք գիշերական,
 Հաղորդուինք կախարդանքին լուսեղէն՝
 Ժամանակի կենսանորոգ երգերուն...

Յունուար 1994

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՏԵՆԴԵՐ

Հագիւ հրապարակ հասած էր, երբ սոյլը, շրթներուն վը-
 րայ, մնաց կիսատ: Խորը՝ ցայտաղբիւրին մօտ, տեսաւ մարդ-
 կային հոծ, կրֆէ բռնուած, տենդահար ամբոխ մը: Մեծ ու
 վայրի աղմուկ մը զարնուեցաւ մարմնին: Աղաղակի կտորներ,
 կնոջ սուր ճիչեր, բացագանչութիւններ կը բախէին իրարու:
 Յիշեց՝ որ յետադիմական-կղերական մեծ ցոյց եւ թափօր մը
 կար այդ օրը: Ու նաեւ հակացոյց՝ բանուորական կազմակեր-
 պութիւններու կողմէ. բուններուն վրայ արիւնը տափցաւ,
 հնչեց: Արագութեամբ ուղղուեցաւ դէպի ցոյցին վայրը ու ֆա-
 նի՛ կը մեքանար՝ ա՛յնքան կը մեծնար մարմնին տենդն ու ո-
 գետորութիւնը: Ճամբուն վրայ հանդիպեցաւ կիներու, բանուոր-
 ներու: Ու ֆանի՛ կը յառաջանար՝ ա՛յնքան բազմութիւնը կը
 դառնար ալեկոծ, բռնուած խուլ ատելութենէ մը, խուժանային
 ու պատրաստ ծայրայեղութեանց:

Ուրախութեամբ վերագտաւ իր բուն բնաւորութեան ամ-
 բողջ բարբարոսութիւնը ու այն մտածումը, թէ բանուորական
 բազմութեան մը տեսքը բաւեց, որպէսզի իր բոլոր երկմտու-
 թիւններն ու սկարութիւնները սուզէին հոգւոյն խորը՝ մարմ-
 նին պարզեւեց անօրինակ խաղաղութիւն մը: Կրկին ինքզինքը
 զգաց հրաշալիօրէն երիտասարդ, յաղթական ու տէր՝ հոգեկան
 ապահով հաւասարակշռութեան մը:

-Այսուհանդերձ, արիւնս դեռ մաքուր է,- մտածեց հպար-
 տութեամբ:

Կարմիր ու ալեծածան դրօշակներու տեսքը ու անոնց ար-
 եան տափ գոյնը մեծապէս յուզեցին զինք: Արմուկներով նամ-
 բայ բացաւ ու հասաւ հրապարակին կեդրոնը, արձանին տակ:
 Կռուելու, հարուածելու, ներսը կուտակուած ամբողջ տենդն
 ու խանդավառութիւնը շոյլօրէն սպառելու մեծ ծարաւ մը

կը շարժեր մարմինը: Արտասուելու չափ երջանիկ էր: Կը նա-
յէր ագահութեամբ ու մեծ աղապատանքով մը՝ շուրջը դիզ-
ւած, խլրտող, ծխացող, գայրացող, ինքնիր վրայ գալարուող
բազմութեան ու աշխատաւորի գօրեղ ու ազնիւ դէմքերուն:
Ի՛նչ որ սակայն մեծապէս կ'ուրախացնէին զինքը՝ ծեր բան-
ւորներու յուզիչ ու խոնջ դէմքերն էին ու պատանի աշխատա-
ւորներու տաք աչքերուն ցոլքը: Ու յետոյ աղջիկները, որ կար-
ծես թէ եկած էին ուրախանալու, սիրելու: Ահա այս բոլոր
մարդոց հետ ինքզինքը զգաց մեծ ու վերջնական եղբայրու-
թեան մը մէջ, կուրծքը ուռեցաւ յուզումէն եւ երբ ընդհանուր
խաժամուժին մէջէն անգթօրէն, յաղթականօրէն բարձրացաւ ե-
րիտասարդ յառաջապահներու ֆաջ երգը՝ թարթիչները թրջուե-
ցան արտասուքի կաթիլներով ու ամչնալով իր տկարութեան
համար՝ խածաւ շրթունքները ու աւելի խրեցաւ բազմութեան
մէջ: Ու յանկերգը, այդ սիրելի երգին, գինովութեան պէս ֆաղ-
ցըր էր իր հոգիին համար.

*Ահաւասիկ վերջին պայքարը, որ կը սկսի,
Հնչած է վրէժի ժամը բոլոր անօթիներուն,
Ահաւասիկ յեզափոխութիւնը, որ կը յառաջանայ
Ու ահա վախճանը՝ բոլոր կաւատներուն...
զգո՛ւշ, զգո՛ւշ...*

Ամբողջ հրապարակը սեւ էր հիմա՝ մարդկային բազմու-
թեամբ ու կարմիր՝ ծածանող դրօշներով: Ամբոխը կարծես կու
գար, կը գարնուէր մարմնին, ամէն կողմէ կը խլէր զինքը:
Խորապէս կը զգար, որ ինք եւս մէկ անբաժան ու հարագատ
մասնիկն է այդ մեծ ու հաւաքական անձնաւորութեան: Ու ա-
տոր համար մեծապէս հպարտ զգաց ինքզինքը: Օտար աշխա-
տաւոր մը՝ ուշադրութեամբ նայելով իրեն, կրակ ուզեց: Յե-
տոյ հարցուց, - Ուսանո՞ղ ես, ընկե՛ր...,- Այո՛,- ըսաւ ամչնա-
լով ու այսուհանդերձ երջանիկ՝ այդ «ընկեր» բառին համար:
Ու կարծես թէ նոյնանալու համար զինքը շրջապատող չորրորդ
դասակարգի այդ լաւ մարդոց հետ, ուսանողական գդակը դը-
րաւ գրպանը եւ հապնեպով ֆաշեց-հանեց սպիտակ օձի՛քն ու
փողկապը:

Յետոյ՝ երգը դադրեցաւ ու արձանին պատուանդանին
վրայէն հնչեց առողջ ու մեծ ձայն մը: Հանգարծներու ֆար-
տուղարն էր: Սպիտակին տուող մագերով ու խնուն պեխերով
բանուոր մը:

-Ընկերներ՝ եւ ֆաղափացիներ,- ըսաւ տաք ձայնով մը,-
նահանգին բոլոր երկիւղած տիկիներն ու Յիսուս-Քրիստոսի
նուիրուած աղջիկները, ֆահանաներու ամբողջ սեւ երամակը...

-Հո՛ւ, հո՛ւ,- պոռացին ամէն կողմէ ծաղրելով,- անկցի՛ն
սեւ փէշերը... բոլոր ծեր ու միասեռական պաշտօնատարները,
արֆայական տխմարներն ու խոշոր կալուածատէրերու ծանծա-
ղամիտ ժառանգորդները. «խրձաւոր» յորջորջուած ծոյլ, անըզ-
բաղ, դրամ ուտող ու մակաբոյծ ուսանողները, որ վաղը պիտի
հեծնեն ձեր ուսերուն, փայլուն կոնակաւոր ու վատ գինուորա-
կանները, որ կիներու գարդախուցերու մէջ է, որ կը շահին
իրենց աստիճանները...

-Անկցի՛ ֆաղեքնի բանակը, կեցցե՛ն շարֆային գինուորնե-
րը,- գոչեց ամբոխը միաբերան,- անկցի՛ պատերազմը...

...Քաղեքնի ու կղերական թերթերու ծախուած լրագրողնե-
րու անարգ խմբակը, նաեւ Երրորդ հանրապետութեան այս
թշուառական կառավարութեան ուստիկանական սեւ ջոլիրները,
գիւղական յետամնաց ու խաւարամիտ կալուածատէրերը, վեր-
ջապէս բոլոր յիսուսեան եւ դոմինիկեան եղբայրներն ու իրենց
շատ անմեղ ու անարատ բոյրերը ի Քրիստոս...

Ձայնը ընդհատուեցաւ հոս՝ ծափերու գոռ տարափէ մը
եւ ընդհանուր գուարթ ծիծաղէն:

...եկեղեցիներու եւ վանքերու տիրացուներն ու ժամկոչնե-
րը ու իբր թէ «հայրենիք»ին համար իրենց աղտոտ դրամի
կտոր մը շարժող արիւնը թափած յետադիմական նախկին պա-
տերազմիկներ, որ միայն թիկունքի դասալիքներ ու մեր կրո-
նակին վրայ հարստացող ոջիւներ են, նոր հարուստներու ամ-
բողջ բարեպաշտ խուժանը. վերջապէս, ընկերներ, շատ սրբա-
զան ու շատ թշուառական Պապին - Տէրը փրկէ իր մեղապարտ
հոգին - բոլոր ամբարիշտ ու կեղծաւոր հետեւորդները, հա-
ւաքուած վերը, շատ ազնուատոհմ ու արֆայական գօրականի
մը...

-Հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ,- գոռաց ամբոխը բռունցք ցոյց տալով:

...եւ սպիտակափառ ու շատ գերապատիւ արքեպիսկոպոսի
մը նախագահութեան տակ, քիչ յետոյ թափօր պիտի պտտին
ֆաղափին մէջ, կառավարութեան բարեհան մասնակցութեամբ
ու ուստիկանական գինեալ ուժերու պաշտպանութեան տակ...

Բայց նախադասութիւնը մնաց կիսատ: Անորոշ ու խուլ
աղմուկ մը փրթաւ ու հանդիպակաց մեծ դուռէն, արտասովոր
լուրսեամբ, ուստիկաններու սեղմ շղթայի մը մէջէն, սկսաւ հո-

սիլ հաւատացեալներու բազմութիւնը: Ամբոխին հետ, որ կը յառաջանար ու խիտ շարժերով կը շրջապատէր թափօրը, մօտեցաւ դրան: Դեմքը բռնուած էր ջերմէ ու շրթները կը դողային: Բոլորին պէս կը պոռար ու կը խուժէր առաջ: Յանկարծ դրան մէջէն յայտնուեցաւ գօրականի ծեր, խիստ, կոր, գրեթէ կոտրած քով ու արտակարգօրէն հակակրեւի դեմք մը: Վարի շրթունքը նեղուած էր ու ձախ ականջը, քիչ մը ու տգեղ՝ փակած քունքները: Համագգեստ չունէր, բայց ամբողջ անձին վրայ կար լստի, բռնակալ ու հեղինակաւոր բան մը: Ամբոխը բոլորովին այնպէս ու սանձագերծ, վրէժխնդիր ու զարհուրելի աղաղակ մը փրցուց: Զօրեղ ու գեղեցիկ բան մըն էր ատիկա, նետուած այդ մարդուն գունատ ու գէշ երեսին, որ այսուհանդերձ լընութեամբ ու դանդաղ քայլերով կը յառաջանար:

-Ոճրագո՛րծ, ոճրագո՛րծ...

Բռունցքներու ծփում անտառ մը բարձրացաւ: Աղմուկը բռնեց ամբողջ երկինքը: Կիները կը պոռային աւելի կատաղութեամբ, քան մարդիկը: Զղայնութիւնը հասած էր իր գագաթնակէտին: Թափօրը կը յառաջանար սակայն հանդիսաւոր խաղաղութեամբ մը, շրջապատուած հեծեալ ու հետեւակ ոստիկաններու զոյգ շղթայով մը. կը թուէր, թէ ահա բազմութիւնը պիտի կոտրէ շղթան ու խուժէ թափօրին վրայ: Կին մը, մագերէ արձակ, սրտառուչ դեմքով մանուկ մը բռնած թեւին տակ, բռունցքը սպառնական՝ կը հայհոյէր քահանաներու խումբի մը: Ու յանկարծ պատռելով համատարած աղմուկը, հնչեց յեղափոխական հզօր երգ մը - *Քարմանեօլը*: Ու այդ երգը խոշոր ալիքներով կը զարնուէր թափօրին ու կարծես կը կոտրէր անոր ողնայարը: Տեղ մը, վերջաւորութեան չհասած, գայն կը վերըսկըսէին ուրիշ կողմէ մը՝ նոյն արդար ու մեծ վրէժխնդրութեամբ ու այնպէս յուզուած մը: Մինչեւ որ յոգնէին ու կրկին, միաբերան ու զարհուրելի կշռոյթով մը, նետէին այդ գօրականին տօգոյն ու գէշ երեսին, իրենց վերջնական կարծիքը.

-Ոճրագո՛րծ, ոճրագո՛րծ, ոճրագո՛րծ...

Ու մեծապէս գեղեցիկ էր, զօրեղ, յաղթական այդ բազմութիւնը՝ հինաւորեց այս փողոցներուն մէջ: Ու ամբոխին այս արձակ, սանձագերծ ու յեղափոխական գայրոյթին եւ վաղնջական ու արքայանիստ քաղաքին՝ խաղաղ ու ծանր գեղեցկութեան մէջ, խզումը այնքան կատարեալ էր, որ ինք այսուհանդերձ կը զգար թափօրին մասնակցող մարդոցմէ ոմանց աչքերուն մէջ նստած անկեղծ տառապանքը: Արհամարհանքով թօթ-

ւեց ուսերը ու մրմնաց.- Կրկին այս գարշելի երկրորդ անձնաւորութիւնը...

Ու գրեթէ գէշ, վայրի, անգութ ուրախութիւն մը զգաց, երբ ամբոխը՝ ջղագրգիռ ու տենդահար, կործանեց եպիսկոպոսի մը արձանը: Առաջին գծերուն վրայ էր ինք ու ամբողջովին պատրաստ էր կռուի մտնելու:

-Ահա ձեր արքայանիստ ու վաղնջական քաղաքը,- մտածեց հեզմութեամբ...

Երիտասարդներու հոծ խումբ մը նեղեց ոստիկանական շղթան ու նիշդ այն վայրկեանին, երբ այս վերջինները կը պատրաստուէին յարձակիլ, կիները՝ իրենց մանուկներով, նետուեցան մէջտեղ: Քաջ ու գէշ հագուած բանուորուհիներ էին ատնէ, որ իրենց մարմիններով կը պաշտպանէին յարձակողները: Ու կ'աղաղակէին՝

-Եթէ քաջ էք, կրակեցէ՛ք, կրակեցէ՛ք տեսնեմք...

Երիտասարդ կին մը գայրոյթով կը քաշէր կղերականի մը պարեգօտը: Ուրիշ մը թքաւ սպայի մը երեսին: Ու յետադիմական ուսանողներ խումբով յարձակեցան կնոջ վրայ: Ահա այդ վայրկեանին էր, որ ինք եւս մտաւ կռուի ու իր արեան ամբողջ տենդովը սկսաւ հարուածներ տեղալ աջ ու ձախ: Շապիկին կոճակները փրթած էին ու իր լայն ու մագոտ կուրծքը բացուած: Շարժումներուն մէջ կար նուիրում, անկարեկիր գայրոյթ, այլեւ անառակելի գեղեցկութիւն մը: Դեմքը կը ցոլար՝ իր տաք աչքերուն արձակած լոյսէն, ղնգունքները կը րացիփէին ու բերանը կը դողար: Երբ յաղթեցին՝ խումբով եւ մեծ ուրախութեամբ մը խլեցին *Քարմանեօլի* յանկերգը ու երգեցին՝ իրենց առողջ ձայներուն ամբողջ գայրալից ջերմութեամբը: Մարդկային ալիք մը գիրենք էջեց յառաջ: Քիչ մը վերէն փրթաւ յաղթութեան մեծ աղաղակ մը, մէկը պոռաց՝

-Ընկերներ, վերջապէս մերինները ցրուեցին թափօրը...

Ուրախութեան դող մը քալեց բազմութեան երակներէն: Մութը իյնալու վրայ էր: Բայց ո՛չ ոք կը մտածէր ցրուելու մասին: Ամբոխը՝ տիրած փողոցներուն, կ'ուտէր, կը բարձրանար, կը տարածուէր ու կրկին կը սեղմուէր, կ'ելեւէջէր, կը գայրանար կամ կը խնդար: Վարէն երեսացին կարմիր դրօշներ: Զայն մը գօրութեամբ պոռաց.

-Յառաջացէ՛ք, վերը կռիւ կայ...

Բազմութեան կատաղութիւնը հասաւ իր գագաթնակէտին: Նոյն ձայնը կրկին գոռաց.

–Օտարական ընկերներ, գգո՛յշ, լիբբերը կը ձերբակալեն...

–Յետոյ ի՛նչ,– պատասխանեց բարձրաձայն: Ու կարծես ապացուցանելու համար, որ չ՛երկնչիր՝ նետուեցաւ առաջ: Հրելով, կոխկրտելով կը յառաջանար ու քանի՛ բախումէ կ՛ուշանար, ա՛յնքան սիրտը կը զարնէր ուժգնութեամբ: Արիւնը կարծես խենթացած էր:

Յանկարծ՝ կարծես թէ աղմուկին մէջէն, մէկը անունը տըլաւ: Գլուխը դարձուց ետ ու կ՛ուզէր փնտռել ծանօթ դէմք մը, երբ սեւ դէմքով տղայ մը զարկաւ թելին:

–Եկո՛ւր, ընկեր,– ըսաւ,– տես, յետադիմական ուսանողներու խումբ մը...

Առանց տատանելու հետեւեցաւ: Ու ուրիշներու հետ՝ վայրագութեամբ՝ խուժեցին խումբին վրայ: Գրեթէ յաջողած էին ցրուել զանոնք՝ երբ ծնօտին վրայ ուժեղ հարուած մը ստացաւ: Սուր ցաւ մը զգաց ու մորթը, որ սկրթուած էր՝ սկսաւ արիւնիլ:– Սրիկան մատանի ունի...– մտածեց: Յանկարծ կըրկին իր անունը տուին: Գլուխը դարձուց ու մեծ, տարօրինակ յուզում մը խեղդեց կոկորդը: Ձա՞յնն էր, որ կը նանչնար, թէ սի՞րտն էր, որ կը զարթնուր իր նինջէն: Յետոյ յիշեց, որ հայ է ինք: Ու յուզումը աւելի մեծցաւ: Կարծես թէ ամբողջ երեկոյեան ընթացքին մոռցած էր ատիկա ու մէկէն արիւնը հնչեց ու պահանջեց իր իրաւունքը: Բազմաթիւ յիշատակներ արագութեամբ վերադարձան իրեն ու արտասուքի կաթիլներ, երկրորդ անգամ ըլլալով՝ թրջեցին աչքերը: Արցունքներուն մէջէն կը նայէր բազմութեան ու ան հիմա տարբեր էր կարծես: Ձեռք մը սիրտը նմեց ու ձայն մը, արտասուվոր փաղցրութեամբ, կարծես ականջին ըսաւ.

–Ի՞նչ կ'ընես հոս, Աշո՛տ, ո՞ւր ես, նայէ ո՛վ են շուրջիններդ...

Որո՞ւնն էր այդ ձայնը: Ո՛չ ոքինը:

Արիւնը հասած էր կզակին, ափովը սրբեց: Մութը կը թանձրանար փողոցին վրայ եւ իր հոգիին: Շրթները կը դողալին: Կարծես կ՛ուզէր արդարանալ: Վիշտը կարծես խածաւ երկկամունքները: Կարծես մէկը մեծ տխրութեամբ նայեցաւ աչքերուն: Ու մէկէն յիշեց բանաստեղծութեանց բազմաթիւ մասեր, տողեր կարն, տողեր երկար: Ու հայրենիքը, մեծաբայի, վերադարձաւ իրեն: Մէկը կարծես կը յանդիմանէր զինքը: Ձեռքերը խոթեց իր գրպանները, շրթները խածաւ, այսուհանդերձ մնաց ամբոխին հետ: Ու ամբոխը տարբեր էր, տարօրինակ կերպով

տարբեր էր հիմա: Լոեցնելու համար ներքին այդ փաղցր ձայնը, յուսահատութեամբ մըմոաց՝

–Բայց հայրենի՛ք իմ, ո՛չ մէկ վատ բան ըրած եմ ու ահա դուն հետս ես կրկրին, ամէնուրեք քեզ կը կրեմ վրաս, ձայնիս մէջ կը խօսիս ու արեանս մէջ կը հնչես, հայրենի՛ք իմ...

Արտասուքի կաթիլները հասան թերնին ու անոնց աղի համը վերադարձուց իրեն անցելատոյգ մանկութիւնը: Ու կըրկին, յամառօրէն, մէկը իր անունը տուաւ: Բազմութիւնը կը յորդէր միշտ: Մարդկային ալիք մը զինքը եզերքը նետեց: Գլուխը յուլօրէն դարձուց ու նայուածքը խեղդուեցաւ Հելլայի աղուոր ու անձկալի աչքերուն մէջ:

Կեցած էր, կողմնակի փողոցի մը բերանը, ուրիշ օտար ուսանողներու հետ: Հակառակ տարածութեան՝ զգաց, որ գունատ է: Ու ձայնին մէջ կար գորով, աղապատանք ու յաղթըւած, վիրաւոր հպարտութիւն, երբ կանչեց.

–Աշո՛տ, կը խնդրեմ, եկո՛ւր...

Երեկոյեան մութ յատակին վրայ ինչպէս գեղեցիկ էր անոր գունատ դէմքը: Հագած էր կապոյտ, թրթռուն պարեգօտ մը ու հասակը կարծես կը դողար իրիկուան շունչէն: Գլխարաց էր ու վերջին անգամ տեսնելէն ի վեր փոխած էր վարսերուն յարդարանքը: Ու ատիկա աւելի մանկութիւն ու փաղցրութիւն տըլած էր երիտասարդ աղջկան իր աղուոր դէմքին: Ինչպէս որ կար՝ բանաստեղծական ու հրաշալի աղջիկ մըն էր ու ինք ուզեց՝ բազկարաց վազել վրան ու գրկել զայն, փաթթուիլ անոր լի իրանին: Բայց հպարտութիւնը մեծ էր ու յեղակարծ կերպով հոգիին խորը ծլած էր գէշ բոյս մը: Դիւրութեամբ ուրեմն կրնայ մոռնալ, որ մեծապէս սհանելի է ինձ՝ զինքը ուրիշներուն հետ տեսնել: Ու բացակայութեանս երկրորդ օրն իսկ...

–Աշոտ, եկո՛ւր,– կանչեց Հելլայի անուշ ձայնը կրկին,– եկո՛ւր...

Երկար ու գրեթէ ոխակալ հայեացքով մը նայեցաւ անոր աչքերուն ու յիշեց իր որոշումը: Ու ատիկա զօրացուց զինքը, զինեց զինքը՝ սրտին տկարութեան դէմ: Ձեռքերը խրեց գըրպաններուն մէջ, սկսաւ սուլել ու կրկին մտաւ բազմութեան մէջ: Կը յառաջանար առանց շուրջը նայելու ու մտովի կ'ըսէր,– ի՛նչ ալ պատահի, գլուխդ ետ չպիտի դարձնես, ահա թէ ինչ: Ու թող հասկնայ, որ քեզ հանելի չէ զինքը տեսնել ուրիշներուն հետ...: Սիրտը սակայն կը բողբօէր ու արիւնը շրջան կ'ընէր անսովոր տենդով մը: Ծունկերը կը կթոտէին եւ

բերանը ծարաւ էր համբոյրի: Ձեռք մը թօթուեց թելը ու անոր անուշահոտութիւնը զարկաւ ոունգերուն:

-Մտիկ ըրէ, Աշո՛տ,- ըսաւ կցկտուր ու յուսաբեկ ձայնով մը,- բազմաթիւ օտարներ ձերբակալած են, եկո՛ւր, անխոհեմութիւն է ըրածդ...

Թաշկինակը հանեց ու ուզեց սրբել կզակին սկրթուէն ծորոդ արիւնը: Բայց ինք բիրտ շարժումով մը գայն հրեց անդին: Ջգաց սակայն, որ այդ խիստ արարքը ուղղուած էր իր սեփական տկարութեան դէմ: Շրթունքը խածաւ՝ վախճալով որ կը խօսի:

-Հաւատա՛, վշտանալու իրաւունք չունիս, Աշո՛տ,- յարեց՝ տամուկ աչքերուն մէջ քաղցր խոնարհութեամբ մը,- ընկերուհիի մը հետ էի, միւսներուն հանդիպեցանք փողոցը...

Ձկրցաւ համբերել: Տենդը խածած էր բերանը: Ձեռքերը կը դողային:

-Ես քեզի բա՞ն մը հարցուցի,- ըսաւ խստութեամբ,- ինձ ի՞նչ թէ որուն հետ ես...

Նայուածքը կրկին խեղդուեցաւ՝ անոր աղուոր աչքերուն մէջ:

-Աշո՛տ,- յամառեցաւ՝ բռնելով իր դողդոջուն ձեռքերը,- եկո՛ւր, գուր տեղը ինքզինքդ վտանգի կ'ենթարկես, տե՛ս, երեւոյթիդ նայէ...

Գուրգուրանքով սրբեց կզակին արիւնը: Շուկեց խառնի-խուռն վարսերը: Կուրծքը ծածկեց: Մատներուն վրայ ինք կը զգար անոր մարմնին դողն ու անապարանքը:

-Ի՛նչ կ'ըլլայ, օր մըն ալ գի՛ս մտիկ ըրէ,- ըսաւ քաղցր ժպիտով մը,- փողկապդ կապէ ու երթանք անմիջապէս...

Բագուկը նետեց ուսին ու սիրով մօտեցուց գայն իրեն:

-Ո՛չ, չե՛մ գար,- պատասխանեց բրտութեամբ, մարմինը ազատելով անոր գորովէն,- եթէ կ'ուզես գնա՛ սենեակս ու սպասէ՛: Վերջանալէն յետոյ կու գամ...

Մութը կը թանձրանար քաղաքին վրայ եւ իր հոգիին: Ու բերանը աւելի քան ծարաւ էր համբոյրի: Ամբողջ մարմնով կը դողար:

-Կը կարծէի, որ հոս չես, Աշո՛տ, սենեակդ եկայ՝ չկայիր, երկտող մը ձգեցի...

-Այս երեկոյ վերադարձայ,- ըսաւ նայուածքը կախած,- ցոյցը հագիւ սկսած էր...

Քաջալերուած ձայնին շեշտէն՝ Հելլա մօտեցաւ կրկին ու ժպտեցաւ: Իր գունատ դէմքին վրայ այդ ժպիտը բացուեցաւ լոյսի ցոլի մը պէս:- Իրապէս գեղեցիկ էր մտածեց այս իրիկուն ու կարծես թէ մեծապէս կարօտցած է զիս...

-Միշտ չի պատահիր, որ որեւէ բան խնդրեմ քեզմէ, եկուր, Աշո՛տ, փողկապդ կապէ՛, կզակիդ սկրթուքը բաւական խոր է, պէ՛տք է լուալ...

Թոյլ տուաւ, որ ձեռքէն բռնած տանի զինքը: Երեւակա-յութիւնը մեծաքայլ կը յառաջանար փողոցներէն, կը բարձրանար իր տան սանդուխներէն, կը բանար սենեակին դուռը ու իրենց մարմինները կը նետէր տիւանին վրայ:- Թաթիկները պիտի սեղմեմ ափերուս մէջ ու իր քնքուշ մատներուն ծայրերը պիտի համբուրեմ... յիշեց: Պիտի ըսեմ,- Ահա, Հելլա՛, մեծապէս ապերջանիկ եմ այսօր ու կ'ապաւինիմ էն գորովիդ...: Փողոցի մը անկիւնը կեցան ու Հելլա պնդեց, որ փողկապը կապէ եւ գոկը դնէ: Իր թեթեւ մետաքսէ վզնոցով ծածկեց շապիկը, որ պատռած էր ու կրկին համբուրեց գայն բերնին վրայ: Աչքերը կը մատնէին մարմնին խոովքը ու իրանը կը դողար: Բերանը փակցուց կզակի սկրթուքին, համբուրեց ու չորցուց գայն: Յետոյ ամչցաւ ըրածին համար ու շիկնեցաւ: Աչքերը փախցուց անդին՝

-Երբեք չէի կարծեր, որ այդքան բարբարոս տղայ մըն ես: Այլեւս բոլորովին կը քանչնամ քեզ ու կը զգամ, թէ ինչու երբեմն կ'ատես զիս...

-Լա՛ւ,- ըսաւ ցրտութեամբ,- լո՛ւ՛...

Անապարանքով իջան ծառուղին: Քաղաքը կը քնանար կարծես: Ասդին-անդին կ'երեւէին ոստիկանական պզտիկ խումբեր: Խանութները փակ էին: Լոյսերը ձանձրոյթով կ'իյնային սալաշատակներուն վրայ: Կլոր ու ցուրտ լուսնկայ մը կը շրջագայէր կապոյտին խորը:

-Գիտե՞ս, Աշո՛տ,- հծծեց կծկուելով տղուն ու թելը առնելով,- այս առաւօտ խորապէս զգացի, որ կը սիրեմ քեզ, նայէ՛ աչքերուս, տե՛ս որքան անկեղծ եմ...

-Լա՛ւ, լո՛ւ, լո՛ւ,- ըսաւ խեղդուկ ձայնով մը ու քայլերը մեծցուց:

-Ինչո՞ւ կրկին վշտացած ես դէմս, Աշո՛տ...

-Բոլորդ ալ կը նմանիք իրարու,- պոռթկաց տհա՛ն ձայնով մը, գիտե՛ս որ չեմ սիրեր քեզ ուրիշներու հետ առանձին տեսնել, բացակայութեանս երկրորդ օրը...

-Օ՛, ի՛նչ անարդար ես,- մրմնջեց ցաւով,- եթէ գիտնաս, թէ ինչպէ՛ս անարդար ես...

-Լա՛ւ, լո՛ւ, վերջացո՛ւր...

-Աշո՛տ, եթէ չես ուզեր, որ գամ հետդ,- ըսաւ հպարտութեամբ,- կ'երթամ...

-Ինչպէս որ կ'ուզես, աղջիկս, կարծեմ չաղաչեցի որ գաս...

Թեւը ձգեց ու ցուրտ, գէշ հայեացքով մը նայեցաւ աչքերուն: Մտովի կ'ըսէր,- եթէ ֆաշուսիւն ունենաս բաժնուելու, խզումը կը դիւրանայ: Յիշէ՛ որոշումդ: Սիրոյ յիմար պատմութիւն մըն է, անընդհատ նոյնը, վերջացո՛ւր, հեռացի՛ր, գնա՛...

-Ուրեմն այդպէս, Աշո՛տ...

-Այո՛, այդպէ՛ս, ինչպէս որ գիտես...

-Լա՛ւ, այն ատեն՝ խնդրե՛մ, ընկերացիք ինձ մինչեւ պանդոկին դուռը...

-Յոգնած ու ֆնատ եմ,- պատասխանեց չկամութեամբ,- կրնաս մինակդ երթալ...

Ձայնը դողաց սակայն: Նայեցաւ Հելլայի աչքերուն, ուր արտասուքի կաթիլներ կային: Ցաւի ու հանոյքի խառնուրդ բան մը նանկրտեց կոկորդը: Ջգաց, որ իրապէս վատ ու բիրտ եղաւ: Գորովի յեղակարծ վերադարձով մը՝ գրեթէ բռնի, գայն գրկեց ու համբուրեց կոպերուն ու թարթիչներուն վրայ: Դողացող ձեռքերով շոյեց անոր ֆողքը դէմքը:

-Մտիկ ըրէ, Հելլա՛,- ըսաւ խուլ ու ծանր ձայնով մը,- չկարծես, որ ատելութիւնս ուղղուած է քեզի դէմ, ո՛չ, ընդհակառակն, գիտես, որ միշտ հոգիս փնտռած է քեզ...

Ձայնը փրթաւ կարծես: Վայրկեաններ կան, երբ կարելի չէ ամէն բան ըսել:

-Պէ՛տք է որ փոխեմ ապրելու եղանակս,- ըսաւ մեծ սիգով մը,- կ'ըմբռնե՞ս, գաղափարներուս եւ կեանքիս մէջ մեծ խրամատ մը կայ: Պէ՛տք է ցատկեմ միւս կողմը, մինչդեռ...

-Բայց, յամենայնդեպս, ես չեմ, որ խոչընդոտ եմ, Աշո՛տ, միշտ աշխատած եմ, որ որեւէ ձեռով չխանգարեմ կեանքիդ սովորական ընթացքը...

-Այսուհանդերձ, գիտե՛ս որ օրուան կէսէն աւելին միասին կ'անցընենք ու որքան երկար մնաս ինչպէ՛ս այնքան ծարաւս կը մեծնայ: Կ'ըմբռնե՞ս: Հելլա՛, գիշումներու եւ իրաւախօսութեան ցանցի մը մէջ՝ հոգիս կը նմանի թակարդը ինկած թռ-

չունի մը, մինչդեռ մէկն եմ, որ կը սիրէ միայն լրիւ, ամբողջական ընծայումները...

-Միշտ կը չափազանցես,- ըսաւ երկչոտ,- մա՛նաւանդ երբ ինքզինքիդ դէմ կը խօսիս: Ընդունէ՛ որ քիչ մը կը նանչնամ կեանքդ ու կը պնդեմ, որ բնաւ ըսածիդ պէս չէ, գէթ ես ո՛չ մէկ արատաւոր բան կը տեսնեմ...

-Գուցէ, եթէ գիս բաղդատես միւս ուսանողներուն հետ: Մնաց որ, անհրաժեշտ բոլոր տարրերը չունիս գիս դատելու համար: Ջգալու համար կեանքիս ամբողջ խարդախութիւնը՝ պէ՛տք է նախ իւրացնես կեանքի ըմբռնումս, որ հիմնովին կը տարրերի բուկիւնդ: Ես եւ դուն երկու տարրեր դասակարգելու կը պատկանիմք, Հելլա՛...

-Այո՛, ատոր համոզուեցայ այս իրիկուն,- ըսաւ տրտում ձայնով մը,- ու հաւատա՛ որ ֆովիւններուս ըսի, թէ դուն բոլորես լաւ ես ու ազնիւ...

-Քիչ առաջ ուրիշ բան կ'ըսէիր...

-Մէկը միւսը կը լրացնէ, Աշո՛տ: Յամենայնդեպս, իրաւունք չունիս այդքան գէշ կարծիք ունենալու քու մասիդ...

-Գիտե՞ս, ինձ նման մարդոց ի՞նչ անուն կու տան...

-«Դրամանենգ», - ըսաւ աղջիկը ժպտուն: Յետոյ խնդաց:

-Հելլա՛, մի խնդար ու հիմա՛ գիշեր՝ բարի եւ ցտեսութիւն...

-Օ՛, ո՛չ,- բողոքեց՝ բռնելով ձեռքէն,- չեմ ուզեր, որ այս գիշեր առանձին մնաս, ֆալե՛նք, թո՛յլ տուր տեսնեմ կզակդ...

Ու գողունի համբուրեց գայն կրկին բերնին վրայ: Ու երկուքն ալ աճապարանքով վերադարձան իրենց սիրոյն եւ իրենց մարմիններուն շոյալ երիտասարդութեան: Գրկուած, փաթթուած իրարու՝ կը ֆալէին լուռ փողոցներէն: Բոլոր խօսքերը աւելորդ էին ալ, քանի որ բոլոր արգելքները մնացած էին իր ու գիշերուան մէջ կրկին՝ աղջիկ մը ու տղայ մը կային միայն: Աճապարանքով բարձրացան սանդուխներէն: Մութին մէջ՝ գգուելով իրար ու սպառելով՝ սիրային անհամբերութենէ: Դրան առջեւ վայրկեան մը կեցան ու հրատապ շրթներով ձգուեցան իրարու:

-Իրիկուան մութ յատակին վրայ, գիտե՞ս ինչպէս գեղեցիկ էիր, Հելլա՛...

-Իսկ դո՛ւն,- ըսաւ գորովով,- երբեք չէի կարծեր, որ այդքան բարբարոս տղայ մըն ես, աչքերդ կը վառէին: Ակնարկս

անընդհատ վրադ էր: Կը վախճայի ու միաժամանակ, ներքնապէս կը ցանկայի, որ մնայիր բազմութեան մէջ...

Բանալիին վրայ ձեռքը կը դողար: Դուռը անհանգիստ: Լոյսը բացաւ ու երկուփոյ վայրկեան մը կռացան թղթի կտորի մը վրայ, նոյն ատեն սիրելով իրար:

-Աշոտ, տուր,- կ'ըսէր քանակ ձայնով մը,- մի՛ կարդար...

Ջօրեղ ձեռքով մը՝ աղջիկը կոթնուց պատին ու թուղթը՝ միւս ձեռքին մէջ բռնած՝ կարդաց:

«Առանց լուր տալու՝ կրկին գացիր: Երեկ՝ ամբողջ օրը սպասեցի անձկութեամբ: Այս առաւօտ եկայ՝ զգալով հանդերձ, որ տունը չես: Եթէ չամչնայի՝ տանտիրուհիդ պիտի խնդրէի, որ դուռը բանար, այնքան տխուր էի եւ հոգիս կարօտ էր քեզի: Գիտե՞ս, լաւ չէ որ գիս այսպէս առանձին ձգես: Մա՛նաւանդ երբ գիտեմ, թէ ուր ես: Ձեմ ուզեր բոլոր մեծ բաներդ յիշեցնել: Յիշէ՛ միայն, որ միշտ տղաքը չեն, որ վեհանձն են ու ոչ ալ միայն կիներն են, որ երկու պարանի վրայ կը խաղան: Այսուհանդերձ, կը մաղթեմ, որ երջանիկ տրամադրութեամբ վերադարձած ըլլաս ու այս թղթի կտորը չվշտացնէ քեզ:

«Կը ձանձրանամ ու չեմ գիտեր, թէ ի՞նչ կրնամ ընել: Կը յիշե՞ս, որ խոստացած էիր այսօր հետս ծովեզերք երթալ: Ահա թէ ինչ կ'արժէ տղու մը խոստումը:

«Ձեմ գիտեր, թէ ե՞րբ պիտի վերադառնաս: Յամենայնդէպս, մի՛ սպասեր, որ կրկին գամ: Դեմդ վշտացած եմ ու ալ բնաւ չեմ սիրեր քեզ: Ի»:

Ծալեց ու դրաւ սեղանին վրայ:

-Մտիկ ըրէ, Հելլա՛,- ըսաւ խուլ ու անկեղծ ձայնով մը,- այլեւս բնաւ...

-Օ՛, լո՛ւէ՛, բացարձակապէս բան մը պահանջած չունիմ քեզմէ...

Աչքերը կրկին խոնարհան, պոկունքները սեղմեց, դեմքը դարձուց անդին ու սկսաւ հանուիլ: Լոյսին մէջ, իր բարակ շրջագգեստը հեռաւոր ու անհիւփական բան մը կու տար դեմքին: Տեղով՝ գայն ձգեց գետին ու լոյսը փակեց: Այսուհանդերձ կիսալոյսին մէջ մեծապէս խոռովիչ էր իր սլացիկ իրանը: Գիտնալով տղուն անյագ ծարաւը՝ մարմինը կ'ազատէր բոլոր աւելորդ բաներէն: Ամչնալով ու սրսփալով պիրկ ու սպիտակ գեղեցկութեամբ մը դողահար ակնբով ծածկեց զանոնք ու շտա-

պեց անկողին, բոկոտն, նոյն ատեն հծծելով՝

-Աշոտ, խնդրե՛մ, պատուհանը փակէ...

Բայց տղան իր գօրեղ բազուկներուն մէջ գրկեց գայն, շրթները փակցուց ծոծրակին ու շնչեց անոր մարմնին բոյրը: Յետոյ բարձրացուց ու տարաւ անկողին: Կուրծքը կ'ելեւէջէր յուզումէն ու ձայնը կը դողար -Հելլա՛, Հելլա՛,- կ'ըսէր,- գիտե՞ս, մի՛ մայիր գէշ բնաւորութեանս...

-Լո՛ւէ՛, լո՛ւէ՛, Աշոտ, խնդրե՛մ, պատուհանը փակէ՛, կը մըսիմ...

-Լա՛ւ,- ըսաւ գունատ ու, յաղթելով իր մեծ յուզման՝ գնաց փակեց պատուհանը: Յետոյ՝ ծխամորեք լեցուց, նստաւ անկողնին եզերքը ու սկսաւ ծխել: Պգտիկ գգուանքներով կը սիրէր գայն ու քանի՛ մարմնին ծարաւը կը դառնար պարտադիր, բռնակալ, անյետաձգելի՝ այնքան հաճոյք կը զգար տառապելով: Ու քանի՛ ձայնը կը դողար՝ այնքան կը յամառէր խօսիլ: Յետոյ՝ հեշտագին ու շատ, բացառապէս կրօնարոյց սեղմումով մը չարչարեց աղջկան տաք ձեռքը: Իրենց մատները՝ անբաժանելի բաներու պէս խառնուած էին իրարու ու ո՛չ մէկը եւ ոչ միւսը չէին գիտեր, թէ ո՞ր ձեռքը կը պատկանի միւսին: Կը զգային միայն իրենց արեան ջերմութիւնը ու ոսկորներուն թուլութեան ու խուլ ցաւի նմանող բան մը, որ աւելի կը մեծցընէր իրենց սէրը: Ու քանի՛ սեղմումը կ'երկարէր՝ այնքան կը մեծնար ցաւն ու երջանկութիւնը, որ կը զգային իրարմէ: Երբ վերջապէս Հելլա ազատեց իր ձեռքը՝ հիւանդ ու շատ թոյլ բանի մը պէս ան ինկաւ մարմնին վրայ, ընդունելով տենդահար շրթներու մեծ տապը:

-Աշոտ, շո՛ւտ ըրէ, եկո՛ւր,- հծծեց անձնուէր, լաւ աղջըկան իր տաք ձայնովը,- կը մսիմ...

Պլուեցան ու սրսփացին: Շնչատ՝ կը սպասէին կարծես, որ դադրի իրենց սրտերուն զարկը:

-Հելլա,- ըսաւ շունչը շունչին,- գիտե՞ս, այլեւս, բնաւ...

-Ո՛չ, ո՛չ, չե՛մ ուզեր որ խօսիս, Աշոտ, գիտեմ որ անկարելի բաներ պիտի ըսես կրկին, բան մը պահանջած չունիմ քեզմէ ու կրնաս վստահ ըլլալ, որ ի՛նչ ալ պատահի, ո՛ւր ալ ըլլամ եթէ կանչես, պիտի գամ: Հիմա կը զգամ, որ կը սիրեմ քեզ...

Կ'ուզէր ըսել, որ ինք եւս, ինք եւս կը սիրէ, բայց լոնց: Մարմինը կը զգար անոր իրանին անուշ ջերմութիւնը: Ձեռքերը, մաքուր գգուանքներով կը թափառէին: Ծունկը դրած էր

անոր ծունկերուն միջեւ: Երակներէն, աղմուկով կը փալէր արիւնը ու կը հասներ սրունքներուն: Ու ֆունքին վրայ էր կարծես, որ սիրտը կը բարախէր: Յանկարծ ինք ալ չգիտցաւ ինչպէ՞ս լուսիւնը խզեց ու տարօրինակ ձայնով մը հարցուց.

-Հելլա՛, կը կարծես՞ որ ձրի արարքներ կան...

-Ո՛հ,- ըսաւ աղջիկը ցաւով,- գէթ ժամ մը հրաժարէ՛ մտածելէ:

Յետոյ իր սպիտակ ու փառքը թելերուն մէջ գրկեց գայն, իր մսեղ շրթներով փակեց բերանը եւ շնչալով անցուց.

-Անշուշտ կ'ուզես որ ըսեմ, թէ ձրի արարքներ չկան, բայց կա՛ն, Աշոտ, կա՛ն...

-Սո՛ւտ կը խօսիս, բացարձակապէս չկան,- ըսաւ տղան կրֆով,- բայց կրնայ ըլլալ որ այո՛,- անցուց ցաւով,- քանի որ նման խնդրի մը մէջ մարդ միայն իր անձը կրնայ նկատի առնել՝ որպէս փորձադաշտ, իսկ ո՞վ է ան, որ կրնայ պնդել, թէ ծանօթ է իր բոլոր արարքներուն ծագումին, զարգացումին եւ այն ամբողջ տարածութեան, որ արարքի մը նախնական ծնունդը կը բուսնի անոր գործադրութենէն...

-Ա՛հ,- յարեց յետոյ շնչատ,- Հելլա, ինչքան գիրգ, ինչքան փա՛ն հարուստ է մարմինդ: Ու որքան տաք են ծունկերդ, Հելլա՛...

Յետոյ սերը՝ այդ տղուն եւ այդ աղջկան վրայ, հաստատեց իր միահեծան իշխանութիւնը: Ու սատանան, խաւարին մէջ, դեղին ու գէշ ծիծաղով մը ֆրֆջաց: Անկիւններէն կարծես բարձրացան բառեր ու շտապով շարունեցան իրարու ֆով եւ կարգով արտասանուեցան՝

Ահա՛
Թէ
ինչպէս
մարդ
կը պատկանի՛
Չորրորդ
դասակարգին-
բո՛ւհ...

Բայց անձրեւին աղմուկը պատուհանին վրայ ու ժամացոյցին յամառ թիֆ-թափը խափանեցին այդ բառերուն ձայնը: Ու բառերը մէկիկ-մէկիկ փաշուեցան կրկին իրենց անկիւնները:

X

Այն բոլոր բաները, որոնց մասին պիտի խօսիմ, պատահած են ասկէ մէկ փամի տարի առաջ, բայց յիշատակիս մէջ անոնք արտասովոր կերպով կենդանի են՝ իրենց ամենայնոց մանրամասնութիւններով: Ասիկա, կ'ընդունիմ, որ հիւանդագին վիճակ մըն է ու մարդ պէտք չէ որ այսքան զօրութեամբ ապրի հիմ, կորսուած բաները: Գիտեմ որ այս այսպէս է, բայց ես ալ ուրիշ կերպ չեմ կրնար վարուիլ: Հետեւաբար, այս կարգի նախարանէն յետոյ պիտի աշխատիմ հոգիս ազատել յիշատակներու այս չարագործ սնունդէն:

...Ձեռքս՝ որ երկարեցի՝ հանդիպեցաւ ֆեֆուշ ու թաշայիւն քանի մը, որ իր ուսն էր: Անապարանքին մէջ, որ ան ուներ՝ մօտալուտ գիշերէն առաջ տուն հասնելու համար, մոռցաւ կամ չկրցաւ հարկ եղած ուժգնութեամբ պաշտպանուիլ: Ու ձեռքս, որ երկարեցի՝ երկար ատեն զսպուած ըլլալուն պատճառաւ պատրաստ էր անսովոր յանդգնութիւններու: Տեղով ու անըզգուշ՝ ան իջաւ անոր կուրծքերուն վրայ ու զգաց երիտասարդ սրտի մը հապանք բարախումը: Ձեռքերով զիս կ'ուզէր հրել անդին ու այդ ձեռքերուն վրայ աղաչանքը անյոյս էր, ու պաղատանքը արթնալու պատրաստ: Ու այդ ձեռքերուն վրայ՝ նորագարթ եւ մանուկ գուրգուրանքներ կային, պահանջող իրենց իրաւունքը: Ու ձեռքս, որ երկարեցի՝ հակառակ իր յանդգնութեան կը վարանէր, որովհետեւ անոր մարմինը ջերմութեան մէջ էր եւ սաստիկ ցնցումներով կը սարսէր: Ժամը կը թուէր, թէ պատեհ է սիրոյ համար:

Անշուշտ այդ երկար ու յետին մտքերով, գիտուն պարապներով ու կարն լուսիւններով ընդմիջուած խօսակցութիւնն էր, որ մեզ բերած էր հող, մեղքին եզրը: Ու կը բաւէր, որ ես յանդգնէի՝ ուզածս ստանալու համար: Բայց յանկարծ, թաւուտէ մը, թոչունի մը ձայնը բարձրացաւ, կոտրելով դիւքանքը ու մեզ վերադարձնելով, զիս՝ իմ երկչոտութեանս, ու զինք՝ իր վերապահութեան: Յանկարծ, ձեռքս, որ երկարած էի՝ անկողնդ, գէշ, լկտի բան մը դարձաւ իր մերկութեան վրայ ու ամօթով վերադարձաւ տիրոջ: Աչքերս նետեցի գետին՝ պտուղի անօգուտ կուտերու պէս ու ձայնս խեղդուեցաւ, շնչատ թոչունի մը նըման: Յետոյ՝ ամբողջ երեկոն թուեցաւ երկար, երկար: Կը զգայիմք, որ պատեհութիւնը կորսուած էր: Ու հակառակ որ

երկուսն ալ տխուր էինք ասոր համար, բաժանումը թուեցաւ անհրաժեշտ:

Ձեռքս, որ երկարեցի՝ հանդիպեցաւ տաք ու շուարուն բանի մը, որ իր ձեռքն էր: Ու նայուածքս միջատի մը պէս խեղդուեցաւ աչքերուն խորը:

* Երբ տուն վերադարձայ՝ տղաքը կը ննջէին: Ուշ գիշեր էր ու օդին մէջ շնչատ բան մը կար: Մարմինս ծարաւ էր մերկութեան ու արիւնս կը խայտար, հակառակ ամառ գիշերուան տապին, շնչերակիս մէջ՝ ուժգին ցունցերով: Կը զգայի, որ եթէ ձեռքերս հանգչեցնեմ իր մերկ պարանոցին վրայ, արիւնս կընայ խաղաղի: Յետոյ՝ մտածեցի, որ ուշ գիշեր է եւ պէտք է ննջել: Կը ցանկայի, որ երազիս պատահումն վրայ, իր ձեռքերը հոյժեղ բռնուած թռչուններու պէս՝ արագ թեւաբախումներով հեռանային ու իր կուրծքերը խոշորնային պտուղներու նման, կամ լոյսէ գունդերու պէս վառէին: Կէս-ժամի մը անորոշութեան մէջ՝ կը զգայի, որ երեւակայութիւնս հետզհետէ անճանատու կ'ըլլայ սիրոյ կարելիութիւններու: Ու ասիկա հանելի եւ տխուր բան մըն էր միանգամայն: Բարեբախտաբար գիշերային թռչուն մը՝ յանկարծ խզեց լուսնիւնը, բակի ծառերէն մէկուն վրայ ու երեւակայութիւնս՝ խոշոր ֆայլերով հեռացաւ: Ուզեցի յապաղած գոչումով մը փաթթուիլ իր ֆղանցֆին, բայց ասիկա կարելի չէր ու յետոյ...

Ձեռքս՝ որ երկարեցի պարապին մէջ, հանդիպեցաւ բանի մը, որ թռչունի պէս կը դողար: Ու այդ հպումը այնքան վրտանգաւոր բան մըն էր եւ այնքան յեղակարծ՝ որպէս գէշ սովորութիւն, որ կը վերադառնայ տարիներ յետոյ, որ ընդոստ ելայ ոտքի, գացի պատուհանին առջեւ ու ձեռքերս, ինձ չպատկանող իրերու պէս դրի բազրիքին վրայ: Անձկութեամբ կը դիտէի իրենց դողը ու հետզհետէ մարմնիս խոտվէր կը մեծնար: Ասուպ մը ինկաւ երկրին գոգը: Կը թուէր թէ երկրին ընդերքը կը դողար բեղմնաւորութեամբ: Աւազանին վրայ լուսնի շողերը լող կու գային: Ու լուսնիւնը՝ մեծ թաւալումներով, խուլ ջուրերու պէս կը հոսէր...

* Ահա՛ այդ միջոցին էր, որ յանկարծ, վարի նամբէն, որ երակի պէս տաք էր ու կարմիր, անծայրածիր լուսնեան դէմ,

զարտուղի ու շատ անակնկալ երգ մը հնչեց: Այդ երգը տարօրինակ էր, յուզիչ էր ու տարօրինակ: Հակառակ հեռաւորութեան կը զգայի, որ գայն երգողը մեծ նամբաներու դատարկապարտ մըն էր: Ի վերջոյ երգը հեռացաւ ու մեծ դժուարութեամբ ընկղմեցաւ խաւարին մէջ: Երբ իր վերջին կտորը լուծուեցաւ գիշերուան մէջ, միևնառիւթեան գորաւոր զգացում մը չոքեցաւ վրաս: Կ'ուզէի իջնել բակ, դուրս գալ մարգագետին ու ջուրի մը եզերքը խեղդել վիշտս:

Ու յանկարծ զգացի, որ վշտահար եմ: Ձէի գիտեր, թէ ի՞նչ վիշտ էր, բայց կը զգայի, որ հեռացած, մոռցուած ցաւ մը կը վերադառնայ ինձ: Առաւօտը հեռուն էր, այնպէս որ, բազմաթիւ ուրիշ վշտեր կընային վերադառնալ ինձ: Յուսահատ եկայ անկողնիս վրայ, սպասելով օրուան, որ պիտի ծագէր: Մարմինս ֆաղցր՝ անկարելի համեմատութեամբ կը մեծնար ու մտքիս առջեւ կը բացուէին հեշտութեան ընդարձակ տրտում նկարներ:

* Տարիներ առաջ էր, որ պատահած էր այդ բանը: Ու հիմա, այս ժամուն՝ իր յիշատակն իսկ հին էր եւ անօգուտ, այդ պատահած բանին: Կ'որ ու թուխ դէմքով մանչ մըն էի ու արեւելեան ֆաղաքը՝ կայսրութեան մը պէս կը պատկանէր ինձ: Ծարաթ երեկոյ մը, երկաթապատ դռնէ մը, երիտասարդ կին մը գիս կանչեց ներս, հորէն ջուր ֆաշելու համար: Ամբողջ երեք ժամ աշխատեցանք միասին ու ամբողջ երեք ժամ՝ նորագարթ զգայարաններու ֆաղցը հասակ նետեց ու արեւանս մէջ սիրոյ տենդը փոխուեցաւ անկարելի տապի, կարծես հիւանդութեան: Երբ կը ծոէր, լեցուն դոյլը վերցնելու համար, կուրծքերը կը ցատկէին ու շատ սպիտակ եւ շատ գրգռիչ ցոլք մը կարծես կը բախէր աչքերուս ու յետոյ կ'իյնար բակին ֆարերուն վրայ: Ու ամէն անգամ լայն ու հիւրընկալ ժպիտ մը կը բուսներ՝ իր բիրերուն խորը, գրգռութեան պէս, խայծի պէս բան մը: Անշուշտ կը զգար աչքերուս մէջ ցանկութիւնս, որ տագնապալի եւ աշխոյժ՝ կը պատասխանէր իր կուրծքերու ցոլքին ու ֆանի շփոթս ու յուզումս կը մեծնային, այնքան աւելի կը ծոէր ան, ցոյց տալով երկու հարուստ գունդեր սեւ ու սիրուն պտուղներով: Ու ասիկա մեծապէս գրգռիչ խաղ մըն էր:

Ու ի՛նչ որ զիս կը մղէր անհնար երջանկութեան մը յոյսին՝ իր աչքերն էին, որ կը խոստանային: Ու ի՛նչ որ զիս կը մղէր յուսահատութեան՝ իր աչքերն էին կրկին, որ քիչ յետոյ կը մերժէին: Ու ամէն քան, քակին մէջ, կը թուէր գորշ ու շատ հասարակ: Յետոյ պատահեցաւ տարօրինակ քան մը: Հնազանդելով ներքին հրամանի մը, ձեռքերս վայրագութեամբ խուծեցին իր կուրծքերուն վրայ: Պզտիկ ճիչ մը արձակեց ու զիս հրեց անդին: Լեցուն դոյլը կործանեցաւ: Ու իր կուրծքերը կարծես լոսեցին, թեթեւ հագուստին տակ: Աչքերը սակայն կը բովանդակէին բազմաթիւ բաներ, որոնց խառնուրդը կը մատնէր իր ներքին կրակը: Լուսութեամբ գնաց ներս ու ես հետեւեցայ իրեն: Շարժումներուն մէջ կար՝ մեղկութեան հետ, վայրենութեան ու անձնատուութեան խառնուրդ քան մը, դանդաղ ու փափուկ քան մը, նո՛յն ատեն տխրութիւն մը՝ որ նման պահերու աղջիկներու գեղեցիկ կուսութիւնը կը դարձնէ անդիմադրելի:

Տարիներ առաջ պատահած այս քանը, հիմա ահա՛ կը զարթնուր իր բունէն ու իմ ծարաւս, առանց յագեցումի յոյսի, կը մեծնար ու կը նեղէր զիս:

* Յետոյ մահը, հին յիշատակի պէս վերադարձաւ ինձ ու կարծես իր ցուրտ շունչը փչեց վրաս: Մտածեցի որ երազի մէջ եմ, բայց իրականութիւնը այնքան երկարաձգուած էր բունիս մէջ, որ կարելի չէր որոշել: Գիշերը յղի էր անարգութեամբ եւ անձկութիւնով ու ո՛չ կարելի էր բարձրանալ, ոչ ալ վանել այդ չարաշուք երազը: Կը մտածէի ձեռքերուս մասին՝ որ ժամ մը առաջ ինձ չպատկանող իրերու պէս դրած էր բազրիքին վրայ ու անոնց կատարած բոլոր գէշ բաներուն համար՝ կարծես առաջին անգամ ըլլալով պատրաստ էի գոջալու:

Յանկարծ յստակօրէն զգացի, որ երազի մէջ եմ: Ու ատիկա բաւեց, որ ընդոստ արթննամ կրկին: Դուրսը՝ տապը ծանր էր միշտ ու հեռաւոր տեղ մը, որեւէ կայուն ջրի մը եզերքը, անշուշտ գորտեր կը կրկնային շատ տխուր եւ յուսահատօրէն միօրինակ կերպով: Գիշերը կիսալոյս էր թեւ, բայց քիչ մը հեռուն սեւ ու անթափանց զանգուած մը կար, կոյր՝ միջոցին նման: Ստեղծագործութենէն առաջ: Ու ծառերը կարծես շնչատ, պատրաստ էին տապալելու առաքուր, ջախջախելով թռչունի սեւ ու փխրուն մարմիններ:

Յանկարծ՝ դժուար բունի մը խորունկէն, տղայ մը յուզիչ ձայնով մը ճչաց: Ու ինձ թուեցաւ, թէ ան այսպէս կ'ըսէր.

—Հարիւր հատ սեւ վարդեր՝ երկար ծղօտներով ու յիսուն հատ կանաչ շուշան...: Մարմինը քաղցե՛ք քարի մը գոգը ու հոգին քերէ՛ք տուն: Վասնզի թանկագին էր ան...

Կրկին վերադարձած ըլլալով անկողնիս վրայ, յեղակարծ կերպով բունը զիս տապալեց: Ու միտքս մնաց բառի մը եզերքը, որ յետոյ յիշեցի, թէ չկրցայ արարել: Այդ բառն էր — Ազատութիւն: Միտքս կեցաւ այդ բառին եզերքը ու յետոյ մեկնեցաւ գնաց: Հին ապարանք մըն էր, գրեթէ կիսափուլ՝ իր պատերուն վրայ: Երկար, քանդակագարդ միջանցով մը, որ կը բացուէր դափնիներու եւ տօսախենիներու թաւուտի մը անկիւն: Հող, միջնադարեան ոճով ու գոյնով՝ փայլուն փայտէ նագովրեցի մը կար, ցցուած ամբողջ հասակովը, քարերու մէջ խեղդուած ջրի մը եզերքը: Իր ոտքերուն տակ կային արտասովոր կերպով կայծկըլտուն աչքերով ձուկեր, որոնց բազմաթիւ բիբերէն կանաչ ցովքեր կ'իյնային գոհարի կտորներու պէս, սեւ քարերուն վրայ: Յանկարծ իր դժուար բունին խորունկէն, նո՛յն տղան, կարծես աւելի յուզիչ ձայնով մը ճչաց: Ու ինձ թուեցաւ, թէ ան այսպէս ըսաւ՝

Մերկ մանկուհիներ կային ու բազմաթիւ կանաչ աչքեր: Ծիծերուն վրայ կարմիր դաստակներ նետեցի ու համբուրեցի անոնց ծաղիկէ թաթիկները: Եւ տեսայ որ ձեռքերէս արիւն կը կաթէր...

Յանկարծ՝ ձեռքս, որ երկարեցի, հանդիպեցաւ տափ ու շատ փափուկ բանի մը, որ աղջկան մը ձեռքն էր: Արտասովոր յուզում մը ցնցեց զիս ու կարծես թէ վերադարձայ զարթուն վիճակի: Բայց իրականութիւնը այնքան երկարաձգուած էր բունիս մէջ, որ անկարելի էր ճշդել: Ու այդ սպիտակ, շատ փափուկ ու տափ քանը, որ հիմա կը դողար կիսալոյսին մէջ, զգացի որ կը պակամէր անոր: Ուզեցի կրկին հալի այդ ձեռքին՝ բայց չկրցայ: Յետոյ ինկայ քարերուն վրայ ու ծունկս արիւնեցաւ: Ու այդ արիւնը յանկարծ կարծես կարմիր ներկեց սպիտակ ու մեծապսակ վարդը, որ ան խածած էր՝ իր ակուններով: Դեմքին վրայ անվաւեր ու գէշ քան մը կար ու ձախ աչքին տակ մեծ խալ մը: Իր կուրծքին մէկը ամբողջովին բաց էր, իր հարուստ մերկութեամբը ու կարծես պիտի պայթէր: Ձախ ձեռքով՝ իր կանաչ պարեգօտը կը վերցնէր, աչքերուն մէջ՝ սեւ ու նոյն հոսուն քրքիջով մը ցոյց կու տար իր մերկ սը-

բունկները, պիրկ ու լեցուն բումբերը, ծունկերը՝ որոնց կափարիչներէն կը սպառէր: Յետոյ՝ երբ կը փորձէի մերձենալ իրեն, նոյն սեւ ու հոսուն քրքիչովը աչքերուն մէջ, պարեգօտը կը ձգէր գետին ու Նագովրեցիին ոտներուն տակ ծնկաչոֆ, իր գործած անփաւելի մեղփին համար՝ շնորհ ու գթութիւն կը հայցէր:

Այս խաղը այնքան մութ ու խոռովիչ էր միմազամայն, որ արիւնս սկսաւ մեծ ցունցերով գարնել փունկերուս վրայ ու սիրոյ ծարաւը մեծցաւ ու ամբողջովին գրաւեց կարծես խարխուլ մարմինս: Ու գղջումը՝ կարծես կոնակէս խնդաց:

* Յանկարծ շատ մը կորսուած բաներ, դէմփի բեկորներ ու բառերու մնացորդներ, կիսատ տողեր ու փողոցի մասեր, քօշնած ծաղիկներ ու իրենց դաստակներէն կտրուած ֆնֆուշ ձեռքեր, մանուկներու արցունք ու կոյսերու յիշատակներ՝ կուտակուեցան, դիզուեցան ու հոգիս խախտեցին իր տեղէն: Աստղ մը՝ տխուր յամառութեամբ մը կը նայէր ինձ, մինչ հեռաւոր գարնան մը մէջ, բարակ ջրի եզերքը, գառնուկներ կ'արածէին ու սրինգ մը դողդողագին կը հեծէր: Ու այդ հեծեծանքը կարելի էր այսպէս թագմանել.

-Առանց սիրոյ ինչպէ՞ս մարդիկ կրնան ապրիլ ու երբ սիրեն՝ ինչպէ՞ս կրնան չտառապիլ: Աղջիկ մը ինչպէ՞ս կրնայ՝ միայն մէկ տղայ սիրել ու տղայ մը ինչպէս գեղեցիկ կնոջ մը ներկայութեան կրնայ անտարբել մնալ: Մարմնիս վրայ՝ մէկը վերքեր բացաւ ու ես կու լամ բոլորին վշտերուն համար, եո՛ւ, եո՛ւ, եո՛ւ, եո՛ւ...

Յիշեցի որ մեծ ֆաղաֆը կ'ընկղմէր՝ ձմրան թանձր ու ծոյլ գիշերուան մը մէջ, երբ ես ներս մտայ: Երկար, նեղ, այլ շատ մաքուր սրահ մըն էր: Պատերուն վրայ սեւ գծերով եզերուած դեղին ֆառակուսիներ կային: Ու բարձրը, առաստաղին ու պատերուն հպման կէտին վրայ՝ կարմիր տերեւներ աշնանահար որթատունկի եւ յուռթի ողկոյզներ, որ անյագ փափաֆներու պէս կը խուժէին վար: Սեղանները դեղին էին, նաեւ բոլոր սպասները, բաժակներն ու պնակները: Աշնան մելամաղձիկ գոյնը բռնած էր սրահը ու աղջիկներուն դէմքերուն վրայ հեռաւոր ու աղօտ ցոլք մը կար: Ու բոլոր աչքերուն մէջ վագրի բիրբերու դեղին բիծեր:

Լոյսի գունդերէն, դեղին լուսամփոփներուն պատճառաւ, շատ դեղին լոյս մը կը հոսէր՝ նորէն դեղին սփռոցներուն վրայ: Առջեւ սուրնի դեղին սկահակ մը կար: Ու այս բոլորէն կը բարձրանար անհանգիստ ու տագնապալի լուռութիւն մը: Ես կը մտածէի հեռուն մեռած ընկերոջ մը մասին, երբ խոշոր դեղին վարդ մը լամբակին վրայ՝ աղջիկ մը եկաւ ու նստաւ դէմս: Ու այդ դեղին վարդը այնքան գեղեցիկ ու թելադրիչ էր հոդ, աղջկան կուրծքին վրայ, որ ես ցանկացի խլել գայն ու փետել: Որովհետեւ ամէն բան շատ կատարեալ էր, այդ դեղին ֆառակուսիներով սրահին մէջ, մինչդեռ հոգիս կը տառապէր հաւասարակշռութեան պակասէ: Ուրախութեան կարօտիս ու գուրկ արիւնս մէջ կար մեծ պարապ մը, գոր երեւակայութիւնս չէր կրնար լեցնել: Գլխարկս դրի ու ելայ դուրս, բայց հոգիս անլի դառնացաւ, ֆանգի ոտներուս տակ, անընդհատ դեղին վարդեր կը ծլէին՝ գորս ես չէի կրնար ֆաղել: Հետեւաբար կը կոխկրտէի գանձնֆ:

Բայց բարբարոսութեան ծարաւս չէր յագեցնար: Ու ատոր համար էր անշուշտ, որ խուլ ու գէշ ձայնով մը աղաղակեցի՝
-Եթէ կրնաս՝ փրցո՛ւր հոգիդ ու նետէ՛ ոտներուդ տակ:
Ու յետոյ անգթութեամբ կոխկրտէ՛ գայն...

* Ու պատահեցաւ, որ երագիս մէջ, զարթուն վիճակին մէջ ըլլամ, առանց ազատելու սակայն ֆունի տիրապետութենէն: Խոշոր գրփի մը վրայ հակած՝ ժամերով մնացի պարբերութեան մը առջեւ: Յետոյ կը յիշեմ որ կենսագուրկ հաւամբգիի մը տակ մտախոհ կեցած էի, աշխատելով բեկոր առ բեկոր հաւաքել ցրուած յիշատակներս երբ ինձ թուեցաւ, թէ վերջնականօրէն ծերացած եմ:

Խիստ ծանրակշիռ ու միաժամանակ ֆիչ մը ուրախ բան մըն էր, ամբողջական երիտասարդութեան մը մէջտեղը, վերջնականօրէն իմ ծերանալս: Գիտուն խորհրդածութիւններ կ'ընէի ու կ'աշխատէի նախատեսել մահը եւ իր հաւանական այցելութիւնը: Յետոյ խորապէս զգացի, թէ նոր չէ որ ծերացած եմ: Այն օրէն ի վեր, երբ օտար ձեռք մը կտրեց որովայնիս կապը ու զիս անջատեց մօրս ընդերքէն՝ երջանիկ անփութութեամբ մը, ես սկսայ կորսնցնել ամբողջական երիտասարդութիւնս: Ամէն օր ֆիչ մը անլի՛ հոգիս գետին դարձաւ կորսը-

ւող բաներուն: Ու առաջին յիշատակին հետ՝ անշուշտ ծերութիւնը, հոգիէս ներս բացաւ իր առաջին դաւանան մեղքը:

-Գոցեցէ՛ք, գոցեցէ՛ք,- կ'ըսէր,- ա՛յ դժբախտ յիմարներ, ձեր հոգիին դոները ծերութեան առջեւ: Ծերութեան սկիզբը՝ անկէ ստացուած վախն է: Մի՛ կարծէ՛ք, թէ կարգը միշտ ուրիշինն է: Երբ կողմերնիդ կեցած մէկը յանկարծ կը տապալի, մի՛ փաթթուի՛ք յոյսի հղանցքին: Հապա ըսէ՛ք, որ ծերութեան գագառուած երկիւղը սկիզբն է բոլոր տկարութիւններուն: Գոցեցէ՛ք ձեր հոգին՝ ծերութեան վատ լոյսին դէմ: Ապրեցէ՛ք ամէն օր՝ համարելով, թէ առաջին կամ վերջին օրն է, միակ օրը, որ տրուած է ձեզի: Ապրեցէ՛ք ուժգնութեամբ ու խանդավառութեամբ այդ միակ օրը: Ամէն օր թող ըլլայ սկիզբ մը ու վերջաւորութիւն մը ձեզի համար: Եղէ՛ք շարժման ու արշաւի մէջ ու քրքջացէ՛ք մահուան դիմաց, երիտասարդ ու անգութ խնդուհով մը, որ յաղթանակի ու զօրակոչի պէս կը հնչէ: Եղէ՛ք գօրեղ...

* Եւ այս բոլորէն վերջ, մէկէն, ամբան խորունկ գիշերւան մէջ, լուրջ ու յուսահատական բան մը գգացի: Երկիրը սկսած էր աւելի ուժգնութեամբ բռնուիլ արգասաւորութեան տենդէն: Լուսինը յանախակի կը պատուէր՝ սիրոյ տագնապի մէջ եղող թռչուններու ճիչերով ու երկինքը սկսաւ ցածնալ հողին վրայ:

Տապը շատ ծանր էր ալ եւ կը զգայի, որ բնութիւնը չի կրնար տակաւին երկար կրել այդ յարանուն սպասման քեռը: Յայտնի էր, որ բան մը պիտի խզուէր: Կը թուէր թէ զարթուն անասուններ կային ասդին-անդին, ծառի խոռոչներու մէջ եւ կամ քարերու տակ, որ կը բեղմնաւորէին իրար: Թիթեռնիկ մը յուսահատօրէն զարնուեցաւ ապակիին: Ծաղիկներու բուրմունքը դարձաւ ծանր, զգլխիչ ու շատ յամառ: Ու մէկէն, մեծ ամպեր, յղի ամպեր՝ խոշոր ձայներով պատոնեցան հողին վրայ: Ու անձրեւին ձայնը այնքան ուժեղ էր, որ տղայ մը արթնցաւ, շփեց աչքերը՝ ձեռքին հակառակ կողմով, նստաւ անկողնին մէջ ու անձկութեամբ լի նայուածք մը ձգեց վրաս: Լուսինը խուլ գանգատով մը մեռաւ:

Ու մէկէն, կրկին շատ լուրջ ու յուսահատական բան մը պատահեցաւ հոգւոյս խորը: Արցունքի խոշոր կաթիլներ կախւեցան՝ փոքր հաղարջի հատիկներու պէս՝ թարթիչներէս, շրթնե-

րըս ուռեցան ու ձեռքերս՝ անհնարին կարօտով մը երկարեցան դէպի կենարար ջուրը, որ կ'ոռոգէր երկիրը, իր մեծ հեղեղին տակ: Արթնցութեամբ կը թրջէի ձեռքերս ու կարծես թէ գով ու ազնիւ շունչ մը կը թափանցէր երակներէս ներս: Մեղմելով արեանս մեծ տենդը: Յետոյ՝ մեծ գորովով մը կանչեցի գայն:

Կ'ըսէի,- Եկո՛ւր: Ափերուդ վրայ կ'ուզեմ համբուրել ձեզ: Ու աչքերդ կ'ուզեմ թրջել սիրոյ արտասուքներով: Ահա մեծապէս ծարաւ եմ ձեզմով, յագեցո՛ւր զիս: Վերադարձո՛ւր ինձ՝ ֆունի իրաւունքիս: Մատներովդ փակէ՛ կոպերս ու համբոյրով մը լոնցո՛ւր շրթներուս գանգատը: Փնտռէ՛ ու վերջապէս գտի՛ր զիս, սիրելի՛դ իմ...

Կ'ըսէի,- Ձեռքերս կարօտ են մերկութեան, ու ցանկութիւնըս՝ յագեցումի: Ահա ծամը հասած է ընծայումիդ: Պատկանէ՛ ինձ նորարաց ծաղիկի մը պէս ցօղաթաթախ: Աչքերուդ կապոյտ ջուրերովը խեղդէ՛ զիս, սիրելի՛դ իմ...

Կ'ըսէի,- Պատասխանէ՛ ձայնիս, որ ահա՛ խաւարին մէջ՝ որպէս աղապատանք, որպէս մարմնացեալ ծարաւ կը մատչի առ ձեզ ու գուռիդ մէջ խեղդամահ կ'ըլլայ...

Յետոյ՝ անձրեւը դադրեցաւ ու լուացուած երկիրը վերսկըսաւ հեւալ արգասաւորութեան տենդով: Կարծես թէ ծաղիկներու ձուարանները կ'ուռէին ու աղաչական աչքերով յղի կին մը՝ փոսի մը եզերքը թշուառութեամբ կը ծնանէր, մինչ շատ լուրջ ու յուսահատական բան մը, խոշոր ֆայլերով կը վերադառնար ինձ...

* Ու մեծատարած լուսնեան խորէն, որքան ալ տարօրինակ թուի ասիկա, յեղակարծ կերպով, երգի մը պէս անուշ ու ջուրի աղմուկի պէս մեղմ, բարձրացաւ, մեծցաւ մեղքի ծարաւը: Ձեռքերս կրկին գետեղեցի բազրիքին վրայ, ինձ չպատկանող իրերու պէս ու սկսայ հպատակիլ երեւակայութեանս փայլին, արձակ դաշտի մէջ: Մագերուս մէջ՝ կաթիլներ կ'իյնային ու նո՛յն աստղը տխուր յամառութեամբ մը կ'իյնար աչքերուս խորը: Կարծես թէ առաւօտը պիտի ծագէր շուտով եւ այդ առաւօտը պիտի ըլլար թրջած, ուրախ ու հերոսական:

Գգուանքներուն՝ գաղտնին, հպանցիկը, նուրբը կը սիրեմ: Երբ կիսախաւարին մէջ, յանկարծ կը լսեմ կնոջ հագուստներու շրջին մը, զգայարաններս արագութեամբ կը զարթնուն իրենց ֆունէն ու կը խենթեման: Տարակուսելի ու անծանօթ ներկայու-

թիւն մը, տարտամ բոյրի ծալք մը՝ սենեակի մը խորէն, կիսա-
դէմք մը՝ ոռոգուած գարնանային նառագայթներով, ահա գե-
ղեցիկը: Լրիւ մերկութիւնը, երբ յանկարծօրէն կը թափին ներ-
քին հագուստները, մէկէն կը սպառէ մեր ամբողջ ծարարը:
Այլ մութ հագուստի մը խորքին վրայ՝ մարմինի մերկ ու աղ-
ւոր մաս մը գայն կը մղէ յուսահատ ծայրայեղութեան: Փոքրիկ
ու գաղտնապահ շարժումով մը՝ վերցուցէ՛ք երիտասարդ կնոջ
մը պարեգօտը կամ բացէ՛ք իր ռուբ, որպէսզի տա՛նայ արիւն-
նիդ ու ձեր ձեռքերը գգուանքներու գիտութիւնը սորվին:

Հագիւ զգալի հպումներ կ'ուզեմ ու ձայնի մը աղօտ վեր-
ջաւորութիւնը, որ ամէն խոստում կը կրէ: Մութին մէջէն՝ հա-
զիւ զգալի կիսադէմք մը կ'ուզեմ. — քուկինդ, սիրելի՛ս...: Վեր-
ցուցէ՛ք բոլոր ծարաւները, որ դիրին կը յագեցնան: Մերկու-
թեանդ վրայ շղարշ կ'ուզեմ ու ննջասենեակդ մտնելէ առաջ՝
երկար միջանցք մը, ու քիչ մը դժուարամատչելի կ'ուզեմ քեզ,
քեզ՝ որ կը կրեմ արեանս մէջ, տարիներէ ի վեր, սիրելի՛ս...

* Դանդաղօրէն բարձրացաւ արեւածագը ու ցանկութեան
յաղթական ընթացքը խրեցաւ լուսեան ծոցը: Զգացի ուրիշ
տենդ մը, որ հետզհետէ սկսաւ մեծնալ ու գրաւել հրապարակը:
Գիշերը վերջաւորութեան երթալէ առաջ՝ անգամ մը եւս ցոլաց,
վերջին աստղին հետ: Բզէզները սկսան գարթնուլ: Անձրեւէն
մաքրուած բնութիւնը երկարօրէն դողաց: Առաւօտը ընդար-
ձակուեցաւ ու իջաւ դաշտերուն վրայ՝ իր գաղջ, թրթռուն գե-
ղեցկութեամբը:

Գիշերուան հետ՝ կորսնցուցի՛ք ձեր գօրութիւնը, ո՛վ վա-
ղանցիկ, լուսանցնցուղ ու քաղցր յուզումներ: Լոյսը ձեզ շնոր-
հագրկեց՝ ձեր մութ պայծառութենէն: Ու ծագող օրուան նըշգ-
րիտ ակնարկը՝ ձեզ վերադարձուց անգթօրէն ձեր յարաբերա-
կան կարեւորութեան: Գրաւելով ձեր սովորական տեղը՝ կոր-
սնցուցի՛ք նաեւ թափուն ազդեցութիւնը, որ ունի՛ք վրաս: Զեռ-
քերս ահա՛ ազատագրուեցան ձեզմէ ու շուտով պիտի վերադառ-
նան իրենց ընթացիկ ու առօրեայ աշխատանքին: Զի կեանքը
կը կանչէ զիս:

Զեզ կրելուս համար չպիտի գոջամ սակայն: Եւ դուն, ո՛վ
գիշեր, հեշտաւէտ ու գեղեցիկ էիր ու սահմաններդ կ'երթային
մինչեւ հեռաւոր տարիներ ու բոլոր յուզումները, որ տուիր
ինձ, ամբան յուրթի աւիշը ունէին: Սէրը ողորած էր քեզ,

ինչպէս տեղատարափ եւ ծաղիկներէդ կը բարձրանար, ու նաե՛ւ
ծիլերէդ ու շափիկներէդ հեշտութեան տագնապահար հրաւեր
մը: Խոսերը ծարաւով կը շնչէին: Ու յետոյ անձրեւը, որ ին-
կաւ շառաչածայն, թրջեց երկիրը ու սպառեցաւ անկէ:

Զպիտի գոջամ նաեւ ձեզ կրած ըլլալուս համար, բազմա-
պահանջ սիրոյ կարելիութիւններ: Զեռքերս՝ վառեցան աշխա-
տանքի ու ձախաւեր գուրգուրանքներու մէջ, կարծես աւելի
զգայուն եմ հիմա: Այսուհանդերձ պզտիկ բաներ էի՛ք ու առա-
ջին հանդիպած սնունդովը, կարծեմ ձեզ կարելի էր կերակրել:
Երբեմն ձեր արագ գոհացումն ու դիրահանութիւնը կը վիրա-
ւորէին հոգիս ու ձեզ յանդիմանելու ուժգին ցանկութիւն մը
բերանս կը խածնէր:

— Ի՛ր ձեռքերդ բազրիքին վրայ ու շնչէ՛ առաւօտեան մա-
քուր հովը: Ակնարկով մը գրկէ՛ տարածութիւնը: Քիչ յետոյ՝
պիտի տա՛նայ ու մեղկանայ երկիրը, տապը պիտի չոփի ածու-
ներուն վրայ: Շնչէ՛ առաւօտը, լուս՛ հոգիդ, ազատէ՛ ձեռքերդ
գիշերուան կախարդանքէն: Շնչէ՛ առաւօտը: Լա՛ւ շնչէ՛ գայն...

* Զգա՛ առաւօտեան ցօղը, որ կը ննջէ ծաղիկներուն գո-
գը ու տերեւներուն ակներուն վրայ: Զգա՛ ծաղիկներուն լուաց-
ւած բոյրը, որ կը բարձրանայ առ քեզ: Արձակէ՛ մարմինդ իր
տենդէն, ազատ արձակէ՛ գայն ու գրկէ՛ տարածութիւնը: Հովը
կը գօրանայ վարը ու հեղեղատին ձայնը կը լեցնէ լուսեան
մէկ մասը: Պղտոր ջրեր կ'երթան իրենց նակատագրին: Զգա՛
բնութեան հանապազօրեայ գարթօնքը, ձայները՝ որ աստիճան
առ աստիճան կը բարձրանան: Եղի՛ր տղայ մը, որ յաղթու-
թեամբ կը դիմաւորէ նոր օրը: Հպարտութեամբ կատարէ՛ գոր-
ծըդ, բծախնդրութեամբ կատարէ՛ գայն: Ու յաղթանակէ՛...

IX

Բացարձակապէս ո՛չ ոք, ո՛չ ոք կրնայ գիտնալ, թէ քանի մը ժամ յետոյ ի՞նչ պիտի պատահի իր կեանքին մէջ: Բոլորովին խաղաղ կարծուած կեանքի մը մէջ իսկ, մէկ ժամէն միւսը՝ կրնան վնասկան դէպքեր տեղի ունենալ ու հիմնիվայր շրջել ամէն բան: Բարեբախտաբար, մարդ ամէն վայրկեան, երկարօրէն չի մտածեր, այդ բոլոր կարելիութիւններուն ու վտանգներուն վրայ ու յարաբերական անփութեամբ մը կը շարունակէ իր նամբան:

Ինչպէս ծովուն բացը տեղի ունեցող ալեկոծութիւն մը՝ վերջ ի վերջոյ կը հասնի ու կը զարնուի փերուն, այնպէս ալ հեռուն պատահած բաներ, համաձայն իրենց զօրութեան, կը բախին քու հոգիիդ եւ իմ հոգիիս: Բազմաթիւ անտեսանելի թելերով՝ մեր կեանքը հաղորդակցութեան մէջ է կարգ մը ուրիշ կեանքերու հետ: Ու ո՛չ ոք կրնայ խուսափիլ արտաքին միջամբտութենէ: Ու դէպքերու եւ մարդոց այս զօդումէն, հակազդեցութիւններէն ու թափուն յարաբերութիւններէն կախուած է մեր պատկէ անձին երջանկութիւնը:

Օգոստոսի տօքը հեղձուցիչ ու ծանր է փողոցին վրայ: Օդին մէջ շունչ չկայ:

Գթութի՛ւն: Գթութի՛ւն:

Հանեց նաեւ շապիկը ու բազուկներն ու կուրծքերը մերկ, բանտարկուած գազանի մը պէս սկսաւ շրջագայիլ սենեակին մէջ: Այս վերջին ամիսները ապրած էր մաքուր, չարքաշ, ազնիւ կեանքով մը, ապրած էր՝ ինչպէս որոշած էր, առանց գրեթէ ուրախութեան: Յաջողութեամբ անցուցած էր բնութիւնները ու կարգը փոխած: Հրածարած էր գիրքերէ, աղջիկներէ, Իդայէն, Հելլայէն ու բազմաթիւ ուրիշ բաներէ, որ կը սիրէր: Այսուհանդերձ՝ կարծես թէ երկամուսնիները քար կը քաշէին ու որովայնին մէջ՝ նո՛յն թունաւոր վիշտը հետզհետէ աւելի կը զօրանար, կը տեղաւորուէր:

Յուսահատօրէն ապերջանիկ էր: Կարծես կեանքին վերջին եղանակն էր ու մերձ էր՝ բոլոր յոյսերուն հաշուեյարդարը: Գէշ օրեր էին կրկին:

Նստաւ սեղանին առջեւ ու գլուխը փերուն մէջ: Իր սովորական խորհրդածութիւններուն կծիկը փակուիլ սկսաւ նորէն: Ազատելու համար հոգիին տագնապէն՝ բացաւ օրագիրը ու ա-

միսներէ ի վեր՝ առաջին անգամ ըլլալով, իր ջղային ու մեծ գրեթովը գրեց:

* Հարկ է վերսկսիլ այս կեանքը: Արմատական ու մեծ փոփոխութիւններ հարկ են:

Բազմաթիւ արժէքներ կան՝ որ պէ՛տք է վերագնահատութեան ենթարկել:

Անգթութեամբ հաշուեյարդարի ենթարկել գէշ կեանքի մը վերջին մնացորդները:

Որովհետեւ ուրախութիւն չկայ, ոչ ալ առողջ համոյժ, այս վերջին մնացած բանին, զուգաւորման մէջ, գէթ հիմա, երբ արդէն տարիներու սեռային փորձառութիւն ունիմ:

Երէկ պատահական աղջկան մը հետ էի, առանձին, հոս՝ սենեակիս կիսալոյսին մէջ: Երէկ ու այսօր տխրութիւնս մնաց նոյնը: Երջանկութիւնը միշտ հեռուն է, հեռաւոր ամպի մը պէս, ու խաղաղութիւնը՝ անկարելի: Մէկ ուժեղ ու մեծ համոյժ կայ մեր կեանքին մէջ, որմէ զուրկ եմ այժմ: Գաղափարական անհաշտ ու անզուր պայքարը: Յաղթե՛լ, անընդհատ յաղթանակ տանիլ՝ գձուձ ու ստոր բնագոյներու, թշուառական մարդոց, անարժէք իրերու ու զանցանքի ցանկութիւններու վրայ:

Այս յաղթանակը տեղի պէ՛տք է ունենայ գոհողութիւններու եւ արեան գնով, որովհետեւ դիրքին յաղթանակը կը նմանի զուգաւորութեան՝ առանց ուրախութեան ու առանց առողջ համոյժի:

* Սահմանները որոշողը դուն չես: Թէեւ իրաւունք ունենաս քու սահմաններդ դուն գծելու: Գու գէշդ՝ գուցէ ուրիշին բարին է: Ի՛նչ որ անպէտ աղանդեր է ու չնչին կերակուր քեզի համար՝ ուրիշին համար կրնայ ըլլալ համադամ: Լաւն ու գէշը որոշուած էր, երբ դուն եկար աշխարհ: Ասիկա միշտ պէ՛տք է կրկնել, եկար աշխարհ՝ որովհետեւ հեռաւոր սիրոյ գիշերուան մը մէջ, էգ մը եւ արու մը կցուեցան, լրացնելու համար իրենց մակատագիրը: Ասիկա յարգանքի պակաս չէ դէպի ծնողդ, այլ իրողութեան պարզ գշտում մը, որ ունի իր կարեւորութիւնը:

Մեծապէս տխուր էի այսօր ու ընկերոջ մը հետ գացի սրճարան մը՝ գով ու կամարակապ: Կրկին պէ՛տք է որ երթամ հոգ օր

մը, տարուան երեք հարիւր վաթսուհինգ օրերէն որեւէ օր մը: Յետոյ ուրիշ ընկերոջ մը կինը տեսայ, որ գեղեցիկ թուեցաւ այսօր ինձ: Անշուշտ օրուան լոյսէն էր: Բերանը քիչ մը մեծ էր, լայն ճեղքուած, թեթեւօրէն ներկուած եւ ես անընդհատ նայեցայ ամուսնին բերնին, որ պզտիկ էր, անարիւն ու առանց տենդի: Ու մտածեցի, որ իմ բերանս արտասովոր կերպով կը յամառի՝ զաւակներ ունեցող կնոջ այդ ծիծղուն բերանին: Անշուշտ յանցաւոր եմ այս ապօրէն ցանկութեանս համար, բայց յանցանքը իմս չէ՝ այլ արեանս:

Սեւ ու թափանցիկ շղարշին տակէն կ'երեւար. իր մերկ բազուկը: Գրեթէ ուսին վրայ խալ մը կար եւ ուրիշ մը դաստակէն քիչ մը վեր: Ձախ դաստակին վրայ ունէր թանկ եւ փայլուն ապարանջան մը: Ու կարծեմ գոհարներ ու մատանիներ՝ մատներուն վրայ: Ձեռները անշնորհ էին սակայն: Կարծես աշխատաւոր կնոջ գերի ու լուսն ձեռներ էին, մաշած, հինգած՝ աշխատանքի վրայ: Ու յետոյ անիմաստ ու հանելի ծիծաղ մը ունէր: Նայուածքը նոյնպէս անիմաստ էր ու հանելի՝ ընկերոջ այդ կնոջ:

Կ'ուզէր շարունակել, բայց կանգ առաւ, որովհետեւ բազմաթիւ խորհրդածութիւններ խնդրեցան մտքին խորը: Ու պահանջ ունէր զանոնք արտայայտելու:

* Անընդհատ ինձմէ դուրս պատահած բաներ կու գան ու կը խանգարեն կեանքիս սովորական ընթացքը: Կարծես թէ ես իմ արարքներուս տէրը չեմ: Ուժեր կան, որ կը խուսափին հսկողութենէն ու հրապարակ կու գան ճակատագրական վայրկեանին՝ հաշիւներս ի դերեւ հանելու համար: Կեանքս լաւ կազմակերպուած չէ: Անկախութիւնս անիմաստ ու գուր բառ է: Տերեւը կախուած է ճիւղէ մը, ճիւղը՝ ծառէն, ծառը կը յենու հողին: Ու մեմք՝ ինչպէս կ'ըսեն, աշնան տերեւներ ենք հովին բերանը:

Գիտեմ որ այս վերջին նախադասութիւնը սովորական է, բայց ես արտասովոր բառերու պէտք չունիմ, սովորական բան մը ըսելու համար, որ կը խեղդէ կոկորդոս: Մնաց որ, կեանքը ինքը արտասովոր բան մը չէ: Հագարամեակներ յետոյ՝ ուրիշ մարդիկ պիտի գան աշխարհ՝ նոյն սովորական բաները ընելու: Արդէն կեանքը իմաստ կը ստանայ՝ սովորական բաներով: Ա-

մէն տարի նոյն եղանակին ծաղիկները կը ծլին, նորածին գառնուկներ կը մայեն արօտատեղիներուն վրայ ու կատուները կը կցուին Մարտ ամսուն, պատուհաններուն տակ...

Ամէն օր՝ օրը պիտի երթայ իր վախճանին: Ես պիտի խմեմ, ան պիտի ընթրէ ու միւսը պիտի պառկի իր կնոջ հետ՝ երբ մանուկներուն ձայները ընկղմին լուսեան ծոցը: Գիշերուան ընթացքին բազմաթիւ մանուկներ պիտի ծնին, տղաքերքի միջերը պիտի խառնուին հոգեվարքի հոնդիւններու: Վաղը առաւօտ՝ բոլորս ալ պիտի արթնանք: Ու կարծեմ թէ հարկ չըկայ շարունակել, որովհետեւ կ'ըմբռնէմ անշուշտ թէ բոլորս ալ պիտի վերսկսինք նոյն բաները՝ նոյն տենդով կամ ձանձրոյթով: Ես պիտի արբիմ, դուն պիտի ընթրես ու միւսը պիտի պառկի իր կնոջ հետ երբ մանուկներուն ձայները ընկղմին լուսեան մէջ: Ժամացոյցը թէ՛ -թիֆ-թաֆ, թիֆ-թաֆ, թիֆ-թաֆ, թիֆ-թաֆ, հին երգ է այս, հին եղանակ, թիֆ-թաֆ: Օ՛ կլափոգ փակէ՛, խնդրե՛մ, կլափոգ...

* Կարելի է հետեւեալը գրել՝ իմ եւ ընկերոջս մասին, որուն հետ սրճարան գացիմք այսօր: Ու ասիկա մեծապէս տըխուր բան մըն է:

-Երկու ընկերներ էին, երկու աղքատ մարդիկ: Կը նըստէին՝ իրիկունները, սրճարանի մը յառաջամասը, երկու սուրճի սկահակներու առջեւ ու կը սկսէին խօսիլ մարդոց, դէպքերու, բնագանցական հարցերու ու նաեւ հանոյքներու մասին՝ որ չէին ճանչցած եւ որ կարելի է գնել միայն դրամով: Յետոյ երբ յոգնէին, սեղանին վրայ կը դնէին բոլոր կարելի հարցումները, որ պատասխանի կը սպասեն եւ սակայն երբեք չէին պատասխաներ: Ծուլութեամբ ու երկչոտութեամբ կը դեգերէին բոլոր հարցերուն շուրջ ու կանգ կ'առնէին գեղեցիկ նախադասութիւններու առջեւ՝ որոնցմով կը սպաննէին վայրկեանին գեղեցկութիւնը:

Երկու ընկերներ էին, երկու աղքատ մարդիկ: Կարելորդ այն չէ, թէ ամուսնացած էին, թէ ոչ, այլ ա՛յն՝ որ կիններու ներկայութեան մէկը երկչոտ էր ու տժգոյն ու միւսը՝ յանդուգրն, յաղթական ու գրեթէ շնական: Երկուքն ալ պարտուած էին կեանքէն՝ ո՛չ թէ անոր համար, որ աղքատ էին, այլ որովհետեւ երբեք հաշտ չէին ապրած իրենց գաղափարներուն հետ: Երկու ընկերներ էին, երկու աղքատ մարդիկ: Երբ նստէին իրարու

հով՝ երջանիկ էին իրենց աղփատութեամբ: Սեւ սուրն մը կը բաւէր, որ անոնց երեւակայութիւնը նամբայ ելլէր ու ծխախտտին ծուխին մէջէն այդ նամբորդութիւնը բացառիկ ու անկարելի բան մըն էր: Երկու ընկերներ էին, երկու աղփատ «մտաւորական»ներ, մէկը՝ վրիպած, միւսը՝ վրիպելու վրայ: Հասարակաց ատելութեամբ մը կ'ատէին դիւրին յաղթանակները, ածան յաջողութիւններն ու յաղթական մարդիկը: Եւ իրենց դառնութիւնը՝ գեղեցիկ ու դատարկ նախադասութիւններով, ժամերով կ'որոնային սուրնի երկու սկահակներու առջեւ: Երկու ընկերներ էին, ըսի, երկու աղփատ ու վրիպած մտաւորականներ: Մէկը կ'ըսէր՝

-Կարելորդ ամէն ատեն նոյնը մնալը չէ: Ինչպէ՞ս կարելի է անընդհատ նոյնը մնալ: Մեր շուրջը շատ մը հին փիլիսոփայական շէնքեր կը փլին, բարոյական հասկացողութիւններ կը մաշին: Նորեր ծնունդ կ'առնեն: Մտածէ՛ փոփոխութեան վրայ՝ որ քանի մը տարիներէ ի վեր տեղի կ'ունենայ մարդկային գործունէութեան ասպարէզներուն մէջ: Իսկ մենք կ'ուզենք կառչիլ հին գաղափարներու: Մենք մեզ բանտարկել խարխուլ շէնքերու մէջ:

-Կրնա՞ս երթալ մտածումիդ մինչեւ ծայրը ու ըսել, թէ ապրիլը բարոյական է ու նպատակ: Կարելորդ ինչպէս ապրիլը չէ, այլ ապրիլը՝ ինչպէս որ ալ ըլլայ: Եթէ ատիկա ըսելու ֆաշիստներն ունենաս՝ կը հասկնամ քեզ:

-Տարօրինակ ես,- կը յարէր առաջին խօսողը,- անընդհատ ընթացքի մէջ եղած գաղափարները կը տանիս երեւակայութեամբ իրենց վախճանին: Այդ պարտքը թո՛ղ կեանքը ընէ: Երբեմն կարելի է կէս նամբան կանգ առնել: Միշտ անհրաժեշտ չէ երկու թշնամի կողմեր իրարու դէմ հանել...

Երկու ընկերներ էին, երկու աղփատ ու վրիպած մտաւորականներ, որ կը խօսէին այսպէս, իրիկունները՝ սրնարանի մը յառաջամասը նստած, երկու սուրնի սկահակներու առջեւ: Մինչդեռ շուրջը՝ ժամը կը յառաջանար ու մարդիկ կ'երթային դիւրին ուրախութիւններու: Անոնք բազմաթիւ անգամներ դեռ պիտի խօսին այսպէս, բազմաթիւ իրիկուններու ընթացքին, մինչեւ որ խօսիլն ալ դառնայ անելորդ:

Յանկարծ գայրացաւ այս բոլոր յոգնած, դասալիք ու հիւանդ խորհրդածութիւններէն ու գնաց պատուհանին առջեւ: Տօթ, գէշ յետմիջօրէ էր: Ամբողջ ֆաղաքը կը յօրանէր ձանձրոյթէ: Մտքերը կը ֆաշէին թեզանիքներէն: Զղայնութեամբ վե-

րադարձաւ սեղանին առջեւ ու բարկութիւնը հեղուց թղթին վրայ:

-Կեանքդ անյետաճելի պէտք ունի արմատական, մեծ փոփոխութեանց, սրբագրութիւններու եւ վերագնահատութեան: Դեռ քանի՞ անգամ պէտք է կրկնել ասիկա, որպէսզի նեղէ գանկիդ տուփը ու վերջապէս տեղաւորուի ներսը: Հասած ես կէտի մը, ուրտեղէն պէտք է ծռիլ, վնասկանօրէ՛ն ու փոխել նամբադ: Ու այլեւս ո՛չ մէկ յապաղում, դադար ներելի չեն: Հին սէրերու շուրջ դեգերի՛լ, սլտալ, մտքով՝ վերադառնալ հին բարեկամութեանց, ահա՛ թէ ինչ կ'ընես ամիսներէ ի վեր: Մինչդեռ հարկ է տարբեր մարդ ըլլալ, այլակերպուիլ: Օգտագործել այն բոլոր կարելիութիւնները, որ կը կրես, բանտարկեալն ես ահա՛ տարիներէ ի վեր...

Պէտք է վերանորոգուիս, տղա՛ս, թօթուես այս գէշ տարիներուն բեռը, նոր մարդ ըլլաս: Դեռ ուշ չէ, դեռ կարելի է այս փոփոխութիւնը: Միայն թէ՛ լաւ պնդէ գօտիդ, գօրակոչի կանչէ բոլոր ատելութիւններդ, եղի՛ր ֆաշ ու վնասար մտի՛ր կոռի: Յաղթէ՛...

Բարձրացաւ ու վերսկսաւ նսնել ու միճակութեան անվերադարձ, այլ անմխիթար զգացում մը պատեց հոգին: Կարծես անջատուած, առանձնացած էր մարդկութեան մնացեալ մասէն: Քաղաքը՝ կարծես իջած էր համերաշխութիւնը իր հետ: Այս զգացումը երբեք այսքան ուժգնութեամբ չէր նանչցած ու երբեք այսքան գօրութեամբ չէր զգացած մարդոց հետ, եղբայրանալու, իր ցաւը ուրիշին հետ կիսելու պէտքը:

-Բո՛ւհ,- ըսաւ մտովի,- բոլորին պէս տկար ու թշուառ մարդ մըն եմ ու պէտք ունիմ յենարանի, կանգուն մնալու համար...

Զայն մը հոգիին խորէն կ'առարկէր սակայն,- Եթէ առանձին ես՝ որովհետեւ ուզեցիր ըլլալ: Կը բաւէ որ գլխարկդ դնես ու փողոց ելլես, ընկեր մը գտնելու համար: Մնաց որ, մարդ անընդհատ առանձին է: Սիրոյ թէ պայքարի ժամուն՝ միճակ է միշտ: Մեծ պատրանք մըն է հակառակը կարծել...

Պատրանք թէ ոչ՝ ինք կը տառապէր այսօր առանձնութենէ: Ու տօթը այնքան յուսահատական էր, որ ֆաշիստներն չուներ փողոց ելլելու: Միամորձը լեցուց, վառեց ու ծալապատիկ նստաւ բազմոցին վրայ: Յանկարծ ակնարկը ինկաւ Հելլայի վերջին նամակին վրայ: Բացաւ ու սկսաւ կարդալ: Ու քանի՞ կը կարդար՝ զղայնութիւնը ա՛յնքան կը մեծնար: Կ'ըսէր՝

«Կը յիշե՞ս, օր մը ըսի քեզի, որ ի՛նչ ալ պատահի մեր միջեւ, ո՛ւր ալ ըլլամ՝ եթէ կանչես, պիտի գամ, որովհետեւ կը սիրեմ քեզ: Տարածութիւնը, որ կայ մեր միջեւ՝ ահա աւելի կը զօրացնէ այդ զգացումը: Բազմաթիւ պատիկ բաներ կը յիշեմ ու ամէն յիշատակ՝ կարօտս աւելի ուժգին ու արթուն կ'ընծայէ: Հիմա կը զգամ, որ սկիզբը, ամբողջ ամիսներ՝ չէի սիրեր քեզ: Սերտ ու շատ մեծ բարեկամութիւն մըն էր, մինչ այդ անծանօթ էի, որ սիրոյ պատրանքը կու տար: Յետոյ է, որ իրապէս, սկսայ սիրել այն գէշ տղան, որ սկսած էիր ըլլալ ու կը շարունակես մնալ: Մօտաւորապէս կը զգամ հոգիիդ խորը կատարուածը, բայց չեմ ըմբռնիր ինձ հանդէպ տածած թշնամական զգացումդ: Ցաւով կը գործածեմ այս բառը ու կրնար հաւատալ, որ կ'ամչնամ հոգիիս տկարութեան համար: Բայց չեմ կրնար հաշտուիլ այն մտքին հետ, որ այդքան անտարբեր կրնաս ըլլալ դէպի գիս: Յետոյ, հաւատացած եմ, որ գիս չես մոռցած: Բաւական կը նանչնամ քեզ ու կը զգամ, որ կը տառապիս: Ու շատ կը զոջամ, հոգ եղած ատենս, քիչ մը աւելի խոնարհ եղած չըլլալուս համար, սիրելի՛ս...»

«Ինչո՞ւ համար գրած բազմաթիւ նամակներուս չպատասխանելու տխուր ֆաջութիւնը ունիս: Որպէս երկար ամիսներու մտերիմ ընկեր՝ գէթ արժանի էի երկտողի մը: Չես կրնար երեւակայել, թէ որքան դժուար է ինձ համար ու վիրաւորական այդ յամառ լռութիւնդ: Ու երբեք չէի կարծեր, որ ընդունակ ես գիս նման նուաստ դիրքի մը մէջ դնելու:

«Ակնկառոյց՝ նամակ մը կը սպասեմ քեզմէ ու եթէ չըստանամ շատ պիտի տխրիմ: Գիտես որ արժանի չեմ՝ այս լռութեան: Ու արդար չէ, որ աշխարհին եւ կամ ինքզինքիդ դէմ ունեցած վրէժդ՝ լուծես ինձմէ: Որովհետեւ իրապէս անգութ բան մըն է ատիկա:

«Չեմ գիտեր, թէ այս նամակը ի՛նչ տպաւորութիւն պիտի ձգէ վրայդ: Սովորութիւն չունենալով նման բաներ գրելու՝ կը զգամ, որ ձախաւեր եղայ, բայց չեմ ցաւիր, որովհետեւ հոգիս ազատեցաւ մեծ բեռէ մը: Պարտաւոր էի ըսել այս բոլորը քեզ: Ժամ մը գէթ հրաժարիլ հպարտութենէս ու մտիկ ընել ներքին ձայնիս:

«Կը ձանձրանամ ու տխուր եմ: Հայրս կը յանդիմանէ գիս ատոր համար ու մայրս կ'ըսէ, որ «օտարախտ» է բռնուած եմ, իսկ եղբայրս կը ծաղրէ գիս: Անցեալ օր, հօրս ներկայութեան կ'ըսէր, - Ահա՛ թէ ինչ ըսել է այսպէս պատիկ աղջիկները

առանձին օտար երկիր դրկել: Վերադառնալէն ի վեր՝ դէմքին վրայ ժպիտ չտեսանք: Աչքը ետեւն է: Եթէ իրաւունքներդ ինձ փոխանցես, հայրի՛կ, կը տեսնես թէ ինչպէս կը բժշկեմ գին-քը...»:

«Յետոյ կարգ մը տղաքներ կը դեգերին շուրջս: Մէկը մանաւանդ՝ որ կը վայելէ մերիններուն համակրանքը: Բոլորն ալ կը յուսահատեցնեն զիս սակայն: Ընթերցումը միակ ուրախութիւնս է, ու դաշնակը՝ միակ ընկերս: Տիրութեան ժամերուն՝ կը նուագեմ հոդ սորված պատիկ եղանակներէս մէկը, կը յիշեմ քեզ, մեր խօսակցութիւնները ու քիչ մը կ'ուրախանամ:

«Եթէ լաւ տղայ ըլլաս՝ քանի մը գրքեր կը դրկես ինձ: Ու այն լուսանկարդ, որ ես շատ կը սիրէի եւ որուն վրայ այնքան երիտասարդ ես, կը յիշե՞ս, տիւանիդ վրայ, երբ տրամադրութիւնդ լաւ ըլլար, գուլիս կ'առնէիր փերուդ մէջ ու աչքերուս խորը նայելով կ'ըսէիր, - Ե՛ր, ե՛ր, ի՛նչ անուշ աղջիկ մըն ես, Հելլա՛... իսկ ես՝ կը պատասխանէի, - Բի՛ր, բի՛ր, ի՛նչ գէշ տղայ մըն է այս տղան, Աշո՛տ...: Ու երկուքս ալ երջանիկ՝ կը ժպտէինք: Յետոյ երբ գիս համբուրել ուզէիր, կ'ըսէիր, - Բերնիդ անկիւնը ի՛նչ կայ, Հելլա՛, նայի՛մ... Բան մըն ալ չէր ըլլար անշուշտ: Ու ես գիտէի ինչ կ'ուզես, - Ե՛ր, ե՛ր, ե՛ր...»

Երկնցաւ կոնակին վրայ ու աչքերը փակեց: Ու յիշատակները մէկիկ-մէկիկ արթնցան իրենց թեթեւ ֆունէն ու եկան, դիզուեցան իրարու վրայ: - Այսուհանդերձ, շատ լաւ աղջիկ մըն էր, մտածեց. - անպայման արժանի էր ամբողջական նուիրումի եւ սիրոյ: Ու եթէ հայ ըլլա՛ր...: Այս վերջին խորհրդածութիւնը պոտորեց հոգին ու մէկէն՝ անգթութեան, ուրիշը նըւաստացնելու մեծ պահանջ մը զգաց: Բարձրացաւ ու իր մեծ ու ջղային գրեթով գրեց.

«Պատի՛կ սիրելի, կրնաս հաւատալ, որ քեզ տակաւին քիչ մը սիրելուս ու վրայ գթալուս համար է, որ երկար ատենէ չեմ գրեր: Հասարակ վրէժխնդրութիւնը՝ հասարակ մարդոց յատուկ կերակուր է: Ես այս վերջին հպարտութիւնը ունիմ՝ ուրիշ կերակուրներով սնանելու: Եւ ուրիշ նամբաներու նամբորդ ըլլալու: Ի՛նչ իմաստ ունի հիմա, երբ ամէն բան վերջացած է քեզի եւ ինձի համար, անգութ բաներ գրելը: Նամակներդ թող մնան ուրեմն՝ իրենց լիութիւն թշուառութեանը մէջ ու մի՛ յուսար, որ պարզ ու ֆնուշ բառեր կրնամ գրել քեզի:

«Եթէ գոնէ շատ գեղեցիկ ըլլայիր: Կը յիշե՞ս, գլխաւոր հրապարակին վրայ բացուող սրճարանը: Երբեմն, իրիկունները՝

ընկերներով կը նստինք, սպասելով, որ ննջելու ժամը հասնի, առաւօտը մերձենայ: Մեր տրտմութիւնը կը կերակրենք անիմաստ էջերով ու փցուն նախադասութիւններով: Այդտեղ է, որ շատ յանախ կը հանդիպիմ, երեկոյեան ուշ ժամերուն, երիտասարդ գերման աղջկան մը: Երբ նստած ըլլայ՝ կը կարծես, թէ շատ գեղեցիկ է: Կեռ ու մութ յօնքեր ունի, վարսերը կիսալոյսին մէջ՝ տաք ստուեր մը կը թողուն, ողորկ ու ջերմ դէմքին վրայ: Մէկ աչքը փիչ մը աւելի մութ է ու պղտոր, քան միւսը ու լոյսին դէմ պաշտպանուած է միակնոցով: Երբ ոտքի կը կենայ սակայն՝ կ'ուզես ըսել որ նստի: Կոնքը լայն է, երակները հաստ են ու մարմնին վարի մասը անշուշտ լաւ կը յարմարի տղաբերքի: Այդ աղջիկը անընդհատ քեզ կը յիշեցնէ, պզտիկ սիրելի ու անընդհատ կ'ուզեմ պոռայ, իր ներկայութեան, որ ուղղակի անտանելի են այն աղջիկները, որ հագիւ սիրուն են ու կը կարծեն մեծապէս գեղեցիկ ըլլալ:

«Պէտք է խոստովանիլ, որ մենք եւս յանցաւոր ենք. կը յիշես անշուշտ այս նախադասութիւնը, - Կարելորութիւնը, Նախադասութիւնը, թող նայուածքիդ մէջ ըլլայ եւ ո՛չ թէ նայած իրիդ... Մինչդեռ մենք անընդհատ կը մոռնանք, որ սիրոյ առարկան չէ կարելորդը, հապա մեր սիրելու ընդունակութիւնը: Մանուկներու պէս պէտք է անգութ ըլլալ ու մեր ծարաւը յագեցնել յետոյ փողոց նետել խաղալիքը: Ահա՛ թէ ինչ պէտք է ընել: Ու ասիկա շատ լրջութամբ կ'ըսեմ:

«Ամբան տօթը անտանելի է, պզտիկ սիրելի՛: Գիտե՞ս, կը յիշե՞ս այն ծառուղին, ուր առաջին անգամ ըլլալով վիրաւորեցի քեզ ու դուն՝ խոնկեցար ինձմէ: Երէկ կ'անցնէի հոնկէ: Սօսիներու բունները կարծես թէ մերկ էին ու կնոջ մարմնի պէս ողորկ, սպիտակ: Տաքէն՝ բունին կեղեւները կը թափին, ծառերը կարծես թէ մորթ կը փոխեն: Ու միայն մենք ենք, որ ամբողջ կեանքի մը ընթացքին կը կրենք նոյն գորշ ու անմաքուր պատեանը:

«Մեծ ձանձրոյթ մը կայ ֆաղափն վրայ ու ամէն բան կարծես թէ կը հիննայ: Ամէն մարդ գացած է արձակուրդի: Մեր տան դռնապանուհին, այս փողոցի հացագործը, սափրիչը՝ որ մագերդ կը յարգարէր ու նոյնիսկ իմ բանուոր ընկերներէս մէկ քանին: Գարնան գիշերները, մեր փողոցը կատուներ կային, հիմա կորսուած են, մարդ չի գիտեր ո՞րն են: Կարծես թէ կատուներն անգամ գացած են արձակուրդի ու միայն մենք ենք, որ հոս ենք երկու դրամի կտոր չարժող «մտաւորական-

ներ»: Ասիկա շատ գուարճալի է, չէ՞, պզտիկ սիրելի՛...: Ու այս բոլորը կարծես թէ չէին բաւեր, պէտք է նաեւ քեզի նամակ գրել: Փողոցի երգիչ մը՝ տխուր ու միօրինակ երգ մը կ'երգէ դուրսը - Ա՛ն ասիկա, ծերունկ, ու կլափո փակէ՛, խնդրե՛մ, կլափո...:

«Յ.Գ.- Գանի որ խնդրած ես, առաջին առթիւ, երբ ազատիմ ծուլութենէս, կը դրկեմ ուզած լուսանկարդ եւ քանի մը գրքեր»:

Դրաւ ծրարի մը մէջ ու հասցեագրեց: Ու այնքան: Մեծ էր անոր սիրտը խոցելու ցանկութիւնը, որ առանց թիկնոցի ու անապարանքով իջաւ սանդուխներէն ու փողոցի անկիւնի նամակատուփին մէջ ձգեց գայն: Յետոյ սուլելէն ու մանր ֆայլերով վերադարձաւ: Նոյն թունաւոր վիշտը որովայնին մէջ ու մեծապէս խոնջ, ինկաւ բազմոցին վրայ ու մէկէն գոջաց գրած անգութ ու անիմաստ նամակին համար: Հիմա այլեւս չէր գիտեր, թէ ինչո՞ւ ըրած էր այդ բանը: Նախադասութիւններ, որ արդէն ուղղուած էին անվերադարձ կերպով իրենց նակատագրին, հեզունութեամբ կը վերադառնային ու կը սուլէին ականջին տակ: Ու անյագուրդ ծարաւով մը կրկին կարդաց անոր բոլոր նամակները: Ու քանի՛ կը յառաջանար ընթերցումի մէջ՝ ա՛յնքան կ'ամչնար գործած անարգ արարքին համար: Յուզումը սեղմեց կոկորդը ու աչքերը թրջեցան: - Հելլա՛, Հելլա՛, գիտե՛ս որ գէշ բնաւորութեամբ տղայ մըն եմ: Կը ներես, սիրելի՛ս...:

Նստաւ գրասեղանին առջեւ ու գրեց բացիկի մը վրայ՝ «Քիչ առաջ նամակ մը գրեցի քեզ, կը խնդրեմ, որ գայն համարես չեղեալ: Կարծեմ այս բացիկը եւ գայն միասին պիտի ստանաս: Այդ պարագային փնացուր կամ վերադարձուր ինձ՝ առանց կարգալու: Երկու օր յետոյ ֆաղափէս պիտի մեկնիմ: Ուզած լուսանկարդ եւ գրքերը՝ մեկնելէ առաջ՝ կը դրկեմ: Ստացած եմ բոլոր նամակներդ: Կը ներես, որ աւելի եկար գրելու տրամադրութիւն ու կարողութիւն չունիմ: Կրնամ ըսել սակայն, որ մեկնումէդ ի վեր ո՛չ մէկ փոփոխութիւն կայ կեանքիս մէջ: Անընդհատ նոյն պատմութիւնը»:

(Շար. 8)

ՎԱԶԳԵՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Դ.

Նստած եմ մերկութեան եւ պարի խոր թաւուտ
 յիշեցնող ակումբում,
 տեսնում եմ բեմ ելնող տխուր շարքեր,
 էրոթիք իրողութիւններ են սրանք, ճիշ եւ շարժում,
 այս մէկը երգում է վարդի թլփատումը
 եւ յետոյքի վրայ վարդ պահում,
 միւսը քայլում է ոտնահետքերով անյայտ էրոսի
 եւ կրքի հիրոկլիֆի հետ գօտեմարտում,
 իսկ պատի խորքում, ուր անյայտ
 խմիչքներ են վաճառում՝ զինուորի պէս
 գօտեկապում շշերում,
 էրոսի դէմքը փայլում է համակ երջանկութիւն:

Ե.

Ահա իսպանացի Ռիքարտոյի աղջիկը,
 որ պարեց իմ առաջ, քերծէ շան գլխի պէս
 երկարուկ իր ստիւնքը
 քսելով դէմքիս, որպէս յիշատակ,
 ահա Շոնի աղջիկը, ծանր ազդրերի մէջ
 կանացիութեան նուշը սեղմած
 շարժում է աթոռների միջով դէպի բեմահարթակ,
 իսկ հայրը քշում է իր ծանր բեռնատարը դէպի Միտ-Ուէսթ,
 եւ տափաստանի մաքուր գծերի մէջ
 յանկարծ տեսնում աղջկայ պեպէնտ դէմքը,
 որ հիմա գալարում է պտտածողն ի վեր,
 ցոյց տալով հոյակապ մարմնի ընդերքը,
 եւ յիշեցնում մի պահ մարմնի կտրուածքով
 Ամերիկայի համաշ տեղանքը:

Եւ նոր խումբը սեւամորթ կանանց
 յանկարծ երգում է հեկտիկ իր ձայնով,
 ասես նախիր է քշում սաֆարիներով,
 երգում են իրենց սեւաշ տխրութիւնը,
 զմոտելով գիշերուայ անթարթ կրակներում,
 կիսակարմիր մութ ծխահամ դահլիճը

նման է կատաղած ցլի աչքի,
 որ անմեղ ոգի է հետապնդում,
 պոզահարելու խաւար դաժանութեամբ:

Եւ կենսահիւթը գեղեցիկ մարմինների
 աւելի ուժեղ էր, քան կրակը,
 եւ պատի մէջ կծկումս կինը
 յանկարծ ցոյց տուեց իր ծլիկը,
 կանացիութեան կատարեալ ծաղիկը,
 որ մողէսի պէս դուրս սահեց
 ազդրերի արանքում սեղմումս նշից
 եւ օձի երկիւղ լեզուի պէս զննեց աշխարհը,
 համբուրելով տղամարդկանց շմորած աչքերը:

Եւ ուգանդացի մի աղջիկ, ածխից էլ սեւ,
 ներս սահելով պատերի շիկացած անապատով,
 բացեց քնքշանքի իր ծաղիկը,
 որ իսկոյն վերածուեց ճեղքումս ավոքատոյի՝
 կարմիր եւ կթոտ սերմերով լեցուն,
 որ նաեւ հրաւեր էր դէպի երկիր:
 Գեղեցիկ յետոյքով, ասիական շեղաշուի այն դէմքը
 յիշեցնում է որջից հանումս յովազի,
 որի շէկ քարափները տոփում են հիմա
 սեռական գեղձի պէս կլոր արեւներից,
 որ կլոր գծում է կարծես իր մարմնի ընթացքը:

Զ.

Եւ ագահօրէն այս ամէնը կլլող ամբոխը
 մաքրուեց սոսկահայ զղջանքից—ցաւից,
 բաժանումներից, մուրհակներից,
 անցեալ տարուայ ուժեղ ցրտից,
 հիւանդութեան կարծրացող ալիքից,
 եւ Շեսիքան, Էմիլին, Լուիզան եւ միւսը
 մի անգամ էլ մերկացրին իրենց քնքուշ աստուածային նուշը,
 եւ նայողները դարձան փոքրիկ աստուածներ,
 որ ամուր փաթաթումս իրենց կրքի կնգուղում
 մի պահ անմահացան դաժան ժամանակում:

Եւ ամէն պարող իր խաչն էր կրում,
 այն մէկը՝ աղքատ ընտանիքից,
 հպարտ մարմին ունի, ճերմակ ատամնաշար,
 պարում է ասես ընկնող գիսաստղ,
 գուցէ վերջին անգամ:

մինչեւ որ ինձ ներս կանչեն,
այստեղ եմ, որովհետեւ սա ամենաազնի տեղն է,
որտեղ չես կեղծի, մերկ յետոյքիդ վրայ
բարոյականութեան եւ դեմոկրատիայի
մզլոտած նկարը կայցնելով
որպէս Քսաներորդ դարի թզատերեւ.
այստեղ եմ, որովհետեւ Թուրքիան
բռնութեան մէջ հազար անգամ աւելի մերկ է,
բայց ոչ ոք չի ասում նրան՝
սեւ քամակդ ծածկիր,
առանց այն էլ շատ արիւն կայ մոռութիդ վրայ,
մի քիչ ամօթ ունեցիր, մի՛ ժպտայ
եւ դեմոկրատիայի անունից խօսող
«Դեմոկրատ» պոռնկորդու ձեռքը թո՛ղ.
առանց այն էլ աշխարհը լեցուն է արուամուկներով:
Այստեղ եմ, որովհետեւ մարմինը կորցրել է մարմնի հրաշքը,
այստեղ եմ, որովհետեւ մարմինս թունաւորուած է նախագահի
օքսիտացնող ճառով,
այստեղ եմ, որովհետեւ ատելութեամբ լցուած ժամերը
մնացին դրսում,
եւ թոքերս շնչում են բնականոն,
չնայած՝ գիշերային ակումբում ինչքան ուզես՝
ծուխ եւ թոյն,
այստեղ եմ, որովհետեւ կարօտ եմ կեանքը արթուն պահող
մեծ կրքերի,
որ տամտամ են խիում ցանկութեան պիրկ փորի վրայ,
այստեղ եմ, որովհետեւ մեղութիւնը
կորպորացիաների հսկայ շէնքերից ձգտող
երկար ստուերների խորքում ձեւացնում է,
թէ մարդ արարածին չի ճանաչում,
այստեղ եմ, որովհետեւ գեղեցիկը
պէտք է փրկի աշխարհը,
եթէ անգամ նա մերկ է, անպաշտպան,
եւ բաւարարում է սայլակում նստած
հաշմանդամի կրքերը անհրական.
եւ վերջապէս այստեղ եմ, որ հասկանամ՝
ինչո՞ւ եմ այստեղ, կա՞յ մէկը որ ցոյց տայ
ճիշտ ուղիս:

Իսկ մինչ այդ պարողները փոխուեցին նորերով
եւ դղիրը ճագի՝ դարձաւ պատուանդան,

մարմինները սլացան պտտածողն ի վեր
ինչպէս Հուրոնի թափառող օձաձուկ,
օղը լեցուեց նորից անորոշ ցանկութեամբ:

Ժ.

Թոփիլէս պատերի մերկ մեղեդիներ,
տխուր, Լիանայի պէս գալարուն մարմիններ,
որ մագլցում են կրքի պարանն ի վեր,
հովհարի պէս սփռելով ընդերքը մարմնի,
պարերը կրկնապատկում են հայելիների խորքում,
աղջկայ մարմինը արտացոլանքի մէջ
անմահանում էր որպէս սրբի մարմին,
բայց օտարացած էր ամէն ինչ ոտից-գլուխ,
հայեացքների գողգոթան վերջ չունի:

Եւ այս պարը քրջոտ տիեզերքի անկիւնում,
եւ խաւար փողոցներ դրսում եւ ներսում,
եւ այս մեղեդին՝ կորստի հեռացման,
ուր ամէն ոք պարում է պարը վերջնական,
եւ ողջ խումբը նորից բեմի սարահարթում
եւ վերից լսող ձայնը՝ հրաման,
շարժուէք, մինչեւ որ պարը ամրանայ,
եւ փողոցներից չկայ ոչ մի յոյս,
եւ Տիթորյթն ինքը թաւ ունքերի տակ
թաղամաս ունի եւ վերջին կտակ:

ԺԱ.

Երբ մենք դուրս եկանք ընկերոջս հետ,
դրսում, գիշերային ակումբի կողքին
շները հոտոտում էին կարմիր, ծանր ջրանիւի մօտ
ինչ-որ բան,
օդում սաւառնում էին Առաջընթացքը, Վարչակարգը,
մեկապելիսի ածխահամ օղը, թերթերը,
վերջին քաղաքական ցոյցի մեծատառ կոչերը,
Պոսնիան, Ղարաբաղի արիւնոտ լուրերը,
որոնց բերանը փակել էին պետական ձեռքերի
համատարած անտառը,

սպիտակագգեստ ստնտուները աղիսէ շէնքերի առջեւով
տանում էի՞ն մանկական սայլակներ,
ժամանակից շուտ ծնուած

մեծագույն երեխաներով ծանրաբեռն,
որ յետոյ տասնամեակներ անց, պիտի պէտք գային
պետական մեքենայի վառ ներկուած թափանցիկ
ուժ տալու համար,
գրպանումս՝ հարիւր տոլարանոցը սկսեց պարել իր հրճուանքը,
եթէ փոխուէր ուրբոյ՝ ահա թէ ի՛նչ,
ահա թէ ինչո՛ւ թղթերն են դեկավարում աշխարհը,
իսկ ես տե՛նչում էի հանդիպել մէկին,
որ վաղուց սպասում էր ինձ եւ սէր ունէր

երեք միլիոնից բացի (միայն երե՞ք):
Եւ մարդկային դէմքերը արագացրին իրենց վազքը
մթնող քաղաքի մտազբաղ մեքենաների հետ ձեռք ձեռքի տուած,
մանր ձիւնը սկսեց իր պատումը,
կտրուկ եւ սառը, մարմինը գտաւ իր կոյր
սովորոյթի արահետը.
շարժուի՛ր, կեանքը սկսում է յաճախակի դառնալ
ինչպէս սրտի խփոց՝

ծնունդ լոյսը փխրուն է, անհրակամ,
Հայաստանը դառնում է երազ եւ մշուշ,
եւ աւելի կարծր՝ քան ներկան,
եւ պարում են յանկարծ խանութների մանեկեաները
եւ ժայթքում են հողից գոլորշի ու ցուրտ,
յետոյ՝ միապաղաղ ոսկերչական խանութների շարքեր,
այս մարդը գոհն է իր ազահութեան
եւ վերջին մոհիկանը իր կրքի:

Ինչպէս նորածնի տարօրինակ կնճիո՛
Տիթոյթը սեղմում է թոպէ առ թոպէ,
պէթոնի պէս սեղմում չորս կողմից,
եւ մարդու մարմինը՝ նոր իրականութիւն,
որից հեռացել ենք շատ վաղուց:

Օգոստոս, 1993

ԱՐՏԵՄ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Վ Ի Գ Է Ն

Վ Ր Է Ժ

Իմ անունն է Գրետա, ազգանունս՝ Աւետիսեան:
Վիգէն Սամուէլի Գրիգորեանը ծնուել է 1951 թ.ին, Լեռնային
Ղարաբաղի, Հադրութի շրջանի, Մելիքանիստ Տող գիւղում: 1958-60
թ.թ.ին սովորել եւ աւարտել է Տող գիւղի միջնակարգ դպրոցը,
այնուհետեւ ընդունուել է Բաքուի հայկական պետական մանկավար-
ժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը: 1982 թ.ին
աշխատանքի է նշանակուել Ադրբեջանի հայաբնակ Վարդաշէն քաղա-
քի թիւ 1 դպրոցում, որպէս մայրենի լեզուի ուսուցիչ: Երեք ա-
միս աշխատելուց յետոյ ծառայել է նախկին Խորհրդային բանակի
շարքերում: Զօրացրուել է 1973 թ.ին եւ աշխատանքի է նշանակուել
Տող գիւղում: Մէկ տարի աշխատելուց յետոյ, Հադրութի շրջանի
Մոխրենիսի դպրոցում նշանակուել է նախ որպէս փոխ տնօրէն,
իսկ 1974ից որպէս տնօրէն:

Նա իր ամբողջ գիտակից կեանքը նուիրաբերել է նորից Տողի
միջնակարգ դպրոցը՝ փոխ տնօրէնի պաշտօնով: Նա վարել է մի
քանի պաշտօններ, բայց ես ուզում եմ ասել, որ նրա ամբողջ,
այսպէս ասած, գիտակից կեանքը սկսուել է 1987 թ.ի աշնանից,
երբ շփման մէջ էր Ստեփանակերտում գտնուող ընկերների հետ:

Դեռ նոր էր ծլարձակում ազգային-ազատագրական պայքարը:
1988 թ.ի Յունուարի 6ին՝ նախկին, առաջին պրեզիդենտ, լուսահոգի
Արթուր Մկրտչեանի եւ միւսների հետ Վիգէնը անձամբ Հադրութի
շրջանից պատգամաւորներ է ուղարկել, ժողովրդական պատգամա-
ւորներ ընտրուած ներքին կարգով, անձամբ ուղեկցել է Երեւան,
այնտեղից էլ ճանապարհել է Մոսկուա: Նրանք հանդիպել են համայ-
նավարական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ Դեմի-
չեւի հետ, Ղարաբաղը Հայաստանին միացնելու հարցով: Այստեղ
ստանալով կցկտուր տեղեկութիւններ, որ արգիւնքը լաւ կը լինի,



ՎԻԳԷՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

յետ են վերադարձել: Սկսուել է մի ծաւալուն, եռանդուն աշխատանք, Ղարաբաղի այս հարցը, որ մեր պատմութեան մէջ կնճիռ էր, 70ամեայ մի ցաւ էր, լուծելու համար:

1988ի Փետրուարի 12ին Հաղրութում սկսուեց մի չտեսնուած, մեզ համար խորթ, խորհրդային կարգերի համար անտեսանելի շարժում: Աղբբեջանի կենտրոնական կոմիտէից ուղարկուեցին մարդիկ Լեռնային Ղարաբաղ, որպէսզի ծաւալուած ազգային-աղատադրական շարժումը կարողանան տեղում խեղդել:

Հաղրութում այսպէս կոչուած չակերտաւոր կոմունիստական մի ժողով հրաւիրեցին, որտեղ ազգային հարցը «փայլուն» կերպով ներկայացուում էր Աղբբեջանի կողմից, Ղարաբաղի նկատմամբ տարած «հոգատարութիւնը»: Վիգէնը հրաւիրուած էր մասնակցելու այդ ժողովին: Նա ժողովից յետոյ տուն չվերադարձաւ, ինչպէս որոշ ընկերներ: Վիգէնը լինելով եռանդուն կազմակերպիչ, հաւաքուել են գործկոմի խորհրդի շէնքում եւ որոշել են ստորագրել տալ ժողովրդի կողմից ընդունուած դեկլարացիան, որով պէտք է Ղարաբաղը միանար Հայաստանին:

Ի դէպ, Հաղրութը առաջինն էր այդ մարզի հինգ շրջաններից, որոնք 1988 թ.ի Փետրուարի 12ին պահանջեցին Ղարաբաղը միացնել Հայաստանին:

Հաղրութում ամէն տարի տօնուում է Փետրուարի 12ը: Այս տարի Փետրուար 12ին մեր դպրոցի կիսաշուք շէնքում, որ վերաւորուած է ականների ու արկերի հարուածներից, ինչպէս մեր սրտերը, տօնուեց հնգամեայ յոբելեանը: Հաւաքուել էինք անշուք դասասենեակներից մէկում: Գրատախտակի վերեւում փակցուած էր Եռագոյն դրօշը, Դաշնակցութեան դրօշը՝ «Մահ կամ ազատութիւն» դրուածքներով, Արթուր Մկրտչեանի լուսանկարը, իսկ այս ամէնի տակ ելոյթ ունեցան գիւղի գումարտակի շաբի պետ Արմէնզոն եւ Վիգէնը:

Դպրոցական երգչախումբը «Հայր մեր»ով սկսեց այս հաւաքը, այնուհետեւ աւարտուեց Ֆիդայական խորխտ երգերով:

Ելոյթ ունենալով նրանք մեզ ոգեշնչեցին եւ ասացին, որ մեր երգը սուրբ է, մեր պայքարը աննկուն է, քանի որ մեր կամքն

այդպիսին է, մենք անպայման պիտի յաղթենք, միայն պէտք է առաջ ու առաջ, ակն ընդ ական պայքարել, ատամն ընդ ատաման:

Անջնջելի տպաւորութեամբ հեռացանք դահլիճից:

Տող գիւղի մասին կարող եմ ասել, որ այն, մեր գիւղը, պատմական է, ունի դարաւոր պատմութիւն: Այս գիւղի համանուն լեռան ստորոտում դեռեւս Յրդ դարում, արաբական զաւթիչ Բղոն է իր դունչը ջախջախել ու ետ շարտուել: Այսօր էլ կան պատմական վկայութիւններ, որ այն պաշտպանում էր Աբոյոթային կամ Աթումուսային:

Գիւղը իր փառքին է հասել նաեւ 18րդ դարի վերջում, երբ Մելիքանիստ Տող գիւղը ահ ու սարսափ էր տարածում ամէնուրեք: Գիւղին տիրութիւն էր անում եւ ամբողջ ձորակի տէրն էր Մելիքիզակը: Երբ Մելիքիզակը չի հնադանդուում պարսիկներին, նրանք, ստիպուած դիմելով արեւելեան յայտնի քաղաքականութեանը, շողոթորթում են, Մելիքիզակին անուանելով Մելիքեզան: Եզան բառը պարսկական ծագում ունի, նշանակում է եզակի, յատուկ: Նա յատուկ բարձ ունէր պարսկական արքունիքում: Արքունիք ներկայանալիս միշտ վայելում էր յարգանք ու սէր:

Մելիքանիստ Տող դիւղում 1795ին, երբ պարսկական աղա Մահմեդ Նանկաշարը յարձակուել է գիւղի վրայ, Մելիքական եղբայրներից մէկը, մահուան սպառնալիքի աակ, ընդունել է պարսկական կրօնը եւ դարձել մահմեդական: Այս մահմեդական դասակի հիման վրայ էլ աստիճանաբար սկսել են գիւղ թափանցել Անդրկովկասի ազերիները:

Գիւղում թուրքերի աճ նկատուել է 1943 թ.ից, երբ հայ տղամարդիկ կրծքով պաշտպանում էին հայրենիքը, նախկին խորհրդրդային պետութեան սահմանները, այս վաչկատուն ցեղերը, որոնք ոչ մի անելիք չունէին, դասալիքներ էին, մտել են գիւղ եւ զբաղուել քոչուոր կեանքով ու անասնապահութեամբ: Տեսնելով հայկական նստակեաց կեանքը, նրանք էլ դարձան նստակեաց: Հայերից սովորեցին այն ամէնը, ինչ որ կարող էր անել միայն հայը: Սովորեցին ապրել քարաշէն տներում, հայ վարպետների ձեռքով կառուցած



ԱՐՄԷՆ20

բնակարաններում: Նրանք եկած տարիներին նոյնիսկ ծառից պտուղը չէին հաւաքում, քանի որ չգիտէին, այլ՝ ծառը կտրում էին ու քաղում: Երբ տեղացիները նախատում էին այս ամէնի համար, մեղադրում էին, ասելով, որ յաջորդ տարին միւս անտառից կը քաղեն, քանի որ քոչուոր կեանքը այդպէս է նրանց տրամադրում:

Երբ սկսուեց ազգային-ազատագրական յայտնի Ղարաբաղեան շարժումը, դպրոցի հայոց լեզուի եւ գրականութեան հայրենասէր ուսուցիչ Վիգէն Գրիգորեանը թշնամուն՝ մեր «եղբայր» ազերիներին սկսեց երեւալ որպէս մի հսկայ: Արտաքինից նա հսկայի ոչ մի տպաւորութիւն չէր թողնում: Երբ խօսում էին նրա մասին, ասում էին, որ հերիք է, գուցե ցածրահասակ ես, այդքան մի զբաղուիր, այդքան զբաղուած մի աշխատիր. ասում էր, կաղնիները անտառի հսկաներն են, իմացիր, ու հայեացքը դարձնում էր անտառին, իսկ փոքրիկ ծառերը անուշաբոյր են, նրանք երբեմն կարողանում են մենակ ապրել, բայց կաղնիները միշտ սիրում են իրար հետ հովհարի լինել:

* * *

Վիգէնը դասերը թողած զբաղում էր միտինգներով, ելոյթներով: Նրա աջ թեւն ու աջակիցն էր Արմէնչոն: Երկուսով միասին սկսեցին ժողովրդի մօտ արթնացնել ազգային ոգին: Դժուար էր պայքարել մեր գիւղում, առաւել եւս գժուար այն էր, որ հայերի մի մասը դեռ չէր գիտակցում պայքարի յստակութիւնը, ճշմարտութիւնը, իսկ միւս մասը խաբւում էր կեղծ թուրքերից, որ Հայաստանին միանալուց մենք ոչ մի բան չենք շահի, որ Հայաստանը աղքատ է, եւայլն, ու սկսում է պայքարը երկու ուղղութեամբ՝ մէկ չհասկացող, անգիտակից մարդկանց՝ հայերի դէմ, մէկ էլ՝ թուրքերի դէմ:

1988ին, երբ սկսուեց Ազատագրական շարժումը, Վիգէնը երթի մէջ էր: Անձնական աւտոմեքենայով շաբթուայ 5-6 օրը, համարեա՛ւ ամբողջ շաբաթը լինում էր մարդկենտրոն՝ Ստեփանակերտում, այնտեղից բերում էր թուրքիկներ, տարածում էինք, բայց թուրքերին թուրքիկներ տարածելը այնքան էլ հեշտ չէր, չէ՞ որ նրանք էլ էին զգում: Ստիպուած գիշերները գնում էին, ինքն ու Արմէնչոն եւ որոշ տղաներ այդ թուրքիկները խցկում էին թուրքական փոստարկղները, զցում էին նրանց բակերը: Առաւօտեան թուրքերը կարողում ու վրդովում էին:

Առաջինը, նրանք, որ սկսեցին այս Շարժումը 1988ին՝ Արթուրն էր՝ Մկրտչեան, որ Հաղորդութում աշխատում էր որպէս պատմաբերկրագիտական թանգարանի տնօրէն: Արթուրը ունէր իր ծածկանունը, չգիտեմ զրանցուած է, թէ ոչ, միշտ Ես էր ասում, երբ զանգում էր հեռախօսով, վերցնում էի, ասում էր.— Խօսողը Եսն է, փոխանցել իրեն:

Արթուրը ցանկացաւ Վիգէնին անուանել Եգան, բայց Վիգէնն ասաց, որ դա վտանգաւոր է, թուրքերն իսկոյն կ'իմանան, որովհետեւ իւրաքանչիւր հեռախօսային կապ նրանք լսում էին:

Թուրքական ազգային տօն կայ, որ տօնուում է Մարտ ամսին, ինչ-որ բայրամ են կոչում: Այս բայրամի նախօրեակին, 1988ին, Վիգէնի պահանջով, Արթուրի միջնորդութեամբ Խորհրդային բանակի զինուորները եկան, որպէսդի Տող գիւղում կարողանան կարգ ու կանոն հսկեն, իբր հայերը պէտք է խանգարեն թուրքերի այս ազգային տօնը:

Երբ Փետրուարի 28ին տեղի ունեցաւ Սումգայիթը, այդ օրը մեր գիւղի համար չգիտեմ ինչ բօթ էր: Մենք ադրբեջանցիներին նայում էինք որպէս իսկական արիւնարբուներ: Իւրաքանչիւրի եղունդների տակ փնտռում էինք արեան այն հետքերը, որոնք դեռ չէին չորացել 15 թ.ի Եղեռնից յետոյ: Այս օրերին գիւղ էր եկել Խորհրդային բանակի առաջին ջոկատը, որ գիւղի կարգ ու կանոնը հսկէր: Արթուրը զանգեց գիշերուայ ժամը երկուս անց կէս ու ասաց.— Վիգէն, սիրելիս, առաւօտեան շէկիկները կը լինեն ձեզ մօտ, մեր ուսու եղբայրները, որոնց վրայ մենք յոյս էինք դնում, որ պէտք է մեզ պաշտպանէին, քանի որ մեր պայքարը, մեր գործը յանուն հայրենիքի է:

Սկսուեց մի չտեսնուած մոլագար պայքար, որ մղում էինք թուրքերի դէմ: Այս պայքարը նախ սկսուեց քարկոծութեամբ: Առաջին անգամ, երբ հայկական աւտոբուսները, որոնք Հաղորդից վերադառնում էին շրջկենտրոն, նրանք վերադառնում էին մայր կենտրոնից, հայկական բեռնատարները, որոնք անցնում էին թուրքական Ֆիզուլի քաղաքի եւ գիւղերի մօտով քարկոծուած, ջարգուած ուղեւորներով գիւղ էին հասնում: Առաւել եւս ծանր էր, երբ փոստի շէնքի մօտ բօթը հասաւ, Տողի եւ շրջակայ գիւղերի հայ բնակիչների մեծ մասը, որոնք ստալինեան ուժերի տարիներին չգիմանալով տեղափոխուել էին Ադրբեջանի այլ քաղաքները, իսկ մեծ մասը Սումգայիթ, նրանք սրախողխողուել են, որոնք հարազատներին հասաւ բօթը: Գոյժն ու կարկամը բռնել էր գիւղը: Մարդիկ ուզում էին հասնել իրենց հարազատների դիակներին, բայց նրանց ամէնուրեք արգելում էին: Իրաւունք չկայ գիւղից դուրս դալ, իրաւունք չկայ, մնում էինք ապշած, մի՞թէ այս պայծառ օրերին, մի՞թէ այսպիսի կարգերում, այսպիսի վանտալիզմ կարող է լինել: Օր-օրի հասնում էին բօթեր Սումգայիթից: Զգիմանալով այս ամէնին, արդէն ստեղծուեցին ազգային ինքնապաշտպանական ջոկատներ:

Ինչ վերաբերում է Վիգէնի եւ Արմէնչոյի մասին իմ յուշերին՝ կարող եմ ասել հետեւեալը, Արմէնչոն հայրենասէր ընտանիքի զաւակ էր: Նրա հայրը եղել է ազգային-ազատագրական շարժումների ջատագովներից մէկը: Վիգէնի մտքով անցաւ Արմէնչոյին հրաւիրել

մեր տուն: Եկաւ, երկուսով նստած էին բազմոցին, խօսում էին օրուայ կատարուածից ու առաջին հարցը, որ Վիգէնը տուեց Արմէն-չոյին՝ սա էր.

—Արմէնչօ, գիտե՞ս, որ պատերազմ է սկսուում, Արմէնչօ, գիտե՞ս, որ պէտք է մարդ սպանենք:

Քմծիծաղ տալով՝ Արմէնչոն ասաց.


—Երբեք չեմ կարող, ընկեր Գրիգորեան,— նախկին ուսուցիչն էր,— ինչպէ՞ս կարելի է մարդ սպանել, ոչ մի մարդասպանութիւն, մենք ստորադրել ենք, որ ուզում ենք միանալ Մայր Հայաստանին. որդին մօրը միանալու համար արանքը ի՞նչ սպանութիւն կարող է լինել, ի՞նչ կռիւ պէտք է մղուի:

Վիգէնն ասաց.

—Ոչ, Արմէնչօ, սկսուում է մի երկարատեւ պատերազմ, որը չգիտես ինչով կ'աւարտուի եւ մենք պէտք է այս պատերազմին պատրաստ լինենք:

Երբ խօսում եմ այսօր՝ մեր գիւղը սգի մէջ է: Այսօր 1993ի Յունիսի 28ն է, այսօր մեր գիւղի հինգ զինուորներ իրենց կեանքը տուեցին հայրենիքին: Դեռեւս բարախում է նրանց ջահել սիրտը, որոնք 19-20 տարեկան երիտասարդներ են: Մի քանի ժամ առաջ նրանք դեռեւս կենդանի էին:

Հրթիռների եւ գնդացիների տարափի տակ խօսելիս չգիտեմ ինչպէս պատկերացնեմ, թէ ինչպէս կը լինի, քանի որ այս կռիւը սկսուել է քարկոծումով, քանի որ այս կռիւը սկսուել է լեզուա-կռուով:



Շիշաուաթել (Ջրվշտիկ) վանքը: Լուսանկարը՝ Արտակ Ղուլեանի:

Երբ Ղարաբաղում ստեղծուեց յատուկ կառավարման կոմիտէ, Մոսկուայից իր խմբով եկել է Արկազի Վոլսկին: Նա հրաւիրուել է Տող գիւղ, որպէս թէժ կէտերից մէկը: Ժողովուրդը, թուրքական կողմը, պահանջում էր գիւղը կիսել:

Վոլսկուց առաջ մեր գիւղ է եկել Մոսկուայի լուսաւորութեան նախարարութեան առաջին տեղակալ ինչ-որ Տերեշենկօ, այսպէս է ներկայացել մեզ, չեմ ստուգել նրա փաստաթղթերը: Տերեշենկօն միշտ էլ ծաղրել է թուրքերի առաջարկը, որ նրանք պէտք է կիսէին գիւղը ու ծաղրում է, ասում է, երբ գիւղը կիսենք՝ ինչպիսի՞ ցանկապատ պէտք է դնէք գիւղի միջով:

Ես աշխատում եմ դպրոցում, հայոց լեզուի եւ դրականութեան ուսուցչուհի եմ, միաժամանակ դպրոցում դասաւանդում եմ հայ ժողովրդի պատմութիւն: Հայ ժողովրդի պատմութեան մասին իմ տեղեկութիւնները շատ սուղ են, նոր-նոր եմ սկսում որոշ փաստեր ու տուեալներ հաւաքել, քանի որ խորհրդային երկրում տպագրուած նիւթերը այնքան էլ պարզ չեն ներկայացնում մեր ժողովրդի կեանքը, մա՛նաւանդ վերջին 70 տարիների ընթացքում, իսկ որոշ կուսակցու-թիւններ չափազանց մթազնած են ներկայացուած:

Դպրոցի մասին խօսելիս կարող եմ ասել, որ մեր՝ հայկական բաժնում դասաւանդում էին աղբբջանցի Ծ ուսուցիչներ: Դպրոցը միատեղ էր գործում՝ հայ-աղբբջանական, տնօրէնը թուրք էր: Առաջին ընդվզումը, որ մենք բարձրացրինք, դա այն էր, որ հայ ուսուցիչները, ծնողները համատեղ գիմում գրեցինք նախկին մարդ-կոմի քարտուղար Հենրիկ Պօղոսեանին: Նրանից պահանջեցինք, որ հայկական բաժնում դասաւանդող աղբբջանցի ուսուցիչները բարո-յական ոչ մի իրաւունք չունեն, Սումգայիթից յետոյ, այլեւս մտնել դասարան եւ քարոզել ինչ-որ մարդասիրութիւն կամ հումանիզմ: Հայկական բաժնում դասաւանդում էին ռուսաց լեզու, անգլերէն, ռազմագիտութիւն, աշխատանքի ուսուցում, Ֆիզիքական կուլտուրա՝ մարմնակրթութիւն: Այս աղբբջանցի ուսուցիչները վերաւորուեցին, թէ «ինչո՞ւ չպիտի դասաւանդենք», չէ՞ որ իրանք ոչ մի վատ բան չեն արել եւ չեն ուզում մի պահ ուղիղ աչքերով նայեն մեզ, որ իրանք Սումգայիթի ոճրագործներից են: Որոշ մարդիկ նախօրօք կազմած այս պլանով ներկայացել են Սումգայիթ, իբր հիւանդանոց են գնում՝ հիւանդութեան թերթիկներով, եւայլն:

Սեպտեմբերի 1ին, երբ պէտք է սկսուէին դասերը, զանգ չզօգանջեց: Մենք հաւաքուել ու պահանջում էինք անպայման դպրո-ցում աղբբջանցի ուսուցիչներին մեր բաժնից հեռացնել:

Սկսուեց այս հաճելի, հետաքրքիր, բայց ոչ ձանձրալի պայքարը:

Կը ներէք, որ խօսում եմ այլայլուած, որովհետեւ թափառ մտքերս դժուար են հաւաքուում ինձ մօտ, որովհետեւ սպասում եմ մի պահ նոր, Վիգէնը պէտք է ինձ որոշ ուղղումներ անի եւ նրա ասածները պէտք է Արմէնչոն լրացնի:

Մեր ասածները ասած է, մեր կամքը կամք է: Վռնդեցիք այդ ուսուցիչներին մեր բաժնից ու սկսեցինք պարապել առանձին սենեակներում:

Երբ դիւզացիների խնդրանքով, պահանջով, առաջարկով ներկայացաւ Արկադի Վոլսկին եւ ցանկացաւ առանձին հանդիպում հայկական եւ արբեջանական կողմերի հետ, նախ՝ աշխատաւորութեան, յետոյ՝ դպրոցում, ուսուցիչների հետ: Վոլսկու հետ հանդիպման ժամանակ, նախօրօք ինքը երեւի գիտէր Վիգէնի մասին, տեղեկացրել էին արդէն, ու երբ մօտեցաւ եւ այսպէս կոչուած բարեկամաբար ժպտալով բարեւեց նրան, թուրքերը կատաղեցին, ինչ է, սա էլ է Վիգէնին ճանաչում:

1988թ. ամրանը Տող էր ներկայացել Կիրովականի մանկավարժական ինստիտուտի դասախօս Վոլոդիա Յարութիւնեանը: Այս անձնաւորութիւնը չկամենալով Վիգէնի անձը ղնել հարուածի տակ, դրդուած հայրենասիրութիւնից եկաւ գիւղ, ցանկանում էր տեսնել Տողի Գթչավանքը, որը գտնուում է Տողի սարում: Որոշ մարդկանց հետ գնաց, չուզեցաւ Վիգէնին անհանգստացնել, քանի որ զգում էր, որ նա շատ է ծանրաբեռնուած ու լարուած:

Նրա մօտ էին դալիս տղաներ եւ այս եկողները միշտ մեզ համար անսովոր էին, որովհետեւ մեծ մասը մօրուքով էին: Մօրուքաւորները մի տեսակ ահ ու սարսափ էին թուրքերի համար ու ծաղրում էին.— Ահա Վիգէնի ընկերները եկան:

Վոլսկու հետ, երբ հանդիպում էինք, թուրքական բաժնից մի ուսուցիչ, որ Վիգէնի նախկին աշակերտն էր, ցանկանում էր Վիգէնին ներկայացնել որպէս ոճրագործ. ասում է.— Գիտէք, ընկեր Վոլսկի, նրա ընկերները, բոլորը ովքեր գալիս են, մօրուքով են: Միաժամանակ Վիգէնը իր գրպանում կրում է Քաջ Անդրանիկի նկարը, այս ասելով Քաջ Անդրանիկի նկարը դրեց նրանց առջեւ:

Ես չկարողացայ ինձ պահել, տեղից պռոթեցի ու ասացի.— «Բայց ընկեր, գիտէ՞ք, որ Մոսկուայի Լոմոնոսովի անուան համալսարանի ռեկտոր Լոգոնովը եւս մօրուք ունի. ինչպէ՞ս կարող էք այն որակել, մի՞թէ նա էլ է մարդասպան, մի՞թէ նա էլ է էքստրեմիստ:

Միշտ Վիգէնը ընտանիքում երեխաներին ասում էր.

—Գիտէ՞ք, պապայի ընկերները ինչքան շատ են:

Ասում ենք.

—Բա գիւղում քիչ են:

Պատասխանում էր.

—Բա գիտէք, որ երբ հաղորդում են, թէ Հարաւային Աֆրիկայում կամ ինչ-որ մի տեղ էքստրեմիստները գործ են կատարել, երեխաներ, նրանք իմ ընկերներն են: Գիտէք, որ այնտեղ էլ են բնակւում, ես էլ եմ էքստրեմիստ, իրենք էլ են էքստրեմիստ:

Ու երեխաները միամտաբար ասում են.

—Պապա, նրա՞նք էլ են հայ, իրա՞նք էլ են ուզում միանալ Հայաստանին:

Վիգէնը ասում էր.

—Ոչ, հայ կենտկոմի կողմից տրուած կոչումներն են, որ նուիրում են մեզ:

Թէ ինչ աշխատանքներ է կատարել, ինչպէս է սկսուել նրանց պայքարը, այդ մասին համարեա՛ կցկտուր տեղեկութիւններ ունեմ, որովհետեւ իրենք արդէն զբաղւում էին զէնքի գործով, սակայն առաջին կուսակցական հրագէնը (մեր լեզուով աստոմատը) ահ ու սարսափ էր ինձ համար: 1989 թ. տալիս են իրեն, բայց ինքը մի տեսակ վախենում է ինձ ներկայացնելուց, որովհետեւ ես զէնքի մէջ, ինչպէս ցանկացած մարդ, արիւն ենք տեսնում ու պատկերացնում եմ, որ մի օր այդ զէնքը պէտք է իր արեան մէջ թաթախւի, ինչպէս դա եղաւ:

1990 թ.ին գնում էր Երեւան, չգիտեմ ինչպիսի մարդկանց հետ է հանդիպում, ինչպիսի վառ տպաւորութիւններով է վերադառնում, ոգեւորուած, ամէն անգամ, որ հարցնում էի.

—Վիգէն, միացումը ե՞րբ կը լինի ախր, հարեւանները, մարդիկ խօսում են, որ կենտրոնական կոմիտէն միշտ էլ խոստացել է ամսի 5ին, 15ին, 25ին ու ես էլ ծիծաղով ասում եմ.

—Վիգէն, բա դիտե՛ս ինչ եմ ասում, իւրաքանչիւր ամիս ունի այդ ամսաթուերը, իսկ թուական տուելաները ինչպէս են ասում... Ասում է.

—Անհող մնա՛, աշնանը կը լինի, գարնանը կը լինի, հա մարդիկ ամսաթուերով են խօսում, դու էլ եղանակներով ես խօսում,— ու ծաղրում է, ասում,— դու գործ չունես:

Վիգէնը դասերից բացակայում էր եւ դպրոցում պահանջում էր, որ այնպէս դասաւորուի, որ կարողանամ իր դասարանում էլ դասաւանդել:

Այսօրուայ գիւղի հինգ նահատակներից երեքը նրա աշակերտներն են, որոնց ինքը դասաւանդել է եւ երբ խօսում էինք այս խմբի տղաների մասին, Արմէնչոն միշտ ասում էր.

—Գիտե՛ս,— արդէն ընկեր Գրիգորեան բառը փոխարինել էր Արմէնչոն Վրէժ անունով, որ Վիգէնի կարծեմ կուսակցական անունն էր ու ասում է.

—Գիտե՛ս, Վրէժ, այս տղաների հայրենասիրութեան մասին ոչ մի բան չենք կարող աւելացնել եւ դա կապում ենք ձեր անուան հետ, որովհետեւ դուք նրանց դասաւանդել էք 5 տարի: Բա, դու մարդկանց 5 ըրպէտեւ կարողանում ես համոզել, ինչ-որ կայ էութիւն ներկայացնել, քանի որ 5 տարի դասաւանդել էք, էլ ինչ պէտք է նրանց աւելացնես, նրանց հայրենասիրութիւնը ոտքից գլուխ է, արդէն նրանց մօտ աւելացել է վեցերորդ զգայարանը, ինչպէս որ ասում էինք Րաֆֆին ունէր, հայ հանճարեղ գրող Րաֆֆին:

Կուսակցական զէնքը ստանալուց յետոյ մէկ-մէկ ինձնից թաք-
ցընում էր, ասում էր.

—Ձգոյձ մնա՛, երեխաները ձեռք չտան, յանկարծ կարող է մի
բան պատահել:

Վշտով կարող եմ ասել, որ տարիների ընթացքում Տող գիւղի
բնիկ հայ տեղացիները, իրենց պապական օջախները վաճառել են
քոչուորներին ու տեղափոխուել են յատկապէս Միջին Ասիայի քա-
ղաքները:

Դժբախտաբար մեր հարեւանն էլ թուրք է: Նրանց հետ համար-
եա՛ պատակից ենք: Իւրաքանչիւր մեր խօսակցութիւն, մեր տուն
զնացող-եկող, իւրաքանչիւրին նրանք նկատում ու տեսնում էին:

Մեզ մօտ շատ էր գալիս էմիլ Աբրահամեանը, որ նրա մօտիկ
ընկերն է: էմիլ Աբրահամեանը, Արթուր Մկրտչեանը, Վիգէն Գրիգոր-
եանը, այս եռեակն էր, որ գործում էր շրջանում: Մեր շրջանում
ազգային-ազատագրական սաղմը նրանք գրեցին: Նրանք էին կազ-
մում այս շարժման կմախքը, ուղեղը:

1991 թ.ի Ապրիլի 16ին, գիշերուայ ժամը 12ին՝ Ստեփանակեր-
տից գանգում են ու ասում.

—Վիգէն, պէտք է դու տնից դուրս գաս, չքուրի՛ր,— հրամայական
տոնով:

Չանգողը նրա «Քոյրիկ»ն էր, որ լսելուց միայն կ'իմանաք,
թէ ով է: Մեր տանն էր Արէմնչոն եւ ես չկարողանալով ինձ պա-
հել, ասացի.

—Տանից դուրս եկէք, արագացրէք:

Վիգէնն ասում է.

—Ի՞նչ է,— ծաղրում է ինձ դառը հեգնանքով,— դու իմ հայրա-
կան տանից ինձ դուրս ես հանում:

Ասում եմ.

—Այո, շուտ արէք, դուրս եկէք, ես զանգել եմ, ուրեմն դուք
պէտք է տնից, գիւղից հեռանաք:

Ու Արմէնչոն՝ չնայած եղանակը տաք էր, հագնելով գարնանա-
յին վերարկուն, աւտոմատը վերցնում է ու տանից դուրս են դա-
լիս:

Փոխանակ մեր տնից ուղիղ ասֆալտապատ ճանապարհով
գնային Արմէնչոյնց տուն, բարձրանում են Սուրբ Ստեփանոս եկեղե-
ցու մօտով, քարքարուտ ճանապարհով, խուսափելով գիշերային
լոյսերից, հասնում են մինչեւ Արմէնչոյնց տան մօտ, բայց տուն
չեն մտնում, որովհետեւ կարող է հետքերով դային ու տանը բռն-
նէին: Նրանք այդ գիշեր քնում են հիւանդանոցի հիւանդասենեակնե-
րից մէկում, որ Արմէնչոյնց տան անմիջապէս կողքին էր գտնուում:
Առաւօտեան արդէն ինքը դասի չէր գալիս, բայց գիւղից չէր հե-
ռանում: Միշտ ասում էի գիւղից հեռացի, պէտք չէ այդպէս, յան-
կարծ կը դան ու ձեզ կը բռնեն:

Ասում էր.

—Մի վախենայ, ինձ ու Արմէնչոյին երբեք չեն կարող բռնել,
մեզ ոչ մի բան չի պատահի, բայց մատնիչներ ու դաւաճաններ
ամէնուրեք գործում էին, անընդհատ թուքերին էին յայանում, թէ
որտեղ են գտնուում Վիգէնն ու Արմէնչոն: Յերեկով նրանք գիւղում
էին լինում, գիշերը առաւել եւս, բայց Վիգէնը տուն չէր գալիս:
Մտածում էր, մէկ-մէկ գանգում էր տուն, վախենալով, թէ ինչ
վիճակում են երեխաները՝ Արշակը, Վարդանը, Ալենոյշը, ինչպէ՞ս
են քնում, հօ մեզ ոչ ոք չի՞ անհանգստացնում: Իմ հանգիստ պա-
տասխանները երեւի աւելի էին անհանգստացնում նրա ալեկոծ ու
վրդովուած հոգին:

1991 թ.ի Ապրիլի 20ին, լոյս առաւօտեան գիւղ ներխուժեցին
ՕՄՕՆականները, այսպէս կոչուած անձնագրային ռեժիմ ստուգելու
համար: Ես դիտէի, որ այդ անկոչ հիւրերը պիտի մեր տուն մըտ-
նէին: Առաւօտեան Արշակն ու Ալենոյշը դեռ քնած, Վարդանը կովը
տարաւ դէպի նախրի հաւաքման վայրը, մէկ էլ տեսայ մեր տուն
մտան մի եօթ հողի, մի թուրք՝ Խորհրդային մայրի հագուստով,
աստղանիչով, երեք զինուոր, մէկ ՕՄՕՆական, երկու համագիւղացի
թուրք ու իրենց հետ իրենցից աւելի ազնիւ, աւելի բարձրահոգի
մի շուն, որ մտնեն մեր տուն ու խուզարկեն: Հէնց մտան բակ,
դարպասը բացեցին, ես մաքրում էի բակը, աւելը ձեռքիս ցած
դրեցի ու խնդրեցի վերեւ չբարձրանան: Ինձանից պահանջեցին
անձնագիր, մինչեւ կը բարձրանային անձնագիր բերելու, այդ անկոչ
հիւրերը վայրենի հարուածներով, կեղտոտ սապոգներով թխթխկացնե-
լով բարձրացան վերեւ: Իսկոյն, Արշակն ու Ալենոյշը, որ քնած
էին, սարսափահար վեր թռան, ասեցի չվախենաք, բալիկներ, եկել
են մերոնք: Երեխաները հասկացան ինձ: Ինձանից անձնագիր պահան-
ջեցին: Իմ անձնագրի մէջ Վիգէնի անունը չկայ գրած, այդ կնիքը
դրուած չի, ես չգիտէի այդ օրէնքը, նրանք ստուգեցին անձնագիրս,
թէ բա ո՞ւր է քո ամուսնու մասին տուեալները, ասացի չկայ:
Ցանկացան մի քիչ հոգուս հետ խաղալ. «Գուցէ ամուսինդ երկրորդ
կին ունի, ինչու չունի քո անձագրի մէջ գրանցուած իր անունը,
երեխաների անունը»: Ասացի. «Ինչ կապ ունի երկրորդ կին ունենալը
այսօրուայ ձեր ստուգման հետ, ինչի էք եկել»: Ասացին. «Ոչ մի
կապ, իսկ ո՞ւր է տան տէրը»: Սկսեցին մահճակալների տակ ըս-
տուգել, տեղաշորը քարուքանդ անել, աջ ու ձախ էին նայում,
մտան մառանը, մտան գոմը, նոյնիսկ պէտքարանը, բայց ոչ մի
տեղ չկար ու ինձ հարցրին, որտե՞ղ է Վիգէնը, խաբեցի ու ճիշտ
արեցի, ասեցի հէնց նոր դուրս եկաւ տանից: Ինչ հէնց նոր, եր-
կու շաբաթ առաջ էր դուրս եկել: Հարցրեցին, ո՞ր կողմ գնաց,
ձեռքս ուղղեցի Բարեկենդանի նման, թէ ա՛յ՝ դէպի եկեղեցու կողմը,
ձեռքս ուղղեցի Բարեկենդանի կողմը, իբր Վիգէնին բռնե-
ոնց էին ապուշները վագում եկեղեցու կողմը, իբր Վիգէնին բռնե-

լու յոյսով: Զո՛ւր, նրա կուսակցական ընկերները կարողացան նրան լաւ փրկել եւ լաւագոյն փրկութիւնն էր:

Երբ գիւղից բանտարկուածներին տարան պարետատուն, չգիտեմ ինչ պատճառներով էին նրանց բանտարկել, ամսոսանքով նայում էին մեզ, որ այդ օրը Վիգէնը չընկաւ նրանց ճիրանների մէջ: Տխուր վերադարձայ տուն: 1915 թ-ին այդպէս եղաւ. նախօրօք գլխատում էր հայ մտաւորականութիւնը, իսկ մի մասին բանտարկում, այնուհետեւ գլխատում էին ժողովուրդին, փաստօրէն նրանք դառնում էին առանց հովուի մի հօտ, որոնք չեն կարողանում իրենց անելիքները որոշել:

Սկսուեցին մղձաւանջային օրեր: Այդ օրը Վիգէնը դարձեալ զանգեց, ինչպէս ես. ասացի, լաւ եմ, այլեւս չզանգես, գործ չունես մեզ հետ, որովհետեւ մեր հեռախօսը նրանք լսում են: Նոյնիսկ մօտիկ ընկերուհիս զանգեց հետս խօսելու, այնպէս կոպտեցի ընկերուհուս, որ յետոյ հանդիպելուց զարմացաւ. ինչ կոպիտ խօսեցիր, ես զգացի, որ խօսելու պահին հեռախօսի մէջ ինչ-որ չխկոց լսեցի, դա նշանակում է, ես տեխնիկայից այնքան գաղափար չունեմ, ինչ-որ ապարատ են խցկում, որ մեր գրոյցը դրանցեն-տանեն:

* * *

1991 թ. Յունուարի 16ից սկսեցին Հաղորդութի շրջանի, մեզ համար սովորական ձեւով ասած վերին ենթաշրջանի գիւղերի հայաթափումը: Հայաթափումը կատարւում էր պետականօրէն մշակուած պլանով ու ծրագրով:

Վիգէնը քուն ու դադար չունէր: Նա իր ջոկատով հեռացաւ Տող գիւղից վերին ենթաշրջանի գիւղերը: Նրա հետ էին Արմէնչոն, Սամուէլը, Վալերին եւ ուրիշ տղաներ:

1991 թ. Մայիսի 1ին, իրիկնադէմին, ժամը 5ից 6ի կողմերը, գիւղ մտնող թուրքական «ՈՒԱՁ» կոչուող մեքենան պայթեց: Ես չեմ ուզում յիշատակել, թէ ինչպէս պայթեց այդ մեքենան, որովհետեւ տարբեր ձեւով են ինձ ներկայացրել, թող այդպէս էլ մնայ, թող այդ պայթելու գաղտնիքը իմանան Տէր Աստուածը եւ պայթեցնողները, որոնց մի մասը կենդանի են, միւս մասը Աստծու մօտ են:

Մայիսի 1ին թուրքերը սկսեցին քարկոծել որոշ հայկական տներ: Զգալով, որ մեր ընտանիքին վտանգ է սպառնում, մենք փախանք գիւղից:

Այդ օրը Վիգէնը Ստեփանակերտ էր գնացել, հրաւիրուած էր ընկերային ժողովի:

Մենք փախանք դէպի Տումի գիւղը: Գիշերով հասանք այնտեղ, գրասենեակից կապուեցինք Ստեփանակերտ, խօսեցինք Վալերի Բալայ-

եանի հետ, ասացին, որ շուտով կը գան: Տղաները եկան, հանեցին իրենց քաղաքացիական հագուստները, դեռ մեզ համար անսովոր, զինուորական համազգեստ հագան եւ իջան դէպի Տող, որպէսզի Տողում մնացած հայ բնակչութեանը կարողանան պաշտպանել: Սկսեց մի լարուած կատաղի պայքար:

Պայքարը, որ կարող է երեւի իր մրցակիցը ունենալ միայն 1906ի Սասունի ապստամբութիւնը, որ կարող է մրցել մինչեւ 15 թ-ի ջոկատների մղած պայքարի հետ:

Մայիսի 16ին՝ Վիգէնը իր ջոկատով բարձրացաւ Հին Թաղար եւ Խծաբերդ հայկական գիւղերը: Հին Թաղարի դիւղացիներից մի մասը բնակուում էր Հաղորութում: Այնտեղ նրանք զբաղեցնում էին կուսակցական պաշտօններ:

Այս դէպքը այսօր առաւօտեան պատմեցի մեր երեխաներին եւ հիւրերին, թէ ինչպէս Հաղորութից զանգում էին Հին Թաղար եւ զգուշացնում, որ ՕՄՕՆականները գալիս են, արագ-արագ դուրս դան գիւղից, փախնեն ով ինչով կարող է, ինչ ճանապարհով, ինչ ձեւով կարողանում է հասնեն Հաղորութ, հասնեն շրջկենտրոն, այլապէս սպառնում է մահը:

Վիգէնը իր ջոկատով առաւօտեան ժամը 5ին գտնւում էր Հին Թաղարում, բայց կարծես ինչ-որ մեղաւորի տեսքով, կարծես մեղաւորը ինքն էր, որ դրօշակակիրն ինքը եղաւ մեր ազգային շարժման: Երբ գիւղխորհրդի նախագահն, որ իր ընկերն էր, անունը մոռացել եմ, ոտքից կաղ էր, մօտեցել է Վիգէնին եւ ասել.

—Թողէք գիւղից դուրս գանք, այլապէս մեզ մահ է սպառնում:

Վիգէնը պասապխանել է.

—Եթէ ինչ-որ մէկը գիւղից հեռանայ՝ մենք պիտի կրակենք:

Այդ մարդը այլայլուեց, բիբերը կկոցելով ասաց.

—Կարո՞ղ է պատահել, որ դու ինձ սպանես, Վիգէն:

Վիգէնը ասաց.

—Ոչ, չեմ կրակի, ես քեզ չեմ սպանի, բայց կարող է իմ ընկերը կրակել, ոչ թէ սպանելու մտքով, այլ՝ վախեցնելու:

Կասեցուեց հին Թաղարցիների տեղահանութիւնը, միայն ու միայն Վիգէնի ու Արմէնչոյի շնորհիւ, նրանք ոգեշնչեցին մարդկանց: Թէ ինչ օրերի էին հասել նրանք անտառում բնակուելիս, ինչ ապրումներ էին ունեցել, այդ մասին կարող են իմանալ իրենք ու իրենք, ուրիշ ոչ ոք: Օրերով սոված ու ծարաւ էին մնում անտառներում, ստիպուած հիմնեցին իրենց ճամբարը: Վախենում էին կրակ վառել, խարոյկ վառել տաք մի բան պատրաստելու համար, որովհետեւ ծուխը կարող էր իրենց տեղը մատնել, քանի որ օդում պտտում էին ինքնաթիռներ, որոնք փնտռում էին այս ինքնաստեղծ պարտիզաններին, իսկ ցամաքի վրայ վխտում էին ՕՄՕՆականները, Խորհրդային զինուորների հետ: Նրանք ստիպուած ետ են քաշուել:

Երբ մէկ-մէկ հանդիպում էի նրան, կամ ծանօթների տանը, կամ անտառում, կամ ինչ-որ մի ճանապարհի՝ ասում էի, մի քիչ զգոյշ մնացէք: Վիգէնը պատասխանում էր, ճտեղը աշնան են հաշ-ւում, Գրետա, շուտով ամէն ինչ լաւ կը լինի, բայց ինչքան երկարատեւ եղաւ Ապրիլի 16ից մինչեւ Օգոստոս, մինչեւ այն պահը, երբ ՕՄՕՆականների դիրքերը թուլացել էին: Չնայած ՕՄՕՆականների հայաթափման գործը թուլացել էր, այնուամենայնիւ Տողում աւելի կատաղի էին դարձել: Սկսուեց Տող գիւղի ազգագրական կազմը փոխելու մի հրէջաւոր ծրագիր: Բաքուից ուղարկուած «օգնութիւն»: Այստեղ բերեցին մի խումբ խաժամուժ, իբր գիւղում վերանորոգման աշխատանքներ կատարելու համար: Պէտք է պետական հիմնարկները վերանորոգէին, բայց դրանք ահաբեկիչներ էին: Խեղճ հայերը վախե-նում էին տանից դուրս գալ, բայց այնուամենայնիւ արմատներից չէին կտրւում: Ոչ ոք իր տնից չէր հեռացել, ոչ ոք չէր փախել: Որոշ ընտանիքներ էին միայն հեռացել, դրանք էլ աչքի ընկնող, մաքուր, զուտ հայասէր հայրենասէրներն էին: Այս ընտանիքների ժամանակաւոր հեռացումը գիւղից ես համարել եմ ճիշտը, ամենա-ճիշտը, որովհետեւ աւելի լաւ է ժամանակաւոր վտանգից խուսափել, քան գնալ ու ստորին մահով մահանալ:

Հայկական գիւղերում կատարուած ձերբակալումներից որոշ մարդիկ կարողանում էին փախչել, իսկ ոմանք էլ Շուշիի բանտից մի կերպ, կաշառքով եւ այլ ձեւերով կարողանում էին հաշմանդամ տուն վերադառնալ: Ովքեր, որ մեզ տեսնում էին՝ ասում էին.

— Ի սէր Աստծոյ, թողէք Վիգէնը Ղարաբաղից դուրս գայ, ի սէր Աստծոյ թողէք փախչի, որովհետեւ Շուշիի բանտախցերից իւրաքանչիւրի դրան վրայ, թէ՛ մեծատառ, թէ՛ փոքրատառ գրուած է, որ այստեղ պէտք է Վիգէնը բանտարկուի, որ Բաքուի Բաչիւ կոչուող մարդասպան բանտում պէտք է Վիգէնը բանտարկուի, պէտք է տանջամահ արուի:

Արդէն սկսել է գործել թուրքական պալատական նախկին օրէնքներից մէկը, որ գնահատում է Վիգէնի գլուխը, թէ քանի ռուբլով՝ ճիշտն ասած չդիտեմ, միայն դիտեմ, որ այդ պահերին արժէք ունէր նրա ընտանիքի իւրաքանչիւր անգամ:

Երբ գալիս էի, մտնում էի մեր փակ դռնից տուն, նայում էի ունեցուածքին, կերակրում էի շանը, հաւերին ու մէկ-մէկ էլ վախե-նում էի, որովհետեւ գիւղում ստոր մարդիկ գնացել ու պարետին ասել են, եթէ Վիգէնին չէք կարողանում բռնել, ապա խնդրեմ ի-րաւունք տուէք նրա կնոջ տեղն ասելու, կարող էք կնոջը բռնել բանտարկել, յետոյ Վիգէնը կը գայ, այսպէս կոչուած արմէն կ'ա-նէք, բայց չարաչար սխալում էին բոլոր դաւաճաններն ու ստորնե-րը: Այդպիսի բան լինել չէր կարող, որովհետեւ ես անձամբ գրպա-

նում ունէի մկնդեղ կոչուած թոյնը: Եթէ թուրքը ինձ պիտի բռ-նէր ու իմ փոխարէն Վիգէնին վերցնէր, ապա ես խկոյն կուլ կը տայի մկնդեղը, այլեւս իմ դիակը ում էր պէտք, ոչ մի թուրքի, միայն ու միայն հայերին էր պէտք, որ մայր հողին արժանացը-նէին:

1991 թ-ի Օգոստոսին ՕՄՕՆականները կատաղած էին գիւղում, նրանք պատրաստուում էին, պլաններ մշակում՝ գիւղը հայաթափելու համար, որը անչափ դժուար էր իրականացնել:

Վիգէնի խնդրանքով, պահանջով, թէ չգիտեմ ինչ կախարդական ուժով, ինչ գրաւչութեամբ, մեր գիւղ հրաւիրուեց Կոմանդոսը՝ Արկազի Տէր-Թադեւոսեանը: Նրա անուամբ Կոմանդոսը իր ջոկատով, ուղղաթիւով վայրէջք կատարեց Տողասարի ետեւում գտնուող ան-տառում, որ կոչոււմ է Իշխանացոնց անտառ: Երբ ուղղաթիւը վայրէջք կատարեց, ջոկատը տեղափոխուեց Մոխրենիս գիւղը: Ջոկա-տը հանգրուանեց Արմէնչոյի քրոջ՝ Ալվարդի տանը: Սիրով ու գուրգուրանքով մենք ընդունեցինք իւրաքանչիւր ազատամարտիկի:

1991 թ. Հոկտեմբերի 16ին Վիգէնը Երեւանում էր, 20ին վե-րադարձաւ ուղղաթիւով, իր հետ բերելով 32 ավտոմատ: Ինչպիսի՛ բերկրանք, ինչպիսի՛ ուրախութիւն, արդէն աւտոմատներ ունենք, կարող ենք թուրքերին մէկ առ մէկ քշել: Մեր ուրախութիւնը օ-րէցօր աճում էր, ամէն անգամ Ստեփանակերտ գնալուց իր հետ բերում էր ալազան ու այլ տեսակի զէնքեր, որոնց մասին քիչ էր ինձ ասում, բացատրելով, որ դա քո խելքի բանը չէ, մի քիչ էլ զէնքից հեռու մնայ:

1991 թ. Հոկտեմբերի 30ին, նախօրոք մշակուած պլանով, յատուկ որոշման ժամով, սկսուեց Տողի թուրքաբնակ թաղամասի դուրս քշումը: Նրա հրաւերով Տող էին եկել Ասկուկան՝ Բեկորը իր խմբով, Մարտակերտից Վլադիմիր Բալայեանը՝ իր ջոկատով, բոլորն էլ ընտիր տղաներ: Վիգէնը ասում էր, գիտես, գիւղը ես այնպէս պէտք է ազատագրեմ, իմ այնպիսի ընկերները պիտի գան եւ բոլորը պիտի կենդանի մնան: Չգիտեմ ինչպէս էր ինքը հաւա-տում այս ազատաբախտ օրուան, բայց ես չէի հաւատում, որովհե-տեւ ես միշտ այս թուրքերի կատաղի հայեացքները նայելով չէի պատկերացնում, որ հնարաւոր է արդեօք նրանց հեռացնել գիւղից:

Հոկտեմբերի 30ին, ժամը հինգն անց տաս րոպէին, նախօրոք մշակուած պլանով, սկսուեց հայկական ջոկատի գրոհը: Ընդամէնը 60 հոգի էին, որից 30ը զինուորներ էին, 15 հոգին՝ օգնականներ, 15 հոգին էլ այն խումբն էր, որ պէտք է հրկիզէր ադրբեջանական տները, ունեցուածքը: Գիշերուայ ժամը 2ին Վիգէնը ռացիայով հետս խօսեց ու ասաց.

— Գրետա, ուզո՞ւմ ես մի գեղեցիկ պատկեր տեսնել, որ ամբողջ կեանքում չփոշմանես տեսնելուդ համար:

Ասացի.

—Այո:

—Դէ, արի բարձրացի Արտիւշայենց տուն,— որ նրանց համար շտար էր,— ու այնտեղից դիտիր գիւղը:

Գիւղը գտնուում էր Տոլասարի լանջին, բայց գիւղի նորաբնակ թաղամասերը, թէ՛ հայկական, թէ՛ թուրքական փռուած են արդէն դաշտերի վրայ: Երբ ներկայացայ Արտիւշայենց տուն, այնտեղ սենեակներից մէկում, մոմի լոյսի տակ, երեք հեռախօսի արանքում նստած էր Մկրտչեան Արթուրը, կամաց ձայնով խօսում էր ու երբ հարցրի.

—Արթուր, ինչպէ՞ս էք:

Ասաց.

—Շատ լաւ ենք, ինչքան կարող ես հանդարտ խօսիր, կից սենեակում քնած է Կոմանգոսը, որ այդ մարդու հանգիստը չխանգարենք:

Նայելով վառուող թուրքաբնակ թաղամասին, մի պահ յիշեցի յունական կայսր Ներոնին, որ աղքատների թաղամասը վառում էր՝ հրդեհի տեսարան նկարագրելու համար, բայց մէկ էլ ոչ մի հարազատութիւն ունէր մեր վառած հրդեհների միջեւ: Եթէ Ներոնը այս ամէնը կատարել էր խելացնորութեան պատճառով, ապա մենք արել ենք ազատուելու պատճառով, որպէսզի ինքներս չդառնանք հրի ճարակ:

Առաւօտեան լոյսը բացուեց: Պայծառ աշնանային օր էր, ժպտում էին ամէնքը, բոլորը համբուրում էին իրար, իրենց հետ ժպտում էր բնութիւնը, որ մի օր առաջ մռայլ էր եւ ինչպիսի հիացմունք, ոչ մի գոհ, ոչ մի կաթիլ արիւն, միայն, միմիայն Լեւինականի տղաներից մէկի ճակատն էր ապակու բեկորից քերծուել: Աւտոմատի կոթով, երբ թուրքական դուռն էր ջարդում, ապակին քերծել է նրա ճակատը: Երեւի ոչ մի կինոնկարում այդպիսի տեսարան չի լինելու, ինչպէս են դրկախառնում իրար, երեւի Բեռլինի գրաւումը այն ցնծութիւնը չի առաջացրել, ինչպէս Տողի ազատագրումը:

Մարդիկ մնացել էին շքամբ ու ներկայանալով շտար, Կոմանգոսն այսպէս ասաց.

—Գիտէ՞ք, այսպիսի հրաշք տեղի է ունենում հարիւր տարի մէկ:

Թէ մենք ինչ չափերով ենք ներկայացրել Տողում գտնուող թուրքերի ուժերը, նրանց տեխնիկան, այդ մարդը գիտէր, այդ ռազմագէտը գիտէր, բայց որ մենք կարողացանք առանց մի կաթիլ արեան կորստի հանել նրանց, քշել, ոտաբոպիկ քշել, հետիոտն նրանց մինչեւ Ֆիզուլի քշել, այս վաչկատուններին, մնացել էր զարմանք:

(Վերջը յաջորդով) ԳՐԵՏԱ ԱԻԵՏԻՍԵԱՆ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ֆ. ԷԼ-ՄՈՒՏԱՐՐԷՍ

ԱՐՁԱՆՆԵՐՈՒ ՎԱՃԱՌՈՐԴԸ

Հայաստանութեան արհաւիրքը իրենց սեփական աչքերով ճանչցած երոպացի եւ ամերիկացի դիւանագետներու, լրագրողներու եւ մարդասէր ճըշմարտախօսներու անվիճելի վկայութիւններու կողքին՝ նոյնքան կեցասական ճշմարտութիւն ունից գերման, ռուս, ֆրանսացի, արաբ եւ այլ ազգի գրողներու արձակ ու չափածոյ ստեղծագործութիւնները, որոնք գեղարուեստակա-Յօրէն կ'անդրադառնան Մեծ Եղեռնի արհաւոր ոճի իրենց եւ անոր քաղաքական, ընկերային, հոգեբանական եւ այլ հետեւանքերուն:

Մեծ Եղեռնի 50ամեակէն ետք մանաւանդ անելի թափ ստացած այս հետաքոռքրութիւնը կրկնակ ճշմանկութիւն ունի: Այս իրողութեան պերճախօս վերջից ապացոյցը «Համազգային»ի Հայէպի մասնաճիւղին հրատարակած «Արագիւններու գաղթը» հատորն է, որ կ'ամփոփէ հրատարակութեան արժանի նկատուած սուրիացի 17 գրողներու արձակ եւ չափածոյ ստեղծագործութիւններ:

Հայաստանութեան նուիրուած այս մրցանքին եւ անկէ ներշնչուած գործերուն մասին գաղափար մը փոխանցելու նպատակով, անկախ մրցանքի դատակազմի գնահատումէն՝ մեք յարմար նկատեցինք մեր այս թիւով թարգմանաբար ներկայացնել սուրիացի հանրածանօթ գեղանկարիչ եւ պատմա-լաւագիր Ֆաթէհ Էլ-Մուտարրէսի «Արձաններու վաճառորդը» անուն պատմուածքը եւ Ասէմ Էլ-Տրպլըքի «Երգ Սասունին» բանաստեղծութիւնը:

«Կ որսուած փոքրիկ աղջիկ մը». այսպէս կը կանչէր գաճէ արձաններ ծախող շրջուն վաճառորդը, խեղդուկ, տկար եւ ամչկոտ ձայնով մը, իր թեւին անցուցած եղէգէ կողով մը, որուն մէջ ամրացուած կ'ըլլային գունաւոր թուղթէ հողմաղացիկներ կրող ցպիկներ. անոնցմէ ոմանք կը դառնային, ուրիշներ լուռ կը մնային. ան կը քշէր երկու անիւներու վրայ նստած, տախտակէ եւ եղէգէ պատրաստուած խաղալիք մը, որուն վրայ ամրացուած հողմաղացիկը կը դառնար, ամէն անգամ որ կը թաւալէին փոքրիկ կառքին անիւները: Իր տեսքը մարդոց հետաքրքրութիւնը կը շարժէր: Ան բարձրահասակ, երկար ու դեղին մօրուքով անձ մըն էր, որուն գլխուն հանգչած անգոյն գլխարկին եզերքը կը ծածկէր իր երկար մազերը, ինչպէս նաեւ՝ իր ճակտին մէկ մասը: Ան կը հագւէր երկար վերարկու մը, զոր ժամանակը ներկած էր մուգ կանաչ գոյնով, վերարկու մը՝ որ կը հասներ իր կրունկներուն, որոնք կ'ամփոփուէին մաքուր ու փայլուն գոյգ մը սեւ կօշիկներու մէջ, ինչ որ անկարելի կը դարձներ գտնել երոպացիի այսպիսի տեսքով այլ մարդ մը. կարծես թէ ան դուրս եկած էր Մաքսիմ կորքիի մէկ գիրքէն: Օ-

րինակ, կը քալէր Հալէպի «Պարոն» փողոցին մէջ եւ իր առջեւ կը հըրէր թուղթէ հողմաղացիկներու եղէգներով բեռնաւոր երկու անիւներ: Հետագային հասկցայ, որ իր անունը Արթին է, Պարոն Արթին, եւ այս բոլորին մէջ ամէնէն տարօրինակը այն էր, որ կը պնդէր իր ապրանքին անունը ծանուցել հայերէնով:

Այդ օրերուն, յիսունական թուականներուն, մենք մեր ծաղիկ հասակը նոր թեւակոխած երիտասարդներ էինք, որոնց միտքերը կը զբաղեցնէին սուր վիճաբանութիւնները՝ բանաստեղծութեան եւ քաղաքականութեան մասին: Մեր խմբակը, լրագրողին կողքին, ի մի կը խմբէր դպրոցի ուսուցիչը, իրաւաբանը եւ իր փորձառական շրջանը անցընելու համար Հալէպ փոխադրուած դատախազը. բաժակը մեզ կը միացնէր Պէյրութէն, Գահիրէէն կամ Մոսկուայէն նոր հասած թերթերու կամ գիրքերու տրցակին շուրջ, ինչպէս մեզմէ շատեր կ'աշխատակցէին տեղական թերթերու՝ «Ալ-Իսլահ»ին, «Պարգ Էլ-Շիմալ»ին, «Ալ-Հաուատէս»ին եւ «Ալ-Մա'րիֆէ» պարբերականին, զոր կը հրատարակէր մեր ընկերը, մեր մէջ ամէնէն պատկառելիին հանդիսացող իրաւաբան Ալ-Ջարգան. այս իրաւաբանը երբեմն մեզի կը խօսէր Յափշտակուած Նահանգի⁽¹⁾ ողբերգութեան մասին, եւ հեզահամբոյր լրագրող Փիեռ Շատարեւեանը իրեն կը յիշեցնէր այն ահաւոր կոտորածը, որ հարուածեց ամբողջականօրէն քաղաքակիրթ ժողովուրդ մը՝ ինչպէս հայ ժողովուրդը, առանց խոռվելու քաղաքակիրթ աշխարհին անտարբեր լուծիւնը: Մեր հաւաքները տեղի կ'ունենային աջակողմեան անկիւնը «Պրագիլ» սրճարանին, որ էքսիքեսօ սուրճէն զատ ոչինչ կը մատուցանէր:

Մարդկային բազմութիւնները, վաճառորդները եւ երբեմն ալ ձիերը կ'անցնէին սրճարանին մեծածաւալ ու մաքուր ապակիէ պատուհաններուն ետեւէն. սեւ ապակիէ մակերես ունեցող բոլոր սեղանները կը ցոլացնէին մեր դէմքերը եւ կը խնդային մեր հակազդեցութիւններուն եւ անկապ ու անթիրախ ընկերային տեսաբանումներուն վրայ: Բոլորս ալ կը փնտռէինք երանելի քաղաքը, աշխարհի մը մէջ, զոր այս ժամանակը դրոշմեց սպանդով եւ հաւաքական սպանդով: Փիեռ Շատարեւեանը ըսաւ.

—Լսեցի, որ Հիւսէյն Չարքասի հետ հատուածներ թարգմանած ես բանաստեղծ Սահակեանէն⁽²⁾:

—Այո, բայց անգլերէն թարգմանութենէն. որքա՞ն կը ցանկայի բանաստեղծական յղացքը ճանչնալ իր հարազատ բնագրէն:

—Քեզի համար այս քերթողագիրքը պիտի փնտռեմ: Ի դէպ, տոքթոր Ճեանին հարցուցի՞ր⁽³⁾:

—Ո՛չ:

—Գրածդ ինձի կրնա՞ս լսելի դարձնել, ըսել կ'ուզեմ՝ այս բանաստեղծէն ստացած տպաւորութիւնդ, սարսափելի բանաստեղծութիւն է:

Հիւսէյնը ըսաւ.

—Այս բանաստեղծութիւնը չի ներդաշնակուիր այս պայծառ առաւօտին հետ:

Փիեռը պնդեց. ան գուցէ կ'ուզէր արժեւորել այս բանաստեղծութեան խղճմտանքիս վրայ գործած ազդեցութիւնը: Ըսի՝ լաւ, բանաստեղծութիւնը քեզի համար պիտի պատկերացնեմ իբրեւ պատառ մը եւ վկան Հիւսէյնն է, որովհետեւ կը հաւատամ, որ անկեղծ բանաստեղծութիւնը գեղեցկագոյնն է:

—Գեղեցկագոյն բանաստեղծութիւնը ամէնէն անկեղծն է եւ ոչ թէ սուտը,— մեկնաբանեց մեր պետեւի բանաստեղծ Մուսթաֆա Շարատէն, որ մետաղներու զօդման արուեստին նուիրուած գիրք մը կը թղթատէր:

Ըսի իրեն.

—Լսէ՛, երկաթագործ բանաստեղծ, քեզի լսել պիտի տամ բանաստեղծութիւն մը, զոր չես իսկ երագած:

Հակաճառեց.

—Ի՞նչ է, բանաստեղծութիւնս մէջդ լուռ բան մը չշարժե՞ց:

—Գլխուս վրայ դուն եւ բանաստեղծութիւնդ, բայց Իսահակեանը ուրիշ է, ան գեղեցկութեամբ կոռուղ բանաստեղծ մըն է, իսկ դուն ուղտին կոնակը նստած բանաստեղծ ես⁽⁴⁾:

Խնդացիներ եւ Փիեռը ըսաւ.

—Սուրճը իմ հաշուոյս է այս անգամ. նկարի՛չ, տպաւորութիւնդ քեզմէ կրնա՞մ լսել:

Սուրճը եկաւ տաք եւ ընկերացած մեր բարեկամ սպասեակին՝ Իլիասի ժպիտով, որ խօսքը ինձի ուղղելով՝ ըսաւ.

—«Մա'րիֆէ»ի նոր թիւը լոյս տեսած է, մէջը պատմուածք մը ունիս:

Ըսի.

—Շնորհակալութիւն, Իլիաս:

Ըսաւ.

—Խորագիրը չհասկցայ:

—Ռաշօ Աղա:

—Ի՞նչ կը նշանակէ Ռաշօ:

—Ռաշոյին հարցուր,—խնդացիներ եւ աւելցուցի.

—Լսէ՛, Փիեռ, բանաստեղծութեան խորագիրը, որքան կը յիշեմ... կը խնդրեմ չընդմիջես զիս,— եւ սկսայ տող առ տող կազմել պատկերը «Կարմիր վարդ մը մեռելակառքին վրայ» խորագրեալ բանաստեղծութեան եւ քերթուածը պատկերել հանդարտօրէն.—

«Կրապատ ճանապարհը կ'ընթանար ուղիղ⁽⁵⁾

«Երկու շարք հին տուներու միջեւ.

«Գիւղական աւանին մէջ

«Ճանապարհը ամայի էր ամբողջութեամբ

«Եւ հրաբորբ արեւն էր օրհնեալ ճամբուն վրայ:

«Հեռուէն՝ ճանապարհին հեռաւորագոյն կէտէն՝
 «Սայլը մօտեցաւ,
 «Արձակելով ճոխն իր անիւներուն՝
 «Ինչպէս թոչող կայծեր.
 «Սայլը մօտեցաւ յամրաքայլ,
 «Ջայն կը վարէր զինուոր մը կորաքամակ,
 «Որ ընկողմանած՝ իր զէնքն էր գրկած:
 «Մօտեցաւ սայլը տախտակէ,
 «Ջոր կը քաշէր ձի մը յոգնասպառ,
 «Մինչ ձեռքերն ու դիակները
 «Դատարկին մէջ կը գծէին տառեր անորոշ,
 «Իրենց ետին ձգելով զի՞ծ մը արեան:
 «Եւ սայլը հալածելով, անոր ետեւէն կը վազէր արագօրէն
 «Ծուն մը, որ մերթ ընդ մերթ կը լիզէր
 «Կաթիլներն արեան:
 «Սայլը անցաւ
 «Տուններուն ստուերոտ յառաջամասին առջեւէն,
 «Տուններն էին լքուած
 «Եւ պատուհաններն ու դուռներն էին փակ.
 «Յայնժամ՝ անփութօրէն
 «Բացուեցաւ պատուհան մը վերի յարկէն,
 «Երեւցաւ աղջիկ մը, ձեռքին վարդեր,
 «Նետեց զանոնք, ինկան կառքին վրայ
 «Եւ պատուհանը փակեց»:

Սուրճի գաւաթը դողողաց Հիւսէյնի ձեռքին մէջ եւ ան խոոված ըսաւ.

—Անիծեալ ըլլաս, օրս պղտորեցիր:

—Սարսափելի եւ հոյակապ բանաստեղծութիւն է, համաձայն չե՞ս ինձի:

Սրճարանէն դուրս՝ օդը ծանրաբեռնուած էր արեւելեան անապատի փոշիով, միախառնուած՝ Հոկտեմբերի մեղմ անձրեւին մանր կաթիլներով, որոնք փողոցի ասֆալթին վրայ կարմիր ցէխ մը գոյացուցած էին: Գիրքը մէկդի դրի եւ ըսի Փիեռին.

—Յուսամ հայերէն բնագիրը կը գտնենք, կը խոստանա՞ս, որ Իսահակեանի դիւանը պիտի փնտռես. կ'ուզեմ լսել իսկական բնագիրի՞ն բանաստեղծական երաժշտութիւնը:

—Ծիգս կ'ընեմ. դուն ըսէ ինձի, ո՞վ պիտի հրատարակէ այս բանաստեղծութիւնը, — ապա ակնոցը սրբեց եւ ճշդեց.

—Պէրութի մէջ՝ «Ալ-Սագաֆէ Ալ-Ուարանիէ»ն, «Ալ-Իսլահ»ը, որ յանդուգն թերթ մըն է Հալէպի մէջ:

Հիւսէյնը ըսաւ.

—Խմբագրապետը՝ Մահիէտտինը համաձայն պիտի ըլլա՞յ:

Ափսոսանքով ըսի.

—Ցաւալի չէ՞, որ բան մը չգիտնանք վաղեմի հայ ժողովուրդի գրականութեան մասին. ան մեր մէջ կ'ապրի, սիրեց մեզ, սիրեցինք զինք եւ կը պատերազմի մեզի հետ:

Փիեռ Ծատարեւանը ըսաւ.

—Աստուածդ սիրես, ըսէ՛ ինձի, թէ ուրկէ քեզի հայ ժողովուրդի հանդէպ այս զգացումները:

—Աղէտէն, — ըսի եւ անցուցի.

—Պատճառը մայրս է:

—Մա՞յրդ, ան ի՞նչ կապ ունի:

—Մայրս մանուկ էր, երբ զինուորներու կողմէ դէպի Սուրիա քշուած գերիներու կարաւանները անցան այս կողմերէն:

—Ինչպէ՞ս:

—Մայրս ինը տարեկան էր եւ ճողոպրածներէն ոմանց իւրը առնուած թան կը հրամցներ. լուսահոգին ըսաւ, որ երբ կիներէն մէկը ուզած է իրեն տալ զոյգ մը օղ, մեծ մայրս մերժած է եւ ան սկսած է արտասուել. անունը Սալիհա էր, «Սալիհա Պարագի Գարա Պէկ»:

Փիեռը միթմրթաց.

—Այս ալ երկրորդ քերթուած մըն է:

Օրերը անցան, սակայն արձանիկներ վաճառող բարեկամիս մարդկային պատկերը շարունակեց յուզել հետաքրքրութիւնս, յիշողութեանս մէջ դանդաղօրէն շարժող պատկերի մը միջոցաւ, մինչեւ որ օր մը դիպուածով հանդիպեցայ իրեն Ջուքաք Ալ-Խալի մէջ, պրոնզէ արձանի մը շուքին, կոնակը յենած քարէ պատուանդանին եւ գլխարկին եզերքը սահած իր աչքերուն. իր մրափին մէջ յանձնուած խաղաղութեան, ան իր շուրջը փռած էր թուղթէ հողմաղացիկներ ծածանող եղեգէ ցափկներով լեցուն կողովը եւ իր կողին յենած էր գունաւոր արձան մը:

Չուզեցի փճացնել իր անդորրի այս ակնթարթը: Հեռացայ, նստեցայ եկեղեցիին աստիճանին վրայ, թերթ մը թուղթ հանեցի միշտ ինձի ընկերացող թղթապանակէս եւ մտիտով սկսայ արագօրէն նկարել ուրուանկարները այս մարդուն, որ կոնակը տիեզերքին դարձուց, բարարուեցաւ անթափանց ու անեղծուածային նշանակութեամբ կարճ երգով մը, եղեգի ցափկներով արարած իր ստեղծումներով եւ իրեն ընկերացող գաճէ արձանովը այն աղջկան, որուն ձախ այտը խալ մը զարդարած էր: Եւ մինչ կը գծէի, ըսի ինքզինքիս.

—Ահաւասիկ ուրիշ մարդ մըն ալ կ'ապրի աշխարհի շրջագիծէն դուրս, իր ետին ձգելով դիւցազներգութիւն մը եւ իր մանկութեան ապրած աղէտի յիշատակներէն կազմուած սարսափազդու ժապաւէն

մը. «առնուազն ազատ է», ըսի եւ ինծի եւ ստեղծումը եկաւ իբրեւ հաճելի զանազանում մը իր կղերականի երկար հազուստին մէջ նստած թխամորթ եկեղեցականի արձանին եւ երկար սրունքներով այս տերվի-շին միջեւ, որուն կողքին իրենց տեղերը գրաւած էին կողովը, եղէգի ցայիկները, հողմադացիկները, արձանը եւ դպրոցական գոգնոցով աղ-ջընակ մը, որ, կանգ առնելով՝ այս խաղալիքները սկսաւ զննել խոհուն աչքերով:

Շուրջս բազմացան որոշ թիով դպրոցականներ, բոլորն ալ մօ-տակայ դպրոցի աշակերտուհիներ եւ սկսան փսփալ իրարու. անոնցմէ մէկը համարձակեցաւ եւ մեղմ ու կիրթ ձայնով ըսաւ.

—Ամմօ, դուն գծագրի՞չ ես:

Ուրիշ մը աւելցուց.

—Դուն Պարոն Արթինը կը ճանչնա՞ս:

Կանգ առի գծելէ եւ խօսակիցիս դէմքին նայեցայ զարմացած՝ հարց տալով.

—Ա՞յս է անունը,— եւ մատիտովս ցոյց տուի արձաններու վաճա-ռորդը:

—Այո՛,— ըսաւ եւ շարունակեց.

—Արձանէ աղջկան անունը Մարճի է. ինք մեզի ըսաւ:

Երրորդ աղջնակ մը ըսաւ.

—Ան կ'երգէ այնպիսի երգեր, որ մենք չենք հասկնար:

Երկրորդ աղջնակը բողբոջելով ըսաւ.

—Ո՛չ, կը հասկնանք:

Քաջալերելով ըսի.

—Հայտէ՛, ըսէ նայիմ ինչ հասկցար:

—Հայերէն երգ մըն է, որ կ'ըսէ. «Կորսուած է փոքրիկ աղջիկ

մը»:

Հրածեշտ տուի փոքրիկ աշակերտուհիներուն եւ սկսայ զննել աշխարհի մէկ ծայրը առանձինն մրափող այս մարդը. հիմա, իր այս մրափին մէջ, ան թերեւս կ'որոնէ Եփրատի զոյգ ափունքներուն... դարէ մը ի վեր, իր կորած հարազատները, կամ Կիլիկիոյ դաշտերուն մէջ ձմրան եղանակին մոլորած գաղթականներու կարաւանները, որոնց գիշերով կը հալածեն տափաստաններու բորենիներուն մրմոհոցներն ու գայլերուն ոռնոցները՝ «Կորսուած... փոքրիկ... աղջիկ մը...»:

ՖԱԹԷՀ ԷԼ-ՄՈՒՏԱՐԷՍ

- 1.—Ցափշտակուած նախանգ սահմանումով սուրիացիք կը հասկնան Ալեքսանտրէթի նախանգը, որ հակառակ մարդահամարի եւ պատկանելիութեան գծով կատար-ւած քուէարակութեան արդիւնքին, ֆրանսէթրքական դաւադրութեամբ մը 1938ին անջատուեցաւ Սուրիայէն եւ կցուեցաւ Թուրքիոյ:
- 2.—Խօսքը կը վերաբերի Աւետիք Իսահակեանին: Այսուհետեւ պիտի գործածենք բանաստեղծին ճիշդ ազգանունը՝ Սահակեանի փոխարէն:

3.—Կ'ենթադրենք, որ տպագրական սխալ է՝ Մէպէճեանի փոխարէն: Տոքթ. Մէպէճե-ան Հալէպի մէջ նշանաւոր է ո՛չ միայն իբրեւ ակնաբոյժ, այլեւ՝ իբր մշա-կութասէր անձնատրութիւն, մա՛նաւանդ՝ իր հոշակաւոր գրադարանով:

4.—Հոս հեղինակը կ'ընէ սրամիտ բառախաղ մը. գեղեցկութիւն (*ճամա՛լ*) եւ ուղտ (*ճամա՛լ*) արաբերէն բառերը իրարմէ կը զատորոշուին երկար եւ կարճ ար-տասանուող այբ-ով:

5.—Բանաստեղծութիւնը, որ կը պատկանի Դանիէլ Վարուժանին, թիրիմացաբար կը վերագրուի Աւետիք Իսահակեանին: Աւելի ճիշդ՝ հոս հրամցուածը Դա-նիէլ Վարուժանի «Դիակի սայլը» անուն քերթուածին մէկ տարբերակն է, որուն անդրադառնալով՝ Ֆաթէհ Էլ-Մուտարիէս տողատակի ծանօթութեամբ մը կը նշէ. «Այս բանաստեղծութիւնը բնագիրին մէջ պղտոր տպատրութիւնն է, զոր հիմա կը յիշեմ քառասուն տարի ետք»:

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

ԴԻԱԿԻ

ՍԱՅԼԸ

Իրիկուան դէմ փողոցներէն ամայի
Սայլ մը կ'անցնի ճողնչելով:
Ձի մը աշխէտ զայն կը քաշէ՝ ետեւէն
Կ'երթայ զինուոր մը զինով:

Ջարդուածներուն դագաղն է ան՝ որ կ'ուղղուի
Գերեզմանատունը Հայոց:
Արեւն յետին իր շողերով կը սըփոռէ
Վըրան պատանք մ'ոսկեզօծ:

Ձին ճիհար է. հունձն այդ իր ժա՛նտ տէրերուն
Ան հագի-հագ կը տանի:
Ականջներն իր կախած, կարծես խորասոյգ
Կը մըտմըտայ թէ քանի

Դարեր պէտք են՝ ժամանելու համար հուսկ
Մարագն հընձուած սուրբերուն...
Եւ շըրջակայ պատերուն պոչն իր տատան
Կը սըրսկէ մի՛շտ, մի՛շտ արին:

Եւ արիւն է՝ որ կը կաթէ յարաբոխ
Անհուններուն հեցերէն,
Սայլն իբրեւ վարդ կըրէր, իբրեւ թէ ըլլար
Արշալոյսին կառքն հրեղէն:

Հոն են դիերն, իրարու վրայ, որդին մօր
Գանգուրներով պատանքուած:
Մին խըրած է իր ամբողջ բունցքը միսին
Տաք վերքին մէջ լայնաբաց:

Դեռ ծերունի մը ծընօտով ջարդուիշուր
Կ'յառնէ աչքերն երկընքին,
Որոնց մէջ սեւ անէծք մ'աղօթք մ'իրարու
Նոյն վըրէծով կը խառնեն:

Մէկուն կուշտէն աղիք մը վար սահմըտկած՝
Սայլին ճեղքին կ'ատկախի.
Ծո'ւն մ'ետեւէն կու գայ եւ գայն քաշած դուրս՝
Լափլիզելու կը գբաղի:

Ո՛չ ձեւ ունին, կամ ոչ գըլուխ. կը կըրեն
Հազար տեսակ զէնքի խոց:
Արդէն իրենց մարմինն եղբայր է հողին.
Կ'երթան ահա գերեզմանոց:

Անոնց վըրայ ո՛չ ոք կու գայ արտասուել
Կամ տալ ողջոյնը վերջի.—
Քաղքին լուսեան մէջ արեան հոտը միայն
Զեփիտին հետ կը շըրջի:

Բայց մութին մէջ պատուհանէ պատուհան
Ահա մոմեր կը վառին.—
Մ'ամերն են՝ որ գաղտագողի կ'աղօթեն
Վըրան կարմիր դագաղին:

Եւ այն ատեն պատըշգամի մը վըրայ
Կոյս մը կ'ելլէ գեղանի,
Ու կը նետէ արտասուաթոր բուռ մը վարդ.
Սայլին վըրայ՝ որ կ'անցնի:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Ա. ԷԼ-ՏԸՊԸՔ

ԵՐԳ

ՍԱՍՈՒՆԻՆ

«Նուիրուած հայ ժողովուրդի զոհերուն
եւ անարդարութեան ու բռնակալութեան
աշխարհի բոլոր զոհերուն»:

Արիւնս ծառ է
եւ տերեւներն աշնան
Կ'աղօթեն
պտոյտին մէջ ջուրին
ճգնաւորուհին
շապիկն իմ հանեց
եւ խորաններու մարմինին վրայ
հորիզոններն էին
մերկ
ըսի.—
ո՞վ ներշնչեց աչքերուդ
յիշողութիւնը սեւ զգեստին
եւ ո՞վ ներշնչեց որք քաղաքներուն
գոյնը սուգին

* * *

Արիւնս քար է
կը քնանայ փաթթուած առուի մը
ծագերու խոտին վրայ
Կ'ոլորէ թաշկինակը հովին
Կ'երկարէ մարմնին մէջ ցօղին
թափահարում մը կանաչ
եւ իր մատներուն մէջ կը բնակին
բաժակներ արիւնէ

* * *

Արիւնս անձրեւ է
կը քնանայ
սրտին մէջ երկինքին
վերարկուն իր կը նետէ
ձմրան մարմինին վրայ
կ'անցնի յօդերուս մէջէն
կը խոստովանիմ
եւ կանչը զիս կ'ըմբռնէ

* * *

Ըսի.—
ըսաւ.—
ըսի.—
ինչ եմ ես
կը կարդամ տետրակը մահուան
ըսաւ.—
կարդա՛
անուանէ՛ յառաջաբանը պարտութեան
ըսի.—
ըսաւ.—
կարդա՛
անուանէ՛ վախճանը հեքիաթին
ըսի.—
ըսաւ.—
եւ ճանապարհը փշրուեցաւ
եւ մեր շրթներուն վրայ
երգը քնացաւ

* * *

Սասունը
մերկ է
եւ ջարդ մը
կը գբօսնու ջարդի մը վրայ

եւ Ապրիլը կ'անցնի
կապուած
երկու թաշկինակով
սրբուհիներ են նաւահանգիստներն այդ
Սասուն
ո՞վ խաչեց մայրը
եւ վերակազմեց ծագերը բոլոր
իմ արեան շապիկէն
եւ հովին դրան դիմաց
կ'ողջագործեմ արցունքի կաթիլ մը ամօթխած
եւ կը վերադասաւորեմ յաջորդականութիւնը ջարդերուն

* * *

Դիակներ եւ ստինքներ
կտրատուած
եւ մանուկներ հրդեհներու կուրծքին
կիներ մերկամարմին
դահիճ մը կ'անցնի
իրենց մարմիններուն վրայէն
անամօթաբար
Սասուն
անապատ մը իր թխութեան աւազները կը ցանէ
իմ բերնիս երաշտի վրայ

* * *


Սասուն
երգէ՛
աշխարհ մը տակաւին կը կտցէ ուղեղին մէջ
մինչ արիւնները մեր
կապուած են կախադանին պարանով
եւ երգերը մեր
կը քալեն
տխրութիւնն իր կը թրջէ
բառերուն մանուշակներով
գոհիները կը հագուին զինք
փախչելով

հազար ջարդէ
 եւ հազար դաւէ
 Սասուն երգէ՛
 «հոս կ'ահաբեկէ փախուստը մեզ
 արիւնը կը կաթկթի
 դէմքը կը հաստատուի խոժոռ
 զոհը ինձի հետ կը խօսի
 քնացած
 միջեւ դատարկին
 եւ միջեւ երգերուս
 զինուորները կը պաշարեն մեզ

* * *

Հոսկէ
 մերն էր ճանապարհը
 ջարդէն ի վեր
 խմեցին գինին երազին
 եւ երկնցան մեր պատշգամներուն
 եւ ան որ սկիզբը տեսաւ՝ ըսաւ.—
 ոչինչ կրնայինք ընել
 եւ ան որուն լեզուն պոկեցին՝ ըսաւ.—
 չէինք կրնար լուել
 եւ ան որ կախուած էր իր մատներէն՝ ըսաւ.—
 կրնայինք մեռնիլ
 յայնժամ եւ ըսի.—
 պիտի մտնեմ բազուկներուդ մէջ
 թռչուններ կ'ընկերակցին ինձի
 եւ ծովը ձեռքերուս մէջ
 կը մօտենայ
 երգէ՛ Սասուն
 զի ծովը մեր ձեռքերուն մէջ
 կը մօտենայ

ԱՄԷՐ ԷԼ-ՏԸՊԸՔ



Իմապական Շարժում

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆ ՄԸ՛

«ԱՐԱԳԻԼՆԵՐՈՒՆ ԳԱՂԹԸ...»

Հայրենական եւ արցախեան յարափոփոխ իրադարձութիւններով,
 տագնապներով եւ հարցերով ծանրաբեռնուած սփիւռքեան մեր հե-
 ւասպառ առօրեային մէջ, գրեթէ աննկատ անցաւ «Համազգային»ի
 Հալէպի ՀԵՄԻ մասնաճիւղի Հրատարակչական յանձնախումբի մէկ
 գեղեցիկ նախաձեռնութիւնը հանդիսացող դրական մրցանակը, որ
 իր պերճախօս եզրայանգումով՝ «Արագիլներուն գաղթը...» անուն
 հաւաքածոյով ներկայացաւ արաբ եւ հայ գրասէր շրջանակներուն...
 միայն Սուրիոյ մէջ: Համասփիւռքեան, չըսելու համար՝ համահայկա-
 կան զնահատանքի արժանի այս ծափահարեղի իրագործումը, դժբախ-
 տաբար, մնաց իր շրջանային նեղ սահմաններուն մէջ (ինչպէս նը-
 ման այլեւայլ նուաճումներ), բաւարարուելով իր ձեռք ձգած ներքին
 յաղթանակով: Մինչդեռ, կազմակերպական որոշ բժախնդրութեամբ
 եւ ծրագրուած ճիգով՝ անիկա կրնար հասնիլ արաբական աշխարհի
 գրական-մշակութային զանազան կեդրոններուն եւ դառնալ ո՛չ մի-
 այն հայ մշակոյթի, այլեւ՝ Հայ Դատի անուղղակի քարոզչութիւնը
 կատարող գեղարուեստական յաղթանակ մը:

Առանց հարցը ըստ էութեան քննարկելու, կ'արձանագրենք
 այս անբացատրելի թերացումը, այն խոր հաւատքով, որ այսուհետեւ

առաջը կ'առնուի նման պարագաներու եւ «Արագիւնքուն գաղթը...» հատորին պէս օրինակելի նախաձեռնութիւնները իրենց բարերար անդրադարձը կը գտնեն լիբանանեան, յորդանեան, իրաքեան, քուէյթեան, եգիպտական, կարճ խօսքով՝ արարական լայնատարած աշխարհի մամլոյ եւ գրական շրջանակներուն մօտ: Մեծ Եղեռնի 60ամեակին առիթով, Լիբանանի մէջ կազմակերպուած կերպարուեստի հաւաքական ցուցահանդէսէն ետք, որուն՝ օրին իրենց մասնակցութիւնը բերին գրեթէ բոլոր սերունդները ներկայացնող լիբանանահայ, լիբանանցի եւ արաբ շուրջ 60 գեղանկարիչներ եւ քանդակագործներ, «Արագիւնքուն գաղթը...» հատորը նոյնաբնոյթ երկրորդ նուաճումն է, բայց այս պարագային աւելի համեստ տարողութեամբ, իբրեւ անբաժանելի մէկ օղակը յստակ ծրագրի մը հիմամբ արաբերէնով հրատարակուող պատմագրական, յուշագրական եւ քաղաքական բովանդակութեամբ հատորներու շարքի մը, որ կը նպատակադրէ սուրիացի ընթերցողներուն ծանօթացնել ո՛չ միայն հայ մշակոյթն ու քաղաքակրթութիւնը, այլեւ՝ քսաներորդ դարու առաջին ցեղասպանութիւնը՝ իր պատմական, քաղաքական, պահանջատիրական, օրէնսգիտական եւ այլ մանրամասնութիւններով:

Այսպէս,

Ապրիլեան նահատակներու յիշատակը պատշաճ ձեւնարկով մը մեծարելու եւ հայ եւ արաբ ժողովուրդներու դարաւոր բարեկամութեան ամրապնդման ճիգերուն իր մասնակցութիւնը բերելու նախաձեռնութեամբ՝ «Համազգային»ի Հալէպի ՀԵՄԻ մասնաճիւղի Հրատարակչական յանձնախումբը, Սուրիոյ Արաբ Գրողներու Միութեան Հալէպի մասնաճիւղի վարչութեան հետ գործակցաբար, 1992ին կ'ունենար գեղեցիկ գաղափարը կազմակերպելու պատմութեան եւ բանաստեղծութեան գրական մրցանք մը, որուն պայմաններն ու մանրամասնութիւնները ծանուցանող յայտարարութիւնը օրին լոյս կը տեսնէր սուրիական պետական մամուլին մէջ: Ծջգուած ժամկէտէն՝ 31 Յունուար 1993էն առաջ, այս զոյգ մրցանակներուն անտիպ գործերով իրենց մասնակցութիւնը կը բերէին 29 արձակագիր՝ 37 պատմութեամբ, եւ 19 բանաստեղծ՝ 28 բանաստեղծութիւններով, Սուրիոյ բոլոր շրջաններէն, հիւսիսէն (Պապ) մինչեւ հարաւ (Սուէյտա՛ը) եւ արեւելքէն (Լաթաքիա, Թարթուս) մինչեւ արեւմուտք (Տէր-Ջօր, Գամիշլի):

Սուրիական եւ արաբական գրական աշխարհին յարգանքը վայելող վաստակաւոր գրագէտներէ, գրականագէտներէ եւ քննադատներէ բաղկացած զոյգ դատակազմը, նախնական գտումը կատարելէ ետք, հիմնուելով նախապէս ճշդուած սկզբունքներուն վրայ՝ կը լծուէր ընտրուած գրութիւններուն քննարկման եւ արժեւորման աշխատանքին եւ, իր եզրակացութիւնները կատարելէ ետք, 20 Մարտ 1993ին կը հրատարակէր զոյգ դատակազմերուն եւ Ս. Ա. Գ. Մ. Ի Հալէպի մասնաճիւղի նախագահ ղոկտ. Նախմէլ-Յաֆիի ստորագրու-

թիւնը կրող 10 կէտերէ բաղկացած տեղեկագիրը, որ կը յայտնէր մրցանակակիրներուն եւ մրցանակի ու գնահատանքի արժանացած ստեղծագործութիւններուն անունները:

Նշելէ ետք, որ պատմութեամբ մրցանակին ներկայացուած գործերուն մէջ մեծ էր թիւը նոյն մակարդակն ու որակը ունեցող կտորներուն, տեղեկագիրը կ'աւելցնէր, որ դատակազմերուն նախագահն ու «Համազգային»ի ներկայացուցիչները յանգած են մրցանակներուն թիւը բարձրացնելու լուծումին եւ առաջնութեան մրցանակը շնորհած զոյգ արձակագիրներու՝ Հասան Համիտին եւ Տիպալ Իսիին՝ իրենց «Մովուն մօտ» եւ «Այդ ընկերը» պատմութեան համար: Երկրորդութեան մրցանակին արժանացած են երկու այլ արձակագիրներ՝ Մուհսէն Եուսէֆ՝ «Նամակ Ազոյին» եւ Ապտըլ Ռահման Սիտօ՝ «Արթին» անուն պատմութեան համար, երրորդ կարգի մրցանակը շնորհուած է դարձեալ երկու այլ հեղինակներու՝ Իպրահիմ էլ-Խալիլի «Նաֆթատար կառքը» եւ Միշէլ Հապիպ Խայ-եաթի «Եփրեմ Քիւրտեանի Ակարը», իսկ յիշատակութեան արժանացած են Ֆաթէհ էլ-Մուտարիէս՝ «Արձաններու վաճառորդը», Հիւսէյն Ուարուար՝ «Փոքր հրդեհներ» եւ Ֆաուազ Մազիք՝ «Հալկապան հարսանիքը» անուն պատմութեան համար:

Ինչ կը վերաբերի բանաստեղծութեան մրցանքին, առաջնութեան մրցանակը ընջելէ ետք, երկրորդութեան արժանացած են դարձեալ երեք հեղինակներ՝ Ասէմ էլ-Տըպըք՝ «Երգ Սասունին», Ուահիտ Ալի՝ «Հայերուն շուշանը» եւ Ապտէլ Սալամ Հալլու՝ «Աշնանայիններ» բանաստեղծութիւններուն համար: Երրորդութեան մրցանակը նոյնպէս շնորհուած է երեք այլ թեկնածուներու՝ Սա'ապ Ահմէտ Սա'ապի՝ «Արթինը կը հարցադրէ անապատը», Մուհամմէտ Ջաբարիա Հայտարի՝ «Մօր աղերսանքները» եւ Պատրէտիս Ապտըլ Ռահմանի «Անմեղ հարցադրումներ» անուն բանաստեղծութիւններուն համար: Իսկ գնահատանքի արժանացած են Սամիր Ռաֆէհի «Սրտին դօշը» եւ Ապտըլ Գատէր Ապու Ռահմէի «Ջուրին մէջ կը բնակին» խորագրեալ քերթուածները:

Վերոնշեալ 17 գրութիւններէն կազմուած եւ 169 էջեր հաշուող «Արագիւնքուն գաղթը...» խորհրդանշական խորագրով լոյս տեսած հատորը հետաքրքրական է մէկէլ աւելի առումով: Հայաստանութեան պատմական ճշմարտացիութիւնն ու քաղաքական տարողութիւնը գեղարուեստականօրէն վեր առնող կեցուածքներուն զուգահեռ՝ նոյնքան հետաքրքրական են սուրիացի այս երիտասարդ թէ՛ երէց գրողներուն իրենց ճշգրտ նիւթը մշակելու անշահախնդիր եւ խիզախ մօտեցումը, հայ եւ արաբ ու յատկապէս հայ եւ պաղեստինցի գաղթական զոյգ ժողովուրդներուն հասարակաց տազնապներն ու համամարդկային ապրումները կենդանի դիպաշարի վերածելու գրական հասունութիւնը, ճակատագրակից զոյգ ժողովուրդներու փոխադարձ եղբայրական զգացումներուն մարդկային տարողութեան ընդ-

զրկումը, կարճ խօսքով՝ Յ. Օշականի մօտ գրական հանգանակի վերածուած իրաւութեան հրամայականը, ըստ որուն՝ «Գրականութիւն մը արեւան երեւոյթ է, միտք, խելք, ոճ, արուեստ ըլլալէ առաջ»:

Հայութեան եւ արաբ ժողովուրդին միջեւ ստեղծուած պատմական, նկարագրային, հոգեբանական նմանութիւնները, այսինքն՝ կենդանի փորձառութեանց զուգահեռներով կեանքը կշռելու մօտեցումը նկատառելի է գրեթէ բոլոր պատմուածքներուն եւ բանաստեղծութիւններուն մէջ: Մանաւանդ առաջիններուն պարագային, գրեթէ բոլոր հեղինակներն ալ ո՛չ միայն կը նպատակադրեն ընդգծել իրենց հայ եւ արաբ տիպարներուն հասարակաց յատկանիշները, այլեւ իրարու ցաւերով տագնապող, կեանքի դառն հացն ու ճակատագիրը միասնաբար բաժնող հայ եւ արաբ տիպարներուն մտերմութեանց ընդմէջէն կը ձգտին հասնիլ գոյգ ժողովուրդները եղբայրացընող պերճախօս փաստերուն: Իրականութիւն մը, որ «Արագիլներուն զաղթը...» ժողովածուի էջերուն ազնիւ ու համամարդկային սոսկական տեսլական մը է, այլ աւելին է՝ կենդանի եւ շարունակ զարգացում ապրող միացեալ ճակատագրի մը իրերայաջորդ հանգրուաններուն բացայայտումն ու հաստատումն է՝ իր մարդկային, հոգեբանական, ընկերային, բայց մանաւանդ ընկերային թելադրական եզրայանգումներով:

Հաւանաբար այս տուեալին պէտք է վերագրել նաեւ այն իրողութիւնը, որ պատմուածքներուն հերոսները իրենց անկախ կեանքն ու նկարագրային յատկանիշները ունենալով հանդերձ՝ կարծէք ըլլան ցեղային-մարդկային նոյն կաւէն շողուած իրարանման տիպարներ՝ իրենց հիմնական յատկանիշներով եւ ապրած տագնապներով, որոնք, բարեբախտաբար, ոչ թէ զիրար կը կրկնեն, այլ կ'ամբողջացնեն: Այսպիսով, հայրենագուրկ գաղթական հայու (նաեւ պաղեստինցիի), ցեղապաշտ թուրանականութեան դժոխքէն դուրս եկած անպատասպար հայու խլեակներ հիւրընկալող պետեւիներու եւ քաղաքաբնակ արաբներու ընդհանուր տիպարները կը հասնին իրենց կատարելութեան եւ իր բիւրեղագոյն մակարդակին կ'առաջնորդեն ժամանակ մը, որ թշուառութեան, պայքարի, կարօտաբաղձութեան, բայց եւ մարդկային ազնիւ յարաբերութիւններու ու փոխադարձ սիրոյ յետ-եղեռնեան ժամանակն է՝ հիւրընկալ սուրբական ասիերուն վրայ:

Օրինակ, պատմուածքի առաջին մրցանակին արժանացած Հասան Համիտի «Ծովուն մօտ» պատմուածքին հայ տիպարը՝ Արթինը, Ապտէլ Ռահման Միտոյի «Արթին» խորագրեալ պատմուածքին նոյնանուն հերոսը, Միշէլ Հապիպ Խայեաթի «Եփրեմ Քիւրտեանի նկարը» պատմուածքին գլխաւոր տիպարն ու նոյնիսկ Տաթէհ էլ-Մուտարրէսի Աղէտին ահաւոր ծանրութեան տակ կըքած Պարոն Արթինը իրենց գոյութեան իմաստն ու հաճոյքը կը գտնեն ուրիշները երջանկացնող անանձնականութեան մէջ: Եթէ այս յատկանիշին վրայ

գումարենք իր արհեստը արուեստի վերածող հայ ճարտար արհեստաւորին նուիրումը, պարկեշտութիւնը, հաւատարմութիւնն ու մահուան սպառնալիքին դէմ անգամ չտկարացող տղամարդկութիւնը, այդ պարագային կրնանք ամփոփել այն հիմնական գիծերը, որոնք վերոնշեալ պատմուածքներու հերոսներէն կը կերտեն ստեղծագործ, բարեխիղճ, ազնիւ, խիզախ եւ պարտութիւն չճանչցող հայ մարդու ընդհանրական կերպարը:

Այսպէս,

«Ծովուն մօտ» պատմուածքի գլխաւոր հերոս Արթինը, որ ինքնաշարժներ նորոգող համեստ արհեստաւոր մըն է, պագեստինցի երիտասարդուհիի մը դիմագիծերուն մէջ կը տեսնէ կրկներեւոյթը իր մօր դէմքին: Սիրոյ անսանձ բոցերուն մէջ դէմքերը կը միաձուլուին, կարօտն ու սէրը կը դառնան անբաժան միութիւն եւ ամբողջական նուիրում: Վայելագեղ փեսայի մը տեսքով իր սիրուհին այցելող Արթինը կիսատ կը թողու իր երթը եւ կը փութայ օգնութեան, երբ իսրայէլեան մարտանաւերէ փամփուշտներ ստացած պաղեստինցի ծանօթի մը ինքնաշարժը անշարժութեան կը դատապարտուի: Եւ իր կոչումին գիտակից «անուշ Արթինը» կը նահատակուի՝ իր դիակին չորս կողմը ցանելով իր սիրուհին համար քաղած կակաչները: Եւ ան իրաւամբ կը դառնայ գերագոյն զոհաբերութեան կենդանի խորհրդանիշ: Նոյնը կրնանք ըսել նաեւ խնդրոյ առարկայ միւս պատմուածքներուն առիթով, որոնց գլխաւոր հերոսներուն կեանքի թելը եթէ չընդհատուի որբերգական նման վախճանով մը, այնուամենայնիւ, ամբողջական հաւատարմութեան եւ խիզախութեան պերճախօս փաստերով անոնք կը դառնան հոգեղբայրները նահատակ Արթինի: Լուսանկարիչ Եփրեմ Քիւրտեան, որ երկու անգամ մահուան աչքերուն մէջ նայող տղամարդու իր արութեամբ՝ մամլոյ լուսանկարիչի դերը կը բարձրացնէ տեսլական ունեցող առաքելութեան, ո՛չ միայն սուրբական մամուլին հաշուոյն կ'արձանագրէ նոր որակ եւ լրագրական արդի ըմբռնողութիւն, այլեւ կը հաստատէ ուղեցոյց աւանդ մը, ըստ որուն՝ ամէն ասպարէզ ապրում եւ հերոսական ոգի մը կը նշանակէ, եւ թէ՛ իրենց ասպարէզին մէջ «հրաշքներ կը գործեն» միայն այն տեսլահարները, որոնք իրենց կոչումը կ'արժեւորեն գերագոյն նուիրումի կենդանի օրինակով, անտեսելով եւ շուրջ բոլորը տեղացող ուղմբերը, եւ յորդած ահեղավագ գետին մարդակուլ ալիքները: Նուիրումի այս հոգեբանութիւնը, աւելի մեղմ տարողութեամբ, իր գոյութիւնը կը հաստատէ նաեւ «Արթին» եւ «Նամակ Ազոյին» անուն պատմուածքներուն մէջ: Վերջինին պարագային, հեղինակ-հերոսին արիւնը կ'ընդխառնուի իր հրասայլով սուրբական հողը պաշտպանած քաղաքի վիրաւոր Լեւոնի երակներու արեան հետ՝ իբրեւ սիրոյ եւ երախտագիտութեան արնակերպ նամակ: Պատանեկան սիրոյ վերյուշ մը կը միահիւսուի գրութեան, որ, իր կարգին, կը փորձէ դառնալ բաբախուն ու

տաք նամակ մը՝ հասցեագրուած իր պատանութեան առաջին սիրոյ իշխանուհիին՝ Ազոյին (վիրաւոր Լեւոնի քոյրը): Անմեղութեան պատանուին վրայ վերակենդանացող սիրոյ այս տրոփները նաեւ կը ջերմացնեն կեանք մը ամբողջ սուրբական անապատներուն փոշոտ ճամբաներուն վրայ մաշեցուցած զոյգ շարժավարներու, Իպրահիմ էլ-Խալիլի «Նաֆթաւար կառքը» պատմուածքի հերոս Արթինի եւ Ապտըլ Ռահման Սիտոյի «Արթին» պատմուածքի համանուն հերոսին սրտերը: Երկու պատմուածքներուն գլխաւոր հերոսներն ալ համեստ շարժավարներ են, որոնք կը բնորոշուին իրենց ազնիւ, ծառայասէր, կենսունակ եւ իրենց ասպարէզը անշուկ հաճոյքի վերածող հաւատարմութեամբ: Հալէպէն միայն գերեզման կամ իր մեծ հօր Մուշի բնակարանը մեկնելու որոշում տուած սիրելունի շարժավար Արթինը, որ իր երազին մէջ Մշոյ երդիքներէն բարձրացող ծխանի ծուխով կը միայ եւ իր ծննդավայրին գորգերը ըմբռնելով հոգին կը լիանայ գարնանային երփներանգ զուարթութեամբ, երազին մէջ կը վերցնէ մեծ հօր իրեն երկարած գորգը, որպէսզի իր օճախը լեցուի դարաւոր ջերմութեամբ: «Արթին, մի՛ վախճար, ես մեծ հայրդ եմ, — կ'ըսէ երազին մէջ զինք իր արմատներուն կանչող պապը, — եւ ասիկա Մուշն է. շատ մի՛ հեռանար, ա՛ն այս գորգը եւ փոէ տանդ մէջ, որպէսզի տաքութեան համը եւ տոհմիդ բոյրը ճանչնաս, շօշափէ՛ մատներովդ եւ անոր մէջ պիտի զգաս սիրտ մը, որ կը բաբախէ, եւ հոգի մը, որ կը շարժի. հոտոտէ՛ եւ ունգերդ պիտի լեցուին երիտասարդութիւններու, նուրի եւ գինիի բոյրերով»:

Գիշերները Երկիր Կորուսեալի ոլորտներուն մէջ թափառող, իսկ արեւու առաջին ճառագայթին հետ կեանք մը ամբողջ սուրբական անապատը չափչփած («ճամբան գոց կը ճանչնամ՝ ինչպէս ձեռքիս ափը») Արթինը, որ կը հաւատայ, թէ իր տեսածը երազ է, իրաւամբ այն «թուշող հայն»է, որ հարազատի մը պէս մուտք կը գործէ սուրբական անապատին մէջ ցանուած քարիւղի կայաններէն ու հանգստարաններէն ներս, կը յաջողի դառնալ վերապրած ցեղին մէկ իրաւ խորհրդանիշը՝ իր անվախճան երազով, անսակարկ ծառայասիրութեամբ եւ տարօրէն մարդկային բարութեամբ: Նման յատկանիշներով մեզի կը ներկայանայ նաեւ Ապտէլ Ռահման Սիտոյի «Արթին» պատմուածքին շարժավար հերոսը, որ իր փոքր ինքնաշարժով գիւղերու մանուկները կը փոխադրէ իրենց հեռաւոր դպրոցները՝ բաւարարուելով անոնց տուած քանի մը դահեկանով կամ շնորհակալութեան ազնիւ խօսքերով: Ինքնաշարժին դուռը բանալէ ետք՝ «սատանաներ, աճապարեցէ՛ք» հրամայող այս շարժավարը նաեւ, ճամբու ընթացքին, անդադար կը պատմէ Արարատի լանջին մնացած իր ծննդավայր գիւղի եւ անոր դպրոցին գեղեցկադէմ ուսուցչուհիին՝ Մարալի մասին, կ'երգէ «իր հայկական տրամաթախիծ ու ջերմիկ երգերը, զորս մենք (այսինքն՝ մանուկներ-

րը) կը հասկնայինք դէմքիդ արտայայտութիւններէն»: Այսպիսով, կարծես ան կը վերապրի իր ընդմիշտ կորսուած մանկութիւնը, կը մանկանայ իր կարգին, կը դառնայ անոնց ամենասիրելի անձը, որովհետեւ Արթինը միւս վարիչներուն պէս ծակաչք չէ, ինքնաշարժին բազմոցը միայն աղաներուն չի վերապահեր, այլ լայն կը բանայ դուռը «սիրելիներս, ի՛նչ մեղքի զաւակներ»ուն դիմաց, կը հետաքրքրուի անոնց դպրոցական կեանքով («Դպրոցը երաժշտութեան դաս կ'առնէ՞ք... կապիկնէ՛ր, երաժշտութիւնը միջազգային լեզու է, օ՛խապտոյտ պատճառող եւ գինովցնող լեզու»), անոնց կ'երգէ հայերէն տխուր երգեր, արցունք կը խլէ մանուկներուն աչքերէն նւ կը դառնայ ներողամիտ հօրեղբայր ու բարեկամ: Ահա թէ ինչու, երբ պատմուածագիրը կը վերլուծէ իր թշուառ, բայց քաղցր մանկութիւնը, կը բացազանչէ.

«Դուն մե՛րն էիր... բոյրիդ մէջ ջինջ աղբիւրներէն ու անարատ կաթէն կար, համդ քաղցր էր մեղրի պէս, եւ գոյնդ ասպարեզ կը կարդար մինչեւ խորքը երկարող անծայրածիր դաշտերու վրայ մար մտնող մայրամուտին»:

Բնութեան ու մարդու նոյնացման, բնութեան մարդեղացման եւ մարդ արարածը բնութեան հրաշալիքներով եւ անհունութեամբ հարստացնող այս աշխարհահայեացքը հատորին պատմուածքներէն կ'երկարի մինչեւ քերթողական էջեր: Վերյուշի, պատմական դէպքերու, դէմքերու եւ խորհրդանիշի վերածուած տիպարներու զսպանակներէն ապրում ու թռիչք ստանալով՝ «Արագիւններուն գաղթը...» ժողովածուի բանաստեղծները նաեւ կ'ոգեկոչեն հայ ժողովուրդին հերոսական ու արիւնոտ անցեալը՝ բանաստեղծական տարբեր ոճերով:

Հակառակ անոր, որ գեղագիտական խստապահանջութենէ թելադրուած՝ բանաստեղծութեան դատակազմը ո՛չ միայն ջնջած է առաջնութեան մրցանակը, այլեւ 19 բանաստեղծներու 28 քերթուածներէն պարզեւատրած է միայն չորս քերթուածներ եւ յիշատակութեան արժանի նկատած երկու այլ գրութիւններ, այնուամենայնիւ, հատորին մէջ տեղ գտած թիւով վեց բախտաւոր գրութիւնները կը վկայեն քերթողական հասուն որակի մը եւ բազմաձայնութեան մասին:

Պատկերաւոր խտութեամբ եւ զուսպ քնարերգութեամբ առանձնացող Ամէտ էլ-Տըպըքի «Երգ Սասունին» քերթուածը եթէ ծածկագրեալ ոճով մը կը փառաբանէ Սասնոյ զոյգ ապստամբութիւնները եւ կը պատկերացնէ կոտորածն ու նահատակներուն անմեղ արիւնը՝ «բառերուն մանուշակով» եւ «երազին գինիով», բնութեան տարրերով նիւթը իր բացարձակ ճշմարտութեան առաջնորդող Մուհամմէտ Ուահիտ Ալիի «Հայրերուն շուշանը» կը զարգանայ կարօտի, սիրոյ եւ անանձնականութեան ամբողջական ծիսակատարութեան մը եղանակներով, որ իր վերացական շեշտուած մակարդակին կը

Հասնի Ապտէլ Սալամ Հալլումի «Աշնանայիններ» արձակ բանաստեղծութեան մէջ: Զգացական եւ վերացական պատկերին անկաշկանդ երազայնութիւնը եւ առարկայական պատկերամտածողութեան տրամաբանական զօրութիւնը կուռ կառոյցի մը մէջ միաձուլելով՝ «Աշնանայիններ»-ու հեղինակը կը յաջողի հեռանալ պատմողական հր-ուետորութեան դիւրին լուծումներէն եւ իր բանաստեղծութիւնը կը վերածէ ջերմ, թելադրական, բազմաշերտ բարդ գրութեան մը:

Ճշդուած նիւթի անձնականացման մէկ այլ նմոյշն է նաեւ Պատրէտտին Ապտըլ Ռահմանի «Անմեղ հարցադրումներ»-ը: Խորագրեալ քերթուածը, որ կը սկսի եւ կը զարգանայ հարցադրական հետաքրքրական ոճով մը:

Այսպէս՝

«Ի՞նչ կ'ըլլար թէ կեանքը
չունենար եղունգներ
մահը ըլլար առանց ձեռքի
թէ դանակը ըլլար վարդ
եւ վարդը՝ բերանը կնոջ մը
Ի՞նչ կ'ըլլար թէ սառնամանիքները
ծնէին թռչուններ
զորս մեք կը խմենք բանտերու մէջ
Ի՞նչ կ'ըլլար թէ սովորութիւնները կանգ առնէին
համբոյրները վտարելէ
շարիաթի գիրքերէն
եւ կանոններէն...»:

Հարցադրական այս ոճով հեղինակը կը պարզէ իր մարդկային ազնիւ ցանկութիւնները, որովհետեւ ան կը փափաքի, որ սեւը ամուսնանայ ճերմակին հետ եւ ծնի կէսօրը, շրթներէն ծլին հասկեր եւ իբրեւ հնձուոր անդէմ ու անորոշ անը անցնի հասկերուն վըրայէն, որպէսզի չկրկնուի Աղէտը եւ ամէն անգամ երբ աղաւնի մը արտասուէ, չքննէ իր հեկեկոցն ու վիշտերը, այլ տիրէ մանկութեան զօրութիւնն ու օրէնքը:

Անուղղակի ոճով ներկայացող վերնոչեալ զոյգ քերթուածներէն բոլորովին տարբեր է պարագան Մուհամմէտ Զաքարիա Հայտարի «Մօր աղերսանքները», Սա'ապ Ահմէտ Սա'ապի «Արթին կը հարցադրէ անապատը», Սամիր Րաֆէհի «Սրտին դօշը» եւ Ապտըլ Գատէր Ապու Ռահմէի «...Ջուրին մէջ կը բնակին» խորագրեալ քերթուածներուն:

Դասական քերթողութեան քնարական եւ դիւցազներգական յատկանիշները արդի քնարերգութեան զուսպ ու պարզ կառոյցին մէջ ամփոփող վերոնշեալ բանաստեղծութիւնները իրենց ընտրած նիւթերը կը զարգացնեն նկարագրողական յուզականութեամբ: Պարզ

ու պատկերապաշտ արտայայտչաձեւը, մակբայներէ եւ ածականներէ առաւելագոյն չափով խուսափող լեզուն, նկարագրողական կշռութաւոր հոսքը, զայն զսպանակելու կոչուած հռետորական բոցկլտումները եւ հոգեվիճակն ու քերթողական տրամը պատկերի մը մէջ անշարժացնող սղաշրութիւնը այս քերթուածները կ'օժտեն դիմառնական անմիջական ու հաղորդական ոճով մը: Խնդրոյ առարկայ բոլոր բանաստեղծութիւններն ալ կը մեկնին պատմական տուեալներէ եւ Մեծ Եղեռնի ու Հայկական Ազատագրական Պայքարի կարգ մը խորհրդանիշներուն միջոցաւ կը հասնին Աղէտն ու անոր անդրադարձները ընդհանրացնող հոգեվիճակային գազաթնակէտերու: Օրինակ, Յ. Շիրազի մայրական քերթողութենէն վերցուած երկտող մէջբերումը կ'ըլլայ քերթողական պատճառ մը, որպէսզի Զաքարիա Հայտար հայ մօր ցաւն ու ողբը երգէ Յ. Շիրազի խորհրդանիշ մօր տիպարին սրտին բաբախումներով, վիշտերով, տենչերով եւ յոյզերով: Սա'ապ Ահմէտ Սա'ապի «Արթին կը հարցադրէ անապատը» խորագրեալ բանաստեղծութիւնը, իր կարգին, այս յատկանիշներուն վրայ կը գումարէ դիւցազներգական հռետորաչունչ առնականութիւն մը, երբ ջարդերու կեղրոնավայրեր հանդիսացած Շատտատէ, Մեսքենէ, Այն Արապ, Թէլ Ապիատ, Րազգա, Տէր-Զօր ու Եփրատ առանցքներուն զուգահեռ կը կեղրոնանայ Անի, Սօսի, Թամար, Հընրտ, Արթին (բանաստեղծութեան հերոսը, որ անապատին կը հարցադրէ իր նահատակ մեծ հօր, ինչպէս նաեւ՝ բիւրաւոր մարտիրոսներուն հետքերը) տիպարներուն վրայ եւ խորհրդանիշ հերոսներով քերթուածը կ'օժտէ դիւցազնական յաղթ շունչով մը, որուն վրայ գումարուելու կու գան թրջական բռնակալ լուծին դէմ ըմբոստացած Միսան (Միսա էլ-Աթրաշ), արաբ ազգայնական ղեկավարներու աքսորավայր Իզմիրն ու Կեսարիան, Պէյրութի եւ Դամասկոսի մէջ պահանջատիրութեան ձայնը խեղդելու նպատակով կախաղաններ բարձրացուած ձեմալ փաշան, սեֆերպերլիքը եւ այլ խորհրդանշաններ՝ հայ եւ արաբ զոյգ ժողովուրդներու ողբերգութենէն ու դիւցազնամարտէն հիւսելու համար ճշմարտութեան եւ Արդարութեան համամարդկային համանուագը: Նոյն մօտեցումը եւ գրեթէ գրական միեւնոյն յատկանիշները նաեւ կը գտնենք Ապտըլ Գատէր Ապու Ռահմէի «...Ջուրին մէջ կը բնակին» ծաւալուն բանաստեղծութեան մէջ, որ հայ Շիրինի եւ պաղեստինցի Մարիամի նուիրուած իր այս բանաստեղծութեամբ կը փառերգէ կեանքն ու շարժումը, որ կը հոսին կենսապարգեւ ջուրին պէս, ջուրին հետ, կը ջնջեն հեռաւորութիւն ու տարբերութիւն, որովհետեւ՝

«Հեռաւորութիւնը որ Երեւանը կը բաժնէ Երուսաղէմին
զուտ ցնորք է
զուտ ցնորք է շանթի մը մէջ խեղդուած
եւ կրկնեւոյթի մը մէջ գաղտնի»...

Որովհետեւ՝ Փառքի դուռը կը բացուի խաչելութեան նոյն Գողգոթան բարձրացած Երուսաղէմի եւ Երեւանի համար, Շիրինը կը դառնայ նոյնքան Մարիամ, Մարիամը՝ առաւել Շիրին, իսկ Արարատի եւ Քարմէլի միջեւ կը բարախէ սիրաը բանաստեղծին՝

«...Եւ երկուքին միջեւ սիրտս
կը կաթկթի
քարոզը
լերան»:

*
**

Կարելի է մանրամասնօրէն դրել Արարատին հասցէագրուած «սիրոյ երգեր»-ու ժողովածու «Արագիլներուն գաղթը...» հատորին արձակ ու քերթողական գրուածիւններուն ոճային առանձնատկութիւններուն, նիւթերու զանազանութեան, կառուցային արժանիքներուն, ինչպէս նաեւ՝ խոցելի կողմերուն մասին: Հաւանաբար հարկ է ծանրանալ քնարական արձակի («Ծովուն մօտ», «Արթին»), դասական արդիականացած պատմուածքի («Նաֆթատար կառքը», «Այդ ընկերը») կամ առաջին դէմքով ընթերցողին բացուող ամերիկեան պարզ պատմուածագրութեան («Արձաններու վաճառորդը», «Փոքր հրդեհներ», «Եփրեմ Քիրտեանի նկարը») բարերար աղբեցութիւններուն, դիպաշարի զարգացման տարբեր լուծումներուն, հերոսներու ներաշխարհի ծալքերը բացայայտող բանաստեղծական յուզականութեան եւ յարակից այլ հարցերու վրայ՝ աւելի ամբողջական գաղափար մը կազմելու համար գրուածիւններուն գեղարուեստական արժէքին եւ յատանիչներուն մասին: Սակայն, կը կարծենք, որ այս դիտանկիւնէն ընտրուած եւ թարգմանաբար ներկայացուած ստեղծագործութիւնները լաւագոյնս կը ներկայացնեն այս բազմաձայն հատորը: Մնաց որ, այս պարադային, գեղարուեստական հետաքրքրութեանէն առաջ եւ վերջ, էականը ա՛յն է, որ «Արագիլներուն գաղթը...» ժողովածուն ճշմարիտ արուեստագէտի խառնուածք ունեցող խումբ մը գրողներու հաշուոյն արձանագրուած ազնիւ ու իրաւ վկայութիւն մըն է, համամարդկային անանձնական հանգանակ մը, ըսա որուն՝ «Գրականութիւն մը արեւան երեւոյթ է, միտք, խելք, ոճ, արուեստ ըլլալէ առաջ»:

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Ա. ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԹԵՐԹԻՆ՝ « Ա Ջ Դ Ա Ր Ա Ր » Ի 200ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

1994ը հայ մամուլի նախակարապետ «Ազդարար»ի 200ամեակն է: Արդարեւ, 1794 Հոկտեմբեր 16ին, Հնդկաստանի Մատրաս քաղաքին մէջ հիմը կը դրուէր մեր առաջին թերթին: Եթէ պերճանք մըն էր 1794ին լոյս ընծայել մման հանդէս մը, այսօր մամուլը դարձած է մեր հոգին ու միտքը ձեւատրոդ եւ առաջնորդող գլխաւոր ազդակներէն մէկը:

200ամեակ է եւ այդ գիտակցութեամբ կը մօտենանք երեւոյթին: Յարութիւն քահանայ Շմաւոնեանի տպագրական եւ լրագրական փորձին իմացումն ու արժեւորումը անկատար պիտի մնան, եթէ հպանցիկ ակնարկի մը մէջ չանդրադառնանք Մատրասի գաղութին կազմաւորման, մա՛նաւանդ 17րդէն 18րդ դարերուն հոն տիրող օտար եւ հայ մթնոլորտին:

ՄԱՏՐԱՍԻ ԳԱՂՈՒԹԸ

Մատրասի հայկական գաղութին սկզբնաւորութեան մասին ծանօթութիւններ կը պակսին մեզի: Աշոտ Աբրահամեան անկասկած կը համարէ հայ առեւտրականներու զոյութիւնը՝ Սելէկեան եւ Արտաշիսեան հարստութեանց շրջանին (Ն.Ք., Բ. դար): Յ.Ք., Ը. դարուն կը մշուի Մար Թովմա Կանա հայ վաճառականի մը անունը: Անձերու մասին կատարուած ակնարկութիւններ կան, սակայն ո՛չ՝ գաղութի մը ներկայութեան մասին:

ԺՁ. դարու կիսուն, աւելի ճիշդը՝ 1547ին, Մատրաս քաղաքէն քիչ մը հեռու, Ս. Թովմայի բլրակին վրայ կառուցուած է հայ եկեղեցի մը, ինչ որ ենթադրել կու տայ բաւարար թիով հայոց ներկայութիւնը՝ առնուազն այդ թուականէն քանի մը տարի կամ քանի մը տասնամեակ առաջ: Գաղութը աւելի բազմամարդ դարձած է ԺԸ. դարուն եւ հիմնականօրէն տեղաւորուած՝ մոր քաղաքին կեդրոնական մասին մէջ, անոր գլխաւոր մայրուղիին վրայ, որ կոչուած է Armenian Street եւ ցարդ կը պահէ իր այս անունը:

ԺՁ.-ԺԷ. դարերուն, Հնդկաստան դարձած էր թատերաբեմ՝ երոպական գաղութատիրական պայքարներու: Այս մրցակցութենէն՝ սկիզբը հայերը կ'օգտուին եւ նիւթական հարստութիւն կը դիզեն: Անգլիոյ վերջնական յաղթանակով՝ հայոց տնտեսական ուժն ու դերը կը սկսին նուազում արձանագրել: Առաւելաբար Մատրասի գաղութը այս վերիվայրումներուն ոսպըն-

եակը կը հանդիսանայ: Հոն ունեցած ենք առեւտրականներ, որոնք իրենց ձեռքին մէջ կեդրոնացուցած են քանկագին քարերու, համեմներու, հնդկական կերպասներու եւ այլ ապրանքներու առեւտուրը: Այս գաղութին կորիզը կը կազմեն ջուղահայերը, որոնք 1604ին բռնի տեղափոխուած էին Պարսկաստան, եւ Հնդկաստանի առեւտրական բարգաւաճ վիճակէն հմայած՝ գաղթած էին Մատրաս:

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Մատրասը մեծ եւ բանուկ այն գլխաւոր նաւահանգիստն էր, ուր կեդրոնացած էին թէ՛ եւրոպական եւ թէ՛ հայկական դրամատիրական ուժերը: Եւրոպական վաճառականութեան հետ մրցակցելու համար, հայ վաճառականները կը միացնէին իրենց ուժերը, սակայն, ժամանակի ընթացքին պարտուած դուրս կու գային: Ուժերը անհաւասար էին: Օտար վաճառականներու եւ ընկերութիւններու ետին կանգնած էին Անգլիոյ, Ֆրանսայի եւ Փորթուգալի պետութիւնները: Հայերը քաղաքական գետնի վրայ որբեր էին, չունէին պետականութիւն: Հո՛ս էր իրենց ձախողութեան պատճառը: Հետեւաբար, մտածեցին անկախ պետականութեան մասին: Եւ որովհետեւ, այդ օրերուն, Անգլիոյ եւ Ֆրանսայի մէջ սահմանադրական իշխանութեան գաղափարաբանութիւնը ի պատուի էր, հնդկահայ քաղաքական մտածողութիւնը որդեգրեց զայն:

Մատրասահայ ազատագրական խմբակը կը բաղկանար հետեւեալներէն.— Շահամիր Սուլթանում Շահամիրեան, Մովսէս Բաղրամեան, Յակոբ Շահամիրեան, Յովսէփ Էմին եւ ուրիշներ: Կեդրոնական դէմքն էր Շ. Շահամիրեան, պարսկահայ դերձակ մը, որ Մատրասի մէջ կը դառնայ սեղանաւոր, ապա՝ մարգարտավաճառ եւ մեծ հարստութիւն կը դիզէ:

1772ին, խմբակը կը հիմնէ իր տպարանը, հնդկահայոց առաջին տպարանը: Հիմնադիրն է Շ. Սուլթանումեան, որ զայն կը մկրտէ իր վաղամեռ որդւոյն՝ Յակոբի անունով: Տպարանը, իբրեւ հիմնական նպատակ, կ'որդեգրէ հայ ժողովուրդի ազատագրական շարժման նուիրուած գրականութեան լոյս ընծայման աշխատանքը:

1772ին կը տպուի Մովսէս Բաղրամեանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գիրքը, որ ձեռով մը խմբակին քաղաքական դաւանանքն էր. կու տայ հայ ժողովուրդին համառօտ պատմութիւնը եւ մեր երկրին աշխարհագրութիւնը, կը թուէ հայ պետականութեան կորստեան գլխաւոր պատճառները.— միապետութիւն եւ ներքին երկպառակութիւններ: Նոր դաստիարակութիւն պէտք է տալ նոր սերունդին: Դպրոցներ բանալ, հայ երիտասարդութեան ինքնագիտակցութիւնը արթնցնել: Հայրենասիրական զգացումները արթնցնելու համար, գրականութիւն մշակել եւ հրատարակել:

1773ին, նոյն տպարանէն լոյս կը տեսնէր «Որոգայթ փառաց»ը, որ ստեղծուելիք սահմանադրական հանրապետութեան սահմանադրութեան նախագիծն էր: Հեղինակն էր Շահամիր Շահամիրեանը: Գիրքը գլխաւոր

Ազատագրական խմբակը, այլ գիրքի մը մէջ, կը պաշտպանէր եկեղեցին պետութենէն բաժնելու ծրագիրը:

Այդ օրերուն՝ Էջմիածնի կաթողիկոսական գահին վրայ բազմած էր Միսէոն կաթողիկոս Երեւանցին, որ կաթողիկոսական հեղինակութեան պահպանման հետամուտ անձ մը ըլլալով՝ չէր կրնար խմբակին ծրագիրին հետ համաձայն գտնուիլ: Նոյնիսկ կը բանադրէր «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»ի հեղինակ Մովսէս Բաղրամեանը:

Ահաւասիկ այս պայմաններուն մէջ է, որ իր մշակութային առաքելութեան կը լծուի համեստ քահանայ մը, որուն անունը ոսկեայ տառերով պիտի քանդակուէր մեր մամուլի եւ մշակոյթի պատմութեան տոմարին մէջ:

ՆԱԽԸՆԹԱՅ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ

Մինչեւ հայ լրագրութեան 100ամեակը, Յարութիւն քինյ. Շմաւոնեանի անձը եւ գործը անորոշութեան մէջ էին:

1893ին, Թիֆլիսի «Տարագ» շաբաթաթերթին մէջ (թ. 24, Յունիս 23, էջ 380-381) Տ. Չար լոյս ընծայեց «Հայկական լրագրութեան 100ամեակը եւ հայոց «Ազդարար» լրագիրը» յօդուածը, զոր ձեռքի տակ չունիմք: Տեղեկութիւնը վերցուցինք Յովհաննէս Պետրոսեանի «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» մատենագիտական գործէն (Երեւան, 1956, էջ 621):

Հայր Գարեգին Չարբեհանալեան, ակնարկելով այդ յօդուածին՝ կը գրէ. «Հետաքննական կենսագիր տեղեկութիւններ հաղորդեց Շմաւոնեանի վրայ, որ ընդհանրապէս, ինչպէս նաեւ մեզի ալ, անծանօթ էին» (էջ 204):

Հայր Գ. Գալէմքեարեան, «Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբբանէ մինչեւ մեր ժամանակները», հատ. Ա. (1794-1860), Վիեննա, 1893:

Հայր Գարեգին Չարբեհանալեան, «Պատմութիւն հայկական տպագրութեան» (Վենետիկ, 1895), էջ 200-204:

Լեօ, «Հայկական տպագրութիւն», հատ. Բ., XIII դար (Թիֆլիս, 1901), էջ 596-608: Ամէնէն երկար անդրադարձն է: «Ազդարար»ի վերաբերեալ տեղեկութիւնները վերցուցած է Հայր Գալէմքեարեանի վերոյիշեալ գործէն:

Արտաշէս Բ. Կարինեան, «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմութեան», հատ. Ա. (Երեւան, 1956), էջ 185-227: Ամէնէն ընդարձակ ուսումնասիրութիւնը: Մակայն Կարինեան ունի կամայական դատումներ եւ վարկածներ:

Մարգարիտ Մխիթարեան «Ազդարար»ի վերատպութեան (Վենետիկ, 1970) նախաբանը գրած է «Երկու խօսք» խորագիրով (էջ V-XVIII), ուր լուրջ քննութեան կ'ենթարկէ «Ազդարար»ի բովանդակութիւնը:

«Հայ դիրքը 1512-1800 թուականներին» (Երեւան, 1988): Կը նշէ Շմաւոնեան քինյ.ի հրատարակած գործերը, մանրամասն տեղեկութիւններով: Մէջբերած է այդ հրատարակութեանց յիշատակարանները, որոնք քանկագին տեղեկութիւններ կը բովանդակեն Շահամիրեանի տպարանին եւ անոր գործակիցներուն մասին: Լայնօրէն օգտագործած ենք զանոնք:

Շմաւոնեան քահանային շատեր անդրադարձած են, սակայն մեծ մասամբ կրկնած են վերոյիշեալ բանասերներուն եւ պատմաբաններուն կարծիքներն ու դատումները:


Մեր այս ուսումնասիրութեան նպատակն է, օգտագործելով վերոյիշեալ աշխատասիրութիւնները, նաեւ այլ աղբիւրներ, կատարել Շմաւոնեանի կեանքին եւ գործունէութեան յստակացումը: Հետեւաբար, ամէնէն անցնշան տեղեկութիւնն իսկ քաղած ենք, մեր նպատակին հասնելու համար:

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ Ն ԱԽԱՀԱՅՐԸ

Յարութիւն քինյ. Շմաւոնեանի կեանքին մասին կցկտուր տեղեկութիւններ միայն հասած են մեզի: Գիտենք, որ ան ծնած է Պարսկաստանի Շիրազ քաղաքը, 1750ի: Հօրը անունը՝ Շմաւոն Շիրազեցի: Հաւանքաբար հօրը անունէն յառաջացած է իր մականունը:

Ե՞րբ քահանայացած է, չենք գիտեր: Սակայն, ձեռնադրուելէ ետք, մէկ շաբթուան ընթացքին կը կորսնցնէ իր երկու զաւակները: Այս դժբախտութիւնը խորապէս կ'ազդէ իր վրայ եւ կը բարձրանայ Շիրազէն երկու ժամուան հեռաւորութեան վրայ գտնուող Բաբաքուի լեռը, որուն ստորոտին կը գտնուէր հայոց գերեզմանատունը:

Լերան վրայ կը գտնուէր տէրվիշներու վանք մը: Անոնց կարգը ընդունելով՝ եօթը տարի կը ճգնի: Այդ շրջանին կը տիրապետէ պարսկերէնի եւ



արաբերէնի: Երեցկնոջ աղաչանքներուն անսալով՝ կը լքէ վանքը եւ կը վերամիանայ իր ընտանիքին: 1784ին, քահանայական պաշտօնով կը փոխադրուի Մատրաս: Չինք գործուողն է Նոր Ջուղայի առաջնորդ Սկրտիչ արքեպիսկոպոսը, Շմաւոնեանի իսկ հաւաստիացումով(1): Արտաշէս Կարինեան կը սխալի, երբ կը գրէ. «Եօթ տարիներն անցնում են եւ Շմաւոնեանը նոր որոշում է ընդունում: Դէն նետելով դերվիշի վերարկուն, նա թողնում է Շիրազի սահմանները եւ, թափառական ուխտագնացի ցուպը ձեռքին, ուղեւորւում դէպի Հնդկաստան: ...Թէ ո՛ւր է գնում Շմաւոնեանը, ո՛ւր է տեսնում Հնդկական նոր վայրերում, ինչպէ՞ս է ապրում սկզբնական շրջանին,— ո՛չ մի աղբիւր ամենահեռաւոր ակնարկ անգամ չի հաղորդում այդ ամէնի մասին: ...Գուցէ Յ. Շմաւոնեանն էլ Հնդկական նոր վայրերում թափառական ուխտաւորների նման նոր «ճշմարտութիւն» էր որոնում Հնդկական քրմատըներում՝ իմաստասէր բրամինների կամ աշխարհատեսց ֆակիրների մօտ»(2):

Ինչպէս տեսանք, ինք ուղարկուած է Մատրաս (եւ ո՛չ թէ գացած է իբրեւ քափառական ուխտագնաց), իբրեւ հոգեւոր հովիւ՝ քաղաքին Ս. Աստուածածին եկեղեցւոյ, որ կառուցուած է 1772ին: Ա. Կարինեան կ'անտեղեակ է Շմաւոնեան քահանայի վկայութեան, կամ ալ անտեսած է գայն, իրեն սիրելի վարկած մը պաշտպանելու համար, թէ՛ Շմաւոնեան քահանայի Մատրաս գտնուիլը շարունակութիւնն է տէրվիշական եօթնամեայ ճգնութեան, ի խնդիր նոր ճշմարտութեան որոնումի:

Մատրասի մէջ կը քահանայագործէ 1784-1824, քառասուն տարի: Կը սիրուի շրջապատէն: Քահանայագործութեան կողքին կը լծուի տպագրական եւ լրագրական աշխատանքներու, որոնց պիտի անդրադառնանք առանձնապէս: Բայց մինչ այդ, քանի մը տող իր ծնողքին եւ ընտանիքին մասին:

Մեր հին ձեռագիրներու եւ տպագիր գիրքերու յիշատակարաններուն մէջ գրչագիրները, հեղինակները յաճախ կը նշեն իրենց ընտանիքին, գերդաստանին բոլոր անդամները: Շմաւոնեան քահանայ շատ զուսպ է այս մարզին մէջ: Իր հրատարակած գիրքերուն յիշատակարաններուն մէջ երկու տեղ կը նշէ հօրը անունը՝ Շմաւոն, իր աղջնակին («ղստրիկն իմ») անունը՝ Մարիամ(3), ակնարկ մօրը՝ առանց անուան նշումի: Իսկ ո՛չ մէկ տեղ ակնարկ կամ նշում երեցկնոջ եւ իր վաղամեռ երկու աղջիկներուն: Քիչ մը զարմանալի եւ միաժամանակ անբացատրելի կը գտնենք երեսոյթը:

Մօրը անուան նշումին կը հանդիպինք անոր մահուան առիթով: «Ազգարար»ի ընթերցողներէն կամ եկեղեցւոյ հաւատացեալներէն մէկը ցաւակցական երկտող մը կը դրկէ Շմաւոնեան քահանային: Այս է երկտողը.

«Նիրհան 28 [Մարտ 24, 1795] Ծերոնի տիկին Վարդինի Շմաւոն մայր Սրբակրօն Տէր Յարութիւն Շմաւոնեանի, Աւագ քահանային տեղոյս»(4):

Իբրեւ լուր, մահազդ կամ անոր յիշատակին ո՛չ մէկ գրութիւն թերթին մէջ:

ՇՄԱԻՈՆԵԱՆԻ ՏՊԱՐԱՆԸ ԵՒ ՏՊԱԳՐԱԾ ԳՈՐԾԵՐԸ

Պարտաւորուած ենք անդրադառնալու Յարութիւն քինյ. Շմաւոնեանի տպարանին, անձնակազմին եւ տպագրած գործերուն: Այս երեքը հիմնական թթխմորը եւ կորիզը հանդիսացան «Ազգարար»ի հրատարակութեան:

Տպարանը գտնուած է Մատրասի Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ: Տրդատ քինյ. Յովակիմեան կը վկայէ 1929ին. «Տպարանը այժմ գոյութիւն ունի՝ միայն իբրեւ շէնք»(5): Կրնայ ցարդ գոյութիւն ունենալ:

Տպարանը հիմնուած է 1789ին եւ նոյն տարին իսկ լոյս ընծայած է իր առաջին հրատարակութիւնը: 1988ին (Երեւան) լոյս տեսաւ «Հայ գիրքը 1512-1800 թուականներին» մատենագիտական ծաւալուն գործը, աշխատակցութեամբ Նինել Ոսկանեանի, Զնարիկ Կորկոտեանի եւ Անթառամ Սաւալեանի: Հոն կը տրուին իւրաքանչիւր գիրքի վերաբերեալ մանրամասն տեղեկութիւններ. գիրքի անուն, տիտղոսաբերք, բովանդակութիւն, յառաջաբան, վերջաբան, յիշատակարան, եւայլն:

Հատորին մէջ նշուած են Շմաւոնեանի տպարանին բոլոր հրատարակութիւնները (թիով 19):

Շմաւոնեան քինյ. շարունակելով մեր գրչագիրներու եւ իր նախընթաց տպարանատերերուն բարի սովորութիւնն ու ատենագրութիւնը, գրեթէ իւրաքանչիւր գիրքի կցած է երկար կամ կարճ յիշատակարան մը, որ բանկազին տեղեկութիւններու շտեմարան մըն է: Այդ յիշատակարաններէն պիտի քաղենք մեզի անհրաժշտը:

Իր Ա. հրատարակութեան (Պատմութիւն Մարիանէ կուսին) անլանաթերթին (տիտղոսաբերքին) մէջ տպարանին տառերուն ակնարկելով՝ կը գրէ. «...Տառիւ յորինեցեալ ի ձեռագործէ Յարութիւն քահանայի Որդոյ Շմաւոնեան Շիրազեցոյ...»(6):

Իսկ յիշատակարանին մէջ կը գրէ. «...Ով ոք վայելէք զքաղցրաճաշակ զրթուկս այս, յիշեցէք որդի վշտաց եւ դոյտ զրացս, որ յորինեցաւ ձեռամբ իմով՝ ամենայն պարագայս թէ տառաշինութիւնն, եւ թէ շարունակ կապարից»(7):

Ինք տառերու ձուլման փորձառութիւն ունէր: Շահամիրեանի խընդրանքով տառեր պատրաստած է եւ ժամանակի ընթացքին՝ սիրահարուած է գործին: Ինք կը վկայէ «Փեղիսարիոս» գիրքին վերջաւորութեան(8):

Ուրեմն՝ ինք յօրինած եւ ձուլել տուած է իրեն անհրաժեշտ տառերը: Նաեւ գրաշար է: Իր յիշատակարաններուն մէջ ակնարկութիւն չգտանք, սակայն իրեն կը վերագրուի իր տպարանին մամուլին պատրաստութիւնը, հաւանաբար երկաթագործի եւ ձուլագործի օժանդակութեամբ:

Հարց կրնայ ծագիլ, թէ Շմաւոնեան քինյ. ինչո՞ւ չփորձեց գնել Շահամիրեանի նոր դադրած տպարանին տառերն ու կազմածները: Շահամիրեանի քաղաքական ուղեգիծը դատապարտուած էր Էջմիածնի օրուան կաթողիկոս Սիմէոն Երեւանցիին կողմէ: Տպարանին գնումը խէք աչքով

կրնար դիտուիլ եւ մեկնաբանուիլ կաթողիկոսին կողմէ: Երկրորդ վարկած մը. թերեւ Շահամիրեանի տպագրական տառերը գեղեցիկ չէր գտներ, հակառակ որ իր գործակցութիւնը բերած էր անոնցմէ ոմանց պատրաստութեան եւ ձուլման մէջ: Թերեւս նորը եւ անլի գեղեցիկը պատրաստելու հետամուտ էր:

Շմաւոնեանի տպագրած գրքոյկներն ու գիրքերը հետեւեալներն են.

- 1.- «Պատմութիւն Մարիանէ կուսին», 1789:
 - 2.- Աղեքսանդր Ջուղայեցի, «Աղօթամատոյց», 1790:
 - 3.- «Պատմութիւն կայսերն Փոնցիանոսի», 1790:
 - 4.- Թաղէոս Սոզիմեանց, «Ողբ Հայաստանեաց», 1791:
 - 5.- Յովսէփ արքս. Արղութեանց, «Օրինակ Հանդիսաւոր ծանուցման եւ ողբոց», 1791: Բ տպագր., 1792:
 - 6.- Պաղտասար Դալի, «Քերականութիւն» (2 հատոր), 1791:
 - 7.- Սիմէոն Երեւանցի, «Տաղարան փոքրիկ», 1791:
 - 8.- Յակոբ Թաղեան, «Երկրաչափութիւն», 1792:
 - 9.- Ներսէս Շնորհալի, «Յիսուս որդի», 1792:
 - 10.- «Պատմութիւն անցից սրբակրօն Յակոբ արքեպիսկոպոսի», 1793:
 - 11.- Պորփիր, «Ներածութիւն», - Դալիք Անյաղք, «Վերծանութիւնք ներածութեան Պորփիրի», 1793:
1794էն 1796, երբ լոյս կ'ընծայէ «Ազգարար»ը, ըստ երեսոյթին ո՛չ մէկ այլ հրատարակութիւն կը կատարէ: Ժամանակը հազիւ կը բաւէ թերթին հրատարակութեան:
 - 12.- Դալիք Անյաղք, «Գիրք սահմանաց» - Առաքել վարդապետ, «Լուծմունք սահմանացն Դալիքի», 1797:
 - 13.- «Ղեկավար մանկանց», 1797:
 - 14.- «Մաղմոս Դալիքի» (ձեռքի տակ եղած օրինակին անուանաթերթը ինկած ըլլալով, կարելի չէ եղած ճշդել տարեթիւը):
 - 15.- «Թարգմանութիւն զրոյ միոյ պարոն Շամիր Սուլթանուեանէ առ մեծ բժիշկն քաղաքիս պարոն Զեմս Անդրսանն», 1793:
1798էն 1802 ո՛չ մէկ հրատարակութիւն՝ իր տպարանէն: 1803-1809 տպարանը կը գործէ եւ կ'արտադրէ հետեւեալ գործերը.
 - 16.- «Փոքրիկ բառագիր»: Անգլիացոց լեզուէ թարգմանեալ ի հայ բարբառ ի Սկրտում Սիմոնեանէ, 1803:
 - 17.- «Տետրակ աղօթից», 1804:
 - 18.- «Անցք կամ քառասուն երեք, եւ քառասուն չորսերորդ ժողովոց Մատրասիս հայոց», 1806:
 - 19.- Մարմնոնել, «Բեկիսարիոս - Յարացոյց անյիշաչարութեան», 1809(9):
- Մ. Մխիթարեան կը գրէ. ««Ազգարար»ի դադարից յետոյ, Շմաւոնեանը մինչեւ 1810 թուականը լոյս ընծայում է եւս մի քանի գիրք»(10): Ինչպէս մեր վերոյիշեալ ցուցակագրումէն ի յայտ կու գայ, 1809ին լոյս ընծայած է վերջին գիրքը:

Հետեւաբար, ցարդ յայտնաբերուած Շահամիրեանի հրատարակութիւններէն դատելով, 1789-1809 ան լոյս ընծայած է 19 գրքոյկ եւ զիրք, 20 հրատարակութիւն (մէկ գրքոյկը կրկնակ տպագրութեան արժանացած է), առաւել «Ազգարար»ի 18 թիւերը:

Հրատարակութիւնները այլազան են: Կրօնականին կողքին, կը բովանդակեն լեզուական, կենսագրական, իմաստասիրական եւ երկրաչափական նիւթեր: Անոնք ցոյց կու տան Շահամիրեանի հետաքրքրութեանց ընդարձակ սահմանները:

Վերջին հրատարակութեան՝ «Բեկիսարիոս», բացատրողագիր մը կցած է «Առ. բարեմիտ վերծանողս» խորագիրով (էջ 283-285), որ իր կէտքին համառօտ պատմութիւնն է: Հոն կ'անդրադառնայ տառերու պատրաստութեան գործին: Վերջին հրատարակութեան առիթով կը պատրաստէ նոր տառեր, զորս «գեղատեսիլ» կը գտնէ: Չեռքի տակ չունինք Շմաւոնեանի այլ հրատարակութիւնները, բացի «Ազգարար»էն: Իրապէս գեղեցիկ են: Լեօ, ակնարկելով Շմաւոնեանի տպարանին տառերուն, կը գրէ.

«Այդտեղ [Մատրասի մէջ – Ա.Տ.Խ.] նա իր աշխատանքով, իր սեփական ծախսով հայերէն տառեր է պատրաստում, որոնց նա անլանում է «որդի վշտաց», ակնարկելով, երեւի, իր այն չարչարանքները, որոնք հասկանալի եւ անխուսափելի էին այդ դէպքում, երբ ամէն ինչ ինքը պիտի պատրաստէր: Պէտք է խոստովանել, որ թէեւ շատ էին չարչարանքները, բայց Շմաւոնեանը Շահամիրեանից անհամեմատ բախտաւոր էր. նրա պատրաստած տառերը Շահամիրեանի տառերից աւելի գեղեցիկ, կանոնաւոր էին, ինչպէս նաեւ տպագրութիւնը անհամեմատ մաքուր էր եւ պարզ»(11):

Բացատրողագիրին վերջաւորութեան՝ պատճառաբանելով իր ծերութիւնը, կը յայտնէ գործէն քաշուելու փափաքը եւ տպարանը կը յանձնէ 2-3 հոգիի, որոնք տպարանական գործերու քաջատեղեակ էին եւ կրնային գործը շարունակել: Ըստ երեւոյթին, տպարանը դադրած ըլլալու է, որովհետեւ Հայկ Դաւթեանի նշուած գործին մէջ, Մատրասի մէջ, Շահամիրեանի նշած անուններուն կողմէ ոչ մէկ հրատարակութիւն կայ:

Շմաւոնեան քահանայի այս բացատրողագիրը, ձեւով մը՝ կտակը, կու տանք ամբողջութեամբ, պահելով իր կէտադրութիւնը եւ ուղղագրութիւնը:

«Բեկիսարիոս»ը ունինք մեր անձնական հաւաքածոյին մէջ: Լաւ վիճակի մէջ չէ զիրքին վերջին մասը: Բաւարար մելան չէ դրուած տպագրութեան ատեն: Ունի կրճատումներ, զորս փորձեցինք կռահել: Կրնան վրիպակներ ըլլալ:

Մեր որոնումները առաջնորդեցին յայտնութեան մը: Շահամիրեանի նշած անձերը գործը չեն շարունակած որոշապէս: Բայց կրնայ տպարանը ստանձնած ըլլալ Շահամիրեանի նախկին գործակիցներէն Սարգիս Ծատուր Աղաւալեանը, որ 1809-1816, լոյս ընծայած է 6 գիրք: Իր տպարանին ակնարկելով՝ կը նշէ. «Ի նորին նորակերտ տպարանի որ ի Մատրաս»:

Մեր ենթադրութեան հիմը այն է, որ Շահամիրեանի վերջին հրատարակութեան եւ Աղաւալեանի հրատարակութեանց առաջինին՝ «Թանգարան բարեգարգ»ին քարգմանիչն է նոյն անձը՝ Պետրոս վրդ. Պուոնագեան:

Աղաւալեան իր տպարանը կրնայ «նորակերտ» կոչած ըլլալ, որովհետեւ կայ սեփականատիրոջ փոփոխութիւն, նաեւ կրնայ նոր տառեր ձուլել տուած ըլլալ: Աղաւալեանի հրատարակութիւններուն տառերը պէտք է բաղդատել Շահամիրեանի վերջին հրատարակութեան հետ, նաեւ Աղաւալեանի հրատարակութիւնները աչքէ անցընել եւ եթէ յիշատակարաններ ունին, հոն փնտռել որոշ հետքեր:

ՇՄԱՒՈՆԵԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԻՅՆԵՐԸ

Յարութիւն քինյ. Շմաւոնեանի հմա՞յքը, նուիրումին անշահախնդրութիւնը, գործին ազգային եւ սրբազան հանգամանքը, հնդկահայոց տարբեր խմորէ շինուած ըլլա՞լը, դարուն ոգի՞ն՝ չենք զիտեր. սակայն այս բոլորը, առանձնաբար թէ հաւաքաբար, իրենց գործօն դերը ունեցած են, որ այս առաքելատիպ քահանային շուրջ կազմուի խմբակ մը, իսկական միաբանութիւն մը.– անձերու, միտքի, հոգիի եւ տեսլականի–, որ անսակարկ նուիրուածութեամբ փարած է գործին, շատ յաճախ անվճար: Սկիզբը փոքրաքիւ է այդ միաբանութիւնը, սակայն տարիներու ընթացքին, ստուարացած է: Խմբակին անդամները գրաշար են, տպագրիչ, մելան հայթայթող, կազմարար, սրբագրիչ, մեկեմաս, եւայլն:

ԱՌ ԲԱՐԵՄԻՏ ՎԵՐԾԱՆՈՂՍ

Իմաստացեալն Աստուծոյ Սողոմոն ջանայ միշտ բարի օրինակ տալ ամենայն գործոց, եւ «ի յառակախօսութիւն իւրում» ասէ իմաստութիւն եւս ճանապարհաց գովի: Արդարեւ՝ գովելի է ամենայն բարեաց վախճան, ուրեմն՝ հարկ է ինձ, սկիզբն եւ կատարումն Տեառն իմոյ, ասլ համառօտ ազդումն՝ եւ պատմել մի ըստ միոջէ, նախկին տնօրինման՝ աւերման՝ վերանորոգման իմոյ: Տէրն իմ, հրամանաւ՝ նոր ջուղայու Առաջնորդ, Մկրտիչ Արքեպիսկոպոսին՝ առաջադրեալ էր դալ ՚ի մադրաս, վասն քահանայագործութեան հայոց, յաւուր միում՝ Ազնուամիտ Աղայ Շամիր Սուլթան այրն հանջարեղ, ասացեալ է, Տէր հայր, լսեմ շնորհալի միտս ունիս, նօտր գիր մի նու՝ պակաս է ՚ի տպարանէ մերմէ, արդ կարօղ ես յօրինել քանգի՝ ցանկալի է ինձ այդ տպարան, վասն անուան որդոյ իմոյ: Տէրն իմ երբէք չէր տեսեալ այն գործ, եւ ոչ լուեալ բնաւ, ապաւինելով՝ ՚ի տուիչն բարեաց՝ Սուրբ հոգին, խոստացեալ էր շինել, որպէս կայ նոյն գիր մինչեւ ցայսօր, յետ այնորիկ՝ առաւել վստահացեալ եւ սիրահարեալ, ձեռնամուխ եղեւ, բոլոր գիրն ամենայն պարագայիւքն յարմարել, ոչ շատացաւ նովաւ՝ միայն՝ այլ եւ բազմաց յազդէն հայոց կերակրելով,

եւ ուսուցանելով, յոգնականութեամբ՝ Ազնուատոհմն Աղայ Նազար Յակոբջան Շամիրեանց, բարեացապարտ յառնէ (մէկ բառ անընթեռնելի – Ա.Տ.Խ.) ուսելոցս յայտնի է 'ի բազում տեղիս վերջ դրոց որք տըպեալք են ինեւ: Նարդենիս կամ եղեւ Տեառն իմոյ՝ անձեւ եւ անհարմար գրեանքն՝ նորապէս փոխել գեղեցկատեսիլ գրով, զոր ահա՛ տեսանէք այս բելիսարիոսն, ծախիւք եւ արդեամբք քաջատոհմիկ, Աղայ Սամուէլ Միքայէլ Մուրատեանին, եւ գործակցութեամբ շնորհալի եւ բարեկամ հաւատարիմ անխզելի սիրով՝ անջնջելի յիշատակութեան արժանի՝ անակնկալ վաստակօք, Պրն. Աւետիս Յարութիւն Շիրխումեանին օգնական ամենայնի Տեառն իմոյ: Ընդ նմին գործարանիս վերակացու Պարոն Սիմէօն Մկրտումն Շիրազեցի Ծմրկեանց, որ յամենայն գործոց թէ 'ի շարելն՝ թէ կապարաշինութեան եւ թէ ոսկեզօծ կազմելն, բոլոր գրքոյս՝ միայնակ թարց օգնականի, աւարտ հասոյց: Եւ՛ ընդ հովանեաւ՝ Տեառն իմոյ, նորոգ ուսեալքն՝ են ընտիր ու լաւ, որք են Չինիպուլէ բնակիչ փունթչերու եւ Գէվորք Սահակեան ամենայնի տեղեակ: Ահա՛ այսուհետեւ Տէրն իմ ծերացեալ է՛ եթող ինձ կամաց այնորիկ, որք կարող են իւրեանց ծախիւն անխարդախ դիրք, եւ նորոգ անմեղածին բան տպագրել տալ ազատապէս:

Ծնատնեան քինյ., երախտագէտ մարդ, կը նշէ անոնց անունն ու կատարած գործը, իրաքանչիւր հրատարակութեան սկիզբը կամ յիշատակարանին մէջ:

«Հայ դիրքը 1512-1800 թուականներին» մատենագիտական գործը մէջբերած է այդ յիշատակարանները: Մեզի անհրաժեշտը կը քաղենք անոնցմէ:

Անուններու նշումներու պարագային, երբեմն կը նշուին ծննդավայրերը, հորը անունը, մականունը, երբեմն ալ ոչ: Մենք փորձած ենք զանազան տեղեկութիւններ համախմբել եւ այդպէս նշել:

1)Խաչիկ Ծատուր Նոր Ջուղայու քարիզեցի Ջարիֆեանց– «առանց վարձու օգնական ամենայնի» (էջ 636), «զձեռնասուն աշակերտն իմ, եւ զհոգեւոր որդեակն, զվաստակակիցն համայն դործոց տպարանիս» (էջ 652): Կը նշէ նաեւ էջ 643ի մէջ:

Այլ տեղ կը մանրամասնէ. «...զհոգեծին զաւակն իմ զձեռնասուն աշակերտն, զԽաչիկ Ծատուր Ջարիֆեանն Նոր Ջուղայու Թաւրիզեցին... զի ի սկզբանէ աշխատող է եւ օգնական իմ եւ համայն գործարանիս. մանաւանդ փորագրութեան տառից, եւ ոչ եթէ միայն հայոց այլեւ այլազգեաց եւ պարսից» (էջ 682):

2)Ջերան Յակոբ Սիմեցի, որ նախապէս գործած է Ծահամիրեանի տպարանին մէջ (էջ 636): Էջ 643ի մէջ կը գրէ. «Արժան է բարի յիշատակն թողուլ ի վերայ աշխարհի զպարոն Յակոբ Սիմոն Այուբեանց կոչեցեալն որ նախկին յորդորիչ գտաւ եւ ձրի աշխատէր ի վերայ տպարանիս առ ի յօգուտ ազգին խորհելով»: Կ'ենթադրենք, որ նոյն Յակոբ Սիմեցին ըլլալու է:

3)Տէր Սամուէլ Ղայ[ի]թմազեանց թիֆլիսեցի, որդի Փիլիպպոսի: Ծնա-

տնեան քինյ. դժգոհութիւն ունի որ իր աշխատանքը ըստ արժանոյն չի գնահատուիր: Տէր Սամուէլ զինք գնահատողներէն մէկն է: Անոր մասին կը գրէ. «...եւ ի յանակնկալ տեղուղէ հասոյց մեզ ի թիկունս մեր օգնական» (էջ 651): Յստակ չէ հաստատումը– բարոյական քաջալերա՞նք է, նիւթական օժանդակութիւն, թէ գիրքերու սպառման խոստում:

Այլ տեղ կը նշէ զայն նոր մականունով՝ Տէր Սամուէլ քինյ. Ղայթմազեանց Փիլիպպոսեան, իբրեւ տուեալ գիրքի տպագրութեան թելադրանքը ընող եւ սրբագրող (էջ 663): Ըստ երեւոյթին, Թիֆլիսէն փոխադրուած է Մատրաս:

4-5)Յարութիւն Կարապետեան Ջուղայեցի եւ Մանուկ Յակոբջանեան, «վասն առատաձեռնութեան եւ օգնական լինելոյ ծախուցն գործարանիս» (էջ 652):

6)Կիրակոս Կարապետեան Շիրազցի, «քրտնաջան աշխատաւորն գործարանիս եւ զկապարաշարն գրոյս» (էջ 652):

Այլ տեղ՝ «զարեան առուն զԿիրակոս Կարապետեան Շիրազեցին Ծմրիկեանց, զքրտնաջան վաստակակիցն իմ» (էջ 682):

7)Յակոբ, «ցրուող կապարեաց տպարանիս» (էջ 652): Կրնայ մեր նշած Յակոբ Սիմեցին ըլլալ:

Այլ տեղ՝ «զՅակոբն որդեգիր պարոն Սահակին Աղայ Նուրեանց Թաւրիզեցոյ Նոր Ջուղայու, զի գործունեայ է եւ բազմավաստակ տպարանիս, եւ սրբագրողն կապարաց զոր ձրիապէս վաստակի» (էջ 682):

8)Տէր Մարտիրոս քինյ. Դաւթեան, Նոր Ջուղայի հոգեւոր հովիւ: Մեկեմաս եւ հեղինակ:

9)Աւետ Մեթեան: Մեկեմաս:

10)Աղայ Մարութ Յովսէփեան Փոչնաչեանց, «զնախկին բարեկամն իմ եւ հարազատ սիրելին» (էջ 682): Մեկեմաս:

11)Բարդամ Սարգիս Քալանթարեան, «զնախկին սիրելի եւ ձեռնասուն, որ զճնճղագիրն ետ փորագրել. եւ շնորեաց տպարանիս յիշատակ» (էջ 682):

12)Բաղդասար Հաֆտեան Ափկար Արաբեանց Նոր Ջուղայու Պըռուվէնց թաղեցի, «զչարողն կապարեաց, զքրտնաթոր վաստակաւորն» (էջ 682):

13)Թորոս Կարապետեան, «յուրվաջան բարեվաստակ խոնարհամիտ», «ոսկէ կազմողն դրոց» (էջ 682):

14-15)Խաղախորդ Գեորգ Աղայջանեան թիֆլիզեցի եւ Դաւիթ Գեորգեան վրաստանցի, «զոյգք հաւատարիմ սատարք եւ գործունեայք ի մրազարկութիւնս եւ թէ յայլ գործս» (էջ 682):

16)Ջոնի որդի Լազր՝ «գրքակազմ» եւ Մանուկ՝ ընդոծին պարոն Յարութիւն Յակոբ Թաղեանի: Ուրիշներու կարգին, «սոքա են որք տքնին եւ աշխատին ի տպարանին» (էջ 682):

17)Տէր Թաղեոս քինյ. Անդրիասեան Սոզիմեանց, «զոր միշտ ունի ջանասիրութիւն սակս բարութեան բազմաց» (էջ 682):

Սոգիմեանց հեղինակ է, որուն գիրքը լոյս ընծայած է Ծնաւոնեան քահանան: Հաւանաբար ան կ'օգնէ տպարանին, տպագրութիւնը գիրքերուն եւ անոնց սրբագրութեան աշխատանքներուն մէջ:

18)Տէր Մարտիրոս քհնյ. Դաւթեան, Նոր Ջողայու Ղարազելցի:

1803-1809, Ծնաւոնեանի չորս հրատարակութիւններուն յիշատակարանները ձեռքի տակ չունինք, բացի վերջին հրատարակութենէն՝ «Բեկիսարիոս»: Մեր անձնական գրադարանին մէջ ունինք օրինակ մը: Անոր յիշատակարանին մէջ կը նշուին:

19)Աղայ Սամուէլ Միքայէլ Մուրատեան: Մեկեմաս (էջ 384):

20)Աւետիս Յարութիւն Երիխումեան, «օգնական ամենայնի», «անակնկալ վաստակօք» (էջ 284):

21)Միսէօն Սկրտում Երրագցի, «գործարանիս վերակացու», «որ յամենայն գործոց թէ 'ի շարեւն' թէ կապարաշինութիւն եւ թէ ոսկեզօծ կազմելն, բոլոր գրքոյս՝ միայնակ թարց օգնականի, աւարտ հասոյց» (էջ 284-285):

22-23)Չիմիպուլէ, բնակիչ Փունթլերու եւ Գէորգ Սահակեան, «նորոգ ուսեալքն՝ են ընտիր ու լաւ... ամենայնի տեղեակ» (էջ 285):

Ունեցած է նաեւ այլ մեկեմասներ, որոշ գիրքերու հրատարակութիւնը թելադրողներ եւ առաջարկողներ: Որոշ գիրքեր Ծնաւոնեան քհնյ. լոյս ընծայած է իր ծախսով (կը նշէ անուանաթերթերուն մէջ):

Անուններն ու մականունները միօրինակ չեն նշուիր: Չամազան տեղեր՝ զանգան ձեռքով նշուած են: Բառերը միօրինակ չեն. օրինակ՝ կապար քառին սեռականը երեք ձեւով նշուած է – կապարաց, կապարեաց եւ կապարից:

Գիրքերուն տպաքանակը յայտնի չէ: Իր առաջին հրատարակութեան՝ «Պատմութիւն Մարիանէ կուսին» (1789) յիշատակարանին մէջ կը գրէ. «Արդ ապագրեցաւ գրքուկս այս երկու հարիւր հատս» (էջ 636): Բոլորն ալ տպուեցան այս քանակով, թէ յաւելում կամ նուազում կրեց այս քանակը, չենք գիտեր:

(Վերջը յաջորդով)

ԱՐՏԱԾԷՍ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

- (1) «Բեկիսարիոս» – Յարացոյց անյիշարութեան (Մադրաս, 1809), էջ 283:
- (2) «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմութեան», հատ. 1 (Երեւան, 1956), էջ 194:
- (3) «Հայ գիրքը 1512-1800...», էջ 682:
- (4) «Ազգարար», վերատպ., 1795, էջ 103:
- (5) «Մադրասի հայոց անցեալն ու ներկայն», «Տաթև» տարեգիրք, Ե. տարի (Հալէպ, 1929), էջ 373:
- (6) «Հայ գիրքը...», էջ 635:
- (7) Նոյն, էջ 636:
- (8) Էջ 283-284:
- (9) Վերջին չորս գիրքերուն տեղեկութիւնները քաղած ենք Հայկ Դաւթեանի, «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտական գործէն (Երեւան, 1967):
- (10) «Ազգարար»ի վերատպութիւն. Ա. հատոր, էջ XIX:
- (11) «Հայկական տպագրութիւն», հատ. Բ. XCVIII դար, Ա. մաս (Թիֆլիս, 1901), էջ 597:

Կ. ԱԴԱԼԵԱՆ

ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆԻ Մ Ի Զ Ն Ա Ր Ա Ր Ը



Երջերս Պօղոս Սնապեանից նուէր ստացայ, իր գիրքը՝ «Միջնարար-5», տպագրուած Բէյրութում, 1992ին: Միջնարարը սակաւ օգտագործուող բառ է, բայց ոչ հնացած, ինչպէս կարծում է «Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան»ը, որովհետեւ բառերը չեն հնանում, այլ երբեմն քնում են, գալիս է բառն զգացող, ոչ բառերի չարչի-վաճառական գրողը եւ արթնացնում նրանց: Այդպէս է վարուել եւ Սնապեանը՝ արթնացրել է բառը նոր կեանքի համար: Միջնարարը երկու գործողութիւնների արանքում գտնուող մի ժամանակ է, որն ամփոփում է ե՛ր գործողութեան, ե՛ր իրականութեան տարածքներ, թէ՛ն՝ միջին, բայց՝ ոչ միջանկեալ, այլ՝ իր նախորդի եւ յաջորդի չափ լի ու լիարին շնչատութեամբ: Աւելի՛ն. միջնարարը շարունակում է սկիզբը եւ նախապատրաստում վերջը, դառնալով կամորջ գոյութեան երկու գլխաւոր ասիերի միջեւ: Ես միայն, չհասկացայ՝ ինչո՞ւ «Միջնարար-5». գուցէ սա «Պղտոր ջուրեր» անտիպ վէպի միջնարարներից մէկն է՝ հիմագերոյրը, «որ ամբողջական հարց մը ընդգրկած ըլլալու իր հանգամանքին բերումով», ինչպէս նշուած է գրքի ծանօթագրութիւնում, «հաշուի առնուած է իբրեւ առանձին գործ»: Ուզում եմ կարծել նաեւ, որ այդ վէպն ունի «միջնարարային կառուցուածք», միջնարարների մի շղթայ հայ մարդու յարափոփոխ կեանքի ու ճակատագրի մասին: Եւ եթէ սխալում եմ այս ենթադրութիւններում, թող հեղինակը լինի ներողամիտ՝ ասածս ընկալելով ոչ աւելի, քան սոյն յօդուածում մի միջանկեալ կամ, մինչեւ իսկ, ի միջի այլոց արտաբերուած խօսք:

Պօղոս Սնապեանը սփիւռքեան բաւականին յայտնի անուններից է արեւելահայ գրական կեանքում եւ վաղուց վաստակել է մեր զգայուն ատենութիւնը, նոյնքան էլ զգայուն սէրը իր անձ ու գործի նկատմամբ՝ իբրեւ գրող, հրապարակախօս եւ «Բագին» ամսագրի խմբագիր: Ատենութիւնը հրապարակաւ հասել է, ինչպէս մեր 30ական թուականներին կ'ասէին, «գոլոյզիականի», իսկ գաղտնի համակրանքն ու սէրը, ի վերջոյ բացայայտելով, նրան շնորհել են Հայաստանի Գրողների Միութեան Մ. Նալբանդեանի անուան մրցանակը՝ առաջինը Սփիւռքի գրող-մտաւորականներից: (Սփիւռքում գրողին յաճախ ասում են «գրագէտ», որ «անգրագէտի» հակադրութիւնն է, բայց գրագէտ է, օրինակ, սիրելի ուսուցիչը, որ գրող չէ, ուրեմն կը

խնդրէի եղբայր Սփիւռքին՝ օգտագործել ճիշտ բառը ճիշտ տեղում. գրագէտին ասել գրագէտ, գրողին՝ գրող, թէկուզ եւ նա մեծ ու դասական չլինի, իսկ անգրագէտին հէնց այդպէս էլ որակել՝ անգրագէտ: Դարձեալ՝ միջանկեալ կամ փակագծի մէջ): Երբ ես մտածում եմ Պօղոսի ստեղծագործական, մարդկային եւ քաղաքացիական նկարագրի մասին, սկսում եմ արժէքաւորել ո՛չ միայն ճշունած սէրը, այլեւ՝ ատելութիւնն ու թշնամանքը նրա նկատմամբ, որոնք ծագել են «օբյեկտի» անզիշում սկզբունքայնութիւնից՝ հիմքում ունենալով կաղապարագուրկ, ամէն նախապաշարմունքից ազատ մտքի գործողութիւնը: Նա ազատ է եւ կաղապարագերծ, իր ներքին տեսողութեանը հաւատարիմ, այսպիսի անհատականութիւնը, ինչ խօսք, հիանալի թիրախ է ատելութեան համար: Ի դէպ, այդ արեւելահայ իւրակերպ ատելութիւնը՝ սնուած 30ականների պղտոր ջրերով, որ փորձում էր հողին հասարեցնել նրա անձնատրոսութիւնը, գործն ու «Բագին»ը՝ իբրեւ Դաշնակցութեան մշակութային միջնաբերդ, զգալի ազդակ եղաւ հեռուում ապրող մեր գրչեղբոր հանդէպ սիրոյ ծաղկմանը: Գրականութեան եւ մշակութային ասպարէզում այդպէս քիչ չի պատահում, երբ սեւեռուն թշնամանքը ոտնատակ է տալիս ճշմարտութիւնը, սէրն ու հարազատութիւնն աւելի հիմնարկապէս են ելնում՝ յանուն նոյն այդ ճշմարտութեան:

Սնապեանը հնարատրութիւն է ընձեռում իր հետ չհամաձայնել ու վիճել յաճախ միտք ու զգացմունքների կրքոտ ընթացքով, դա նրա՝ գրագէտի, ներողութիւն՝ գրողի, ինձ թանկ ու հարազատ բնոյթն է, հազար անգամ տեսել ու տեսնում եմ, որ անվիճելի է միայն զրոն, տորիչելեան դատարկութիւնը, որին, ցաւալի է ասել, ձգտում են շատեր եւ ոչ միշտ շնորհագուրկներ՝ իրենց համար մի խաղաղ, շառ ու փորձանքից հեռու հանգրուան ապահովելու համար: Այդպիսիք, չնայած իրենց արտաքին փայլին, մեղք են եւ իսկական շառ գրականութեանը:

Պօղոս Սնապեանն էլ է սիրում վիճել, եւ շատ ու հիմնատրապէս, սակայն՝ միայն էականի շուրջ, այն երեւոյթների, որոնք քո կեանքն են եւ քեզանց գալիս ու լցում են մեծ իրականութեան մէջ: Նրա վիճասիրութիւնը ձեւ ու բովանդակութիւն է դարձել նաեւ այստեղ՝ «Միջնարար»ում, երեք հերոսներով բնակեցուած մի պատում, որտեղ նրանցից իւրաքանչիւրը իր ճշմարտութեան դատապաշտպանն է եւ դատում ու դատապարտում է միւսին՝ յանուն աւելի բարձր՝ բարոյական - ազգային ճշմարտութեան: Կայ նաեւ ներկայ - բացակայ չորրորդ գործող անձ՝ ընթերցողը, որի հետ գրողը հաշուի է նստում գուցէ ամէնից աւելի, նրան ներքաշում «Միջնարար», «հարցնում» նրա կարծիքն ու վերաբերմունքը, «ստիպում» նրան դիրքորոշուել ու կողմնորոշուել, «խառնում» նրա միտքն ու յուզաշխարհը: Այս դէպքում, այդ չորրորդը ես եմ՝ իբրեւ գրախօս, դուք եւ շատեր, որոնք պիտի բացեն գիրքը եւ կարդան ներթափանցմամբ՝ չկարողանալով լուռ-անտարբեր մնալ վէպում ներկաների ճակատագրին, որ նաեւ բացականերին է:

«Միջնարար»ում քննարկում է հարցերի ամբողջական մի շղթայ՝ Միքայէլի, Ատոմի եւ Պարոյրի մասնակցութեամբ: Վերջիններս պէտքութեամբ անակներ են, իսկ առաջինը հայրենիքից նոր է արտագաղթել կնոջ եւ երկու

երեխաների հետ՝ հետագայում տեղափոխուելու Ամերիկա: Ի՞նչ է հայրենիքը հայի համար, ժողովրդի գոյապահպանութիւն եւ հայրենիք, մարդու ազգային - քաղաքացիական պարտքն ու պարտականութիւնները հայրենիքի առջեւ, հայրենիքը ժամանակային երեք չափումներում, հայրենիք եւ Սփիւռք, հայրենիքի անցողիկն ու մնայունը,- ահա այն հարցերը, որոնք զբաղեցրել են Պօղոս Սնապեանին: Նկատում ենք. այստեղ կայ մի կենտրոնական ու կենտրոնաձիգ բառ-ֆենոմէն՝ Հայրենիքը, որն անպայման պիտի գրել մեծատառով՝ իբրեւ ընդհանուր եւ համապարփակ յուզաշխարհ արտայայտող երեւոյթ:

«Միջնարար»ի պատումն ունի բացառապէս երկխօսական էութիւն, հեղինակային խօսքը մթագնուած է ամբողջովին, Սնապեանը մասամբ կատարում է Պարոյրի դերը, աւելի ճիշտ՝ Պարոյրը նրա, որով ձեռք է բերում գործողութեան առաւել լարումն ու յարաճուն ընթացք:

Միքայէլը... Նա եղել է հայրենիք առաջին ներգաղթողներից՝ հայ մարդու լուսաւոր ձգտումներով. «...ամէնքս ալ հոն պիտի երթանք: Կ'աշխատինք ու կ'ապրինք հոն, մեր հողին վրայ, կ'ուսանին մեր համալսարանին մէջ, մեր երկրին համար, մեր ժողովրդին...»: Նրա երազանքը, սակայն, նախ դէմ է առնում, ապա եւ անմնացորդ փշրում ու փոշիանում ստալինեան դաժանութիւններով շաղախուած իրականութեան պատին: Նրան արտորում են Սիբիր՝ 1949ին շատ հայրենադարձների ցրտաշունչ հանգրուանը: Միքայէլը տառապում է ֆիզիկապէս, բայց առաւել միտք ու զգացմունքներով, որովհետեւ սերմեր ունի հարազատ ժողովրդի հոգեղէն կերտրածքից: Նա հայրենիքից փախչում է՝ ինչպէս տաժանավայրից, մնացած կեանքը մարդավայել եւ արժանապատուութեամբ ապրելու համար, երբ «իր մտապատկերին մէջ կազմուած անթերի, ազնիւ, արբեցուցիչ, գորովալիր հայրենիքի մը փոխարէն՝ դիմացը գտած էր դժնետեսիլ, խոժոռ, կասկածամիտ հարցաքննիչ մը, որ խաչի ճամբայ դարձուցած էր կեանքը իրեն համար ու մոխիրի վերածած սէրը»: Նրա մենախօսական երկխօսութիւններում հայրենիքը ներկայանում է դժոխային նկարագրով, որտեղ չկայ լոյս ու յոյսի որեւէ կէտ: Գնահատականները, որակումները, բնութագրութիւնները մէկը մէկից բացասական են: Չի մնում հերոսի նահանջի որեւիցէ կասկած, մեղաւոր մտածում ես՝ ես էլ կը հետեւէի նրա «հակահայրենասիրական» քայլին: «Ոչ արքորէն առաջ եւ ոչ ալ արքորէն ետք ես բախտ ունեցայ զգալու Հայաստանը», որովհետեւ այն նման էր անափ ժանտութեամբ լի «աներեւակայելի մոլորակի մը»: Հայրենիքի «գործակալները»՝ ներքեից վերեւ, «շնչաւոր դիակի մը վերածեցին զիս»՝ «մեզի պէսները» ենթարկելով քաղաքական, բարոյական, սոցիալական, կենցաղային ու հոգեւոր անլուր հալածանքների: «...Չկայ դրական երեւոյթ մը, որ տխրութիւն մը չպատճառէ ինձի, որովհետեւ տեսած եմ իւրաքանչիւրին մոայլ զուգահեռը, լոյսերուն հետ՝ մութը, խնդութիւններուն հետ՝ նուաստութիւնը, փառաբանութիւններուն հետ՝ ոճիրը»: Այս զուգահեռութիւնում Միքայէլը յարաբերում է գլխաւորապէս երկրորդին՝ մթին, նուաստութեանը, ոճրին՝ իր խօսքում նոր, աւելի ու առաւել խստահայեաց արտայայտութիւններով, մէկը մէկից տխուր փաս-

տերի յիշատակութեամբ, ոչնչացնող գնահատականներով ստեղծում հայրենիքի մթամած եւ ոճրային պատկերադաշտը: Ծիշտ է, նա չի մոռանում, որ մեր դաշտը գտնուում է, Ա.Մ.Ն.ի նախկին նախագահ Ռ. Ռէյգանի դիպուկ բնորոշումով՝ «չարիքի կայսրութիւնում» (այս հանրայայտ բառակապակցութիւնը հերոսի երկխօսութիւններում ու ամբողջ «Միջնարար»ում չկայ), սակայն մեզ՝ հայրենիքի զաւակներին հոգում՝ լինենք Սփիւռքում թէ այստեղ, կարծում են, մեծածանր քարածայրի պէս իջնում է պատկերի սեւմութիւնը եւ սրտիդ խորքերից բարձրանում է դրանից ազատուելու բողոքի ու ընդդիմութեան բուռն ալիք: «Միջնարար»ի ընթերցանութեան ժամանակ ես չկարողացայ զերծ մնալ այդ ալեկոծութիւնից եւ ակամայօրէն յիշեցի հին-դասական երգեր ու բանաստեղծութիւններ «թշուառ հայրենիքի» մասին, որոնցում հայրենիքի զաւակի հպարտութիւնից կաթում է լոյսի ու լոյսի ապրեցնող աւիշը եւ դու կրկին ու դարձեալ երկրպագում, փարում ես այդ «թշուառ», յանցաւոր հայրենիքին անպարագիծ սիրով:

Ես եւ շատեր Միքայէլ չենք, թէեւ չենք քստորուել Սիբիրներ, սակայն տասնամեակներ ապրել ենք մեր տածանակիր բախտ ու կեանքը՝ խմելով նրա դառը բաժակից, եւ մտքներովս անգամ չի անցել ելնել-գնալ ուրիշ աշխարհ, որտեղ ծաղկում է դրախտի ծառը: Ինչո՞ւ: Որովհետեւ քո հոգում ներկայ է երկրի տէրը, քոնն է ե՛ր մութը, ե՛ր լոյսը, որոնք բացակայ են Միքայէլների մէջ, եւ թող ամենեւին սոցիալ-բարոյական մագոխիզմ չդիտւի, եթէ ասեմ, որ այդ մութն էլ է մեզ պէսներին թանկ ու սիրելի:

Պարզունակ մի մտածողութեամբ, յաճախ գրողի եւ հերոսի արանքում դնում են հաւասարման նշան՝ նրանց դիտելով ու գնահատելով նոյն հարթութեան վրայ, այնինչ գրողն աւելի բարձր է, քան հերոսը, թէկուզ եւ այն պատճառակաճութեամբ, որ գրողն է, «յանցաւոր» հերոսի ե՛ր ծնողը, ե՛ր կնքահայրը: Պօղոս Սնապեանը բնաւ Միքայէլ չէ, այլ, ինչպէս եւ երկրորդ, մասամբ նաեւ երրորդ հերոսի դէպքում, իւրայատուկ մի մարդիչ-վարժեցընող, որ խաղասպարէզ է հանել իր խնամարկեալներին: Նրա, ինչպէս եւ ամէն գրողի, դերը այդ խաղի կառուցման ու իմաստաւորման մէջ է:

Ատոմը... Նա Միքայէլի ընդդիմախօսն է գլխաւոր հարցերում՝ միանշանակ մեղադրում-դատապարտում է նրան հայրենիքը լքելու եւ սեւացնելու մէջ, հայ մարդու քաղաքացիական պարտականութիւններից հրաժարման, յորդորում մոռանալ անցեալը, աչք փակել գործուած անարդարութիւնների առաջ, զոհանալ Աստծոյ տուածով, ապաւինել հայրենիքի գալիք օրւայ լոյսին, եւ այլն: Դժուար չէ նկատել, որ նրա ձայնը, ինչպէս ասում են՝ գալիս է տաք տեղից: Միքայէլը իսկոյն արձանագրում է. «...Տառապանքէ զերծ մնացած մարդիկ երբեք չեն կրնար մտնել տառապեալներուն կացութեան մէջ...: Դուք չէք կրնար հասկնալ մեզ, ձեր ուղեղին մէջ չի կրնար տեղաւորուիլ մեր փորձառութիւնը, ձեր մորթը անծանօթ է մեր դառն մշակոյթին...»: Ընթերցողը, այս դէպքում՝ ես, բարիանում է Միքայէլի հանդէպ եւ օտարոտի ու թշնամանքով նայում Ատոմին՝ իր ներսում խեղդելով վերոյիշեալ բողոքի շրջուած ալիքը: Ատոմը, ցաւօք սրտի, Սփիւռքում տարածուած մարդկային տիպ է, հայրենիքը սիրել ու երկրպագել, նրա ցաւը տանել,

նրա համար մտովի մեռնել հայրենիքից հեռու՝ առանց համզգալու հայրենիքում ապրող իր քոյր-եղբայրների անափ տառապանքը: Տխուր իրողութիւնը հիանալի է ձեւակերպուած՝ «ձեր մորթը անծանօթ է մեր դառն մշակոյթին»: Այս խնդիրն այժմ էլ, Սփիւռք - «Անկախ Հայաստան» յարաբերութիւններում ունի իմաստային բարձր հնչեղութիւն, արդիական է եւ խիստ հրատապ միաժամանակ, եւ եթէ սիրելի Սփիւռքի համար մի արդարացում կայ, ապա՝ միայն ընդհանուր մարդկային հոգեբանութեան հիմքով, ըստ որի՝ «Սաղն ինչ իմանայ, կաղն ինչ ա», չգիտի, դրա համար էլ նրա՝ այդ սաղի աչքին, նրա՝ այդ կաղի մեռելը մուշ-մուշ քնած է երեւում:

Պարոյրը... Ես ասացի, որ նա եւ հեղինակը մասնակի ընդհանրութիւններ ունեն, Սնապեանն ամէնից աւելի ներկայ է նրա նկարագրում, բայց բնաւ չի նոյնանում-հաւասարում նրան, այլ նաեւ նրանով է արտայայտում իր գրողական վերաբերմունքը մարդկանց եւ կեանքին: Երրորդ հերոսը գտնուում է առաջինի եւ երկրորդի միջեւ՝ բուրգային եռանկեան գագաթում, եւ իր այդ բարձունքից քննում-դատում է նրանց բառը, արարքը, գործողութիւնը՝ ի շահ առաւել բարձր ճշմարտութեան: Նա դատաւոր է, սակայն ոչ հաշտարար եւ ոչ իսկ միահեծան, այլ՝ ազատ մտքի, հետեւաբար եւ սխալական՝ ինչպէս ամէն բնական, առաւել եւս մտածող մարդ, որի հոգին, այս դէպքում լռելեայն, ալեկոծում է ազգային ցաւ ու հարցերից: Պատահական չէ, որ Սնապեանը նրան է վստահել «Միջնարար»ը պատմելու դերը, նա գրի է առնում, քարտուղարում ե՛ր զրուցակիցների, ե՛ր իր միտքն ու զգացմունքները: Նա լսում-ըմբռնում է Միքայէլին աւելի, քան Ատոմը, եւ Ատոմին առաւել, քան Միքայէլը, պատումի վերջին տեսարաններում նրանց անհաշտութիւնը հասցնելով կոնսոնանսի՝ ներքին, ոչ բառային համահունչ ըմբռնման մի աստիճանի: «Հոն հայրենիք մը ունինք՝ առանց ազատութեան, իսկ հոս ազատութիւն մը՝ առանց հայրենիքի...»: Սրանք Ատոմի բառերն են: Բայց նաեւ Միքայէլն է հասկանում, որ «կէս ենք հոն ու կէս ենք հոս»: Առաւել եւս՝ սա Պարոյրի խոր ըմբռնումն է, նա խորապէս գիտակցում է, որ առանց ազատութեան հայրենիքը գերադասելի է անհայրենիք ազատութիւնից, որովհետեւ առնուազն կիսով չափ աւելի է նպաստում մեր ազգային գոյապահպանութեանը: Այս «կէսի» նշանակութեան ու դերի հետ չի կարելի չհամաձայնել, ինչպէս նաեւ անհնարին է շընդունել այն հոգեբանական-բարոյական «թշնամանքը», որով Սփիւռքը, յանուն ազգային վերին շահերի, վերաբերում է «հայրենիքէն հեռացած» մարդկանց: Սակայն ոչ միայն նա, այլեւ հայրենիքի տառապեալներս՝ մեղադրել չմեղադրելով, որոնք առ այսօր ճաշակում են «մեր դառն մշակոյթը» եւ գիտեն, հակառակ ոմանց, որ ազգային գաղափարախօսութիւնը «ուղեղային մորմոք, սրտի հիւանդութիւն» չէ, այլ՝ մի վերին հրամայական, որի հսկողութեամբ կարող է իրականանալ ազգի միասնականացումն ու հզօրացումը:

«Ես կը վախնամ, որ օր մը, սարսափելի օր մը, պիտի չզգանք նոյնիսկ մեր արեան ցաւը եւ կեանքին շրջանը պիտի ընենք իբրեւ տնտեսական կենդանի: Հոն (հայրենիքում - Ն.Ա.) գոնէ կրնանք պահել տառապելու մեր ընդունակութիւնը, լուսալ կրնանք, երազել, մտերմանալ, հանդիպիլ մտեր-

մութեան մը, եղբայրանալ քարի մը հետ, ջուրի երակի մը, ծաղիկի մը հետ, գետնատարած փառքի մը, վեր խոյացող ուրիշ հրաշքի մը, անձեռակերտ, խոռվիչ ու կեցուցիչ նշաններու: Չեմ կրնար հրաժարիլ ատոնցմէ, որովհետեւ ինձի համար բացարձակ արժէքներ են անոնք ու արժէքներու ծնուցիչ նոյն առեւն»,- ասում է Ատոմը: Միքայէլը եւ Պարոյրը բարձրաձայն չեն ասում, բայց նոյնը խօսում են ներքին ձայնով՝ հաւաքելով-ամբողջակա-նացնելով-միասնականացնելով իրենց եռանկիւնին այս ազգային-գաղափարական «վախի» շուրջ: Այդ «վախի» արտահանող եւ ներմուծող հոգին Պօղոս Սնապեանն է, նա է խնդիրը բարձրացրել գեղարուեստական-հրապարակախօսական մակարդակի, ժամանակակիցներին ցոյց տուել դրա ցաւոտ-ողբերգական իսկութիւնը, գրողի իր գրիչը թաթախել ժողովրդեան տաք արեան մէջ եւ արդարացիօրէն արժանացել «Ս. Ներսէս Ծնորհալի» գրական ֆոնտի առաջին աստիճանի մրցանակին:


«Միքայէլին պատմածներուն յուշերով» Պարոյրի «արիւնը կը տառապի»: «Միջնարար»ի գրութեան փաստը Պօղոս Սնապեանի արեան տառապանքի վկայութիւնն է: Ով արեան տառապանքով է սիրում հայրենիքը եւ ժողովրդին՝ նա չի կարող նրանց միայն ծափողջոյններով գովաբանել, այլ, աւելի եւ առաւել, պիտի վերաբերի նրանց մի վերին ու սրբազան դժգոհութեամբ, ինչպէս «Յանուն հայրենիքին իրենք զիրենք բզկտող» գրագետները, ոչ գրողներն են վարուել՝ խօսելով նրանց էական հիւանդութիւններից՝ նրանց տեսնելու առողջ ու հզօր: «Միջնարար»ում ախտորոշում են ե՛ւ Մայր Հայրենիքի, ե՛ւ Սփիւռքի մի քանի ներքին, նրանց կեանքը կարճող, բայց լինենք լաւատես, ոչ անբուժելի հիւանդութիւններ. սրանում է Սնապեանի այս ստեղծագործութեան հասարակական արժէքն ու կարեւորութիւնը երէկ, այսօր եւ վաղը, այո, նաեւ վաղը, քանի որ, ցաւօք սրտի, դրանք երկարատեւ բուժում են պահանջում ամենաբարդ ու դժուարին՝ բարոյականութեան ներարկումներով: «Միջնարար»ի վարագոյրը փակում է Բաֆֆի - Սամուէլեան բանաձեւմամբ: Չգիտեմ, Սնապեանը յիշե՞լ է «անմահ հոգու» մեծ ու անմահ վէպը: Եթէ մինչեւ իսկ չի մտաբերել նրա տողը, զգացել է այն իր խոր յուզաշխարհում: Կրկին ու դարձեալ յիշենք եւ այլեւս չմոռանանք, Սամուէլը սիրած աղջկան ասում է. «...Երկու սիրելիներ դրած են իմ առջեւ. մէկը վտանգի մէջ գտնուող հայրենիքը, միւսը վտանգի մէջ գտնուող կինը՝ դու: Երկուսն էլ ինձ համար հաւասար չափով պաշտելի են, երկուսն էլ ինձ համար հաւասար չափով անզնահատելի են: Երկուսի ձայներն են կանչում են ինձ: Երկար եւ տանջում էի այն մտքով, թէ դէպի ո՞րը դիմեմ: Երկուսի համար եւ ուխտել եմ անկեղծ անձնագոհութիւն: Բայց իմ զգացումները դժուարացնում են ինձ վճել, թէ որի՞ն պէտք է նուիրել առաջին զոհը: Ահա իմ սրտագին ըղձերը, իմ ամենաջերմ փափաքները թափում եմ քո առջեւ, սիրելի Աշխէն, դու ցոյց տուր ինձ այն ճանապարհը, թէ դէպի ո՞րը գնամ»: «Կին» բառը փոխարինենք «ազատութիւն» բառով եւ կարդանք «Միջնարար»ը. «Ազատութիւնը ձրի շնորհուած հարստութիւն էր ինձի, իսկ հայրենիքին մասին երբեք այդքան երկար չէի մտածած, այլ հիմա, երբ երկու այդ թանկ բաները միասին ունենալու բախտէն զրկուած

կ'ապրինք եւ ճակատագիրը ընտրութիւն մը ընելու հարկադրանքին տակ դնէ զիս, ես ո՞ր մէկուն պիտի տամ իմ քուէս, ազատութեա՞ն, թէ հայրենիքին, ո՞ր մէկուն, ո՞ր մէկուն...»: Երբ ժամանակը մտնում է իր ողբերգական հունը, բոլոր մտածող հոգիներն են կանգնում նման կամ տարբեր երկընտրանքների առջեւ: Չեմ սխալուի եթէ ասեմ, որ այս հարցականում Սնապեանի սրտի եւ հոգու աչքերը նայում են հայրենիքին՝ շեղուելով վսեմ ազատութիւնից: Նա միայնակ չէ. ահա եւ ու դուք: Սակայն բոլորը չեն մտածում եւ նայում մեզ պէս. շատեր կողմնորոշուած են դէպի ազատութիւնը, նրանց արժանապատուութիւնը անկեղծօրէն յարգելով ասեմ՝ ոչ դէպի հացի խնդիրն ու քաղցր կեանքը, թէեւ այդպիսիք էլ կան եւ զնում են ու հեռանում... «Միջնարար»ը կերպատրում է նաեւ այս գործողութիւնը, որ ե՛ւ մարդկային, ե՛ւ ազգային ողբերգութիւն է:

Պօղոս Սնապեանը իր հայրենիքը եւ նրա ժողովրդին առաջին անգամ տեսաւ ընդամէնը մի քանի տարի առաջ, «Միջնարար»ը 1987ին «Բագին»ում տպագրելուց յետոյ: Ամբողջ, ինչպէս ասում են, գիտակցական կեանքն անցկացնելով Բէյրութում, նա եղել է իր հայրենիքի հետ՝ սրտի ականջով եւ տիրոջ զգացողութեամբ օր-գիշեր լսելով, ապրելով ու անվերջ վերապրելով նրա քաղցր եւ առաւել դառնադի համանուագը: Տեղը չէ՞ ներդամիտ ժպիտով նշելու, որ Սփիւռքի շատ գրողներ ու մտաւորականներ ճաշակեցին, ըմբռնեցին հիմնականում, չեմ ուզում ասել՝ միայն, մեր սեղանի իւղ-շաքարով հունցուած թխուածքներն ու արեւահամ պտուղները, անհաղորդ մնալով հոգին տակնուվեր այրող նրա կծութիւնների: (Այսօր էլ նոյնն է կամ գրեթէ նոյնը՝ անկասկածելի, գրկաբաց հիացմունք մեր կախեալ անկախութեան մթամածութեամբ, հիացմունք, որ ի վիճակի է մարելու, եւ արդէն մարում է, ապագայի յոյսն ու լոյսը): Պօղոս Սնապեանին այստեղ քարկոծել են հայրենիքի դէմ դիրքորոշուելու մեղադրանքով՝ նրա սրբազան դժգոհութիւնը դիտելով իբրեւ սրբազան թշնամանք: Ով շատ է սիրում, խենթօրէն, նրա սիրտը ցաւում է առաւել, սա մի ճշմարտութիւն է, որ յարաբերում է ո՛չ միայն հասարակական, այլեւ՝ անձնական կեանքին: Վկայ՝ նաեւ Պօղոս Սնապեանի գրական յուզաշխարհը:

Գեղարուեստական գրականութիւնը եւ նրա թողը՝ հրապարակախօսութիւնը՝ ձեւ-կառուցուածքով գեղեցիկ ու առինքնող, բովանդակութեամբ արտայայտում են սիրոյ տառապանքը եւ իրականութեան ու թեւատր երազանքի միջտ առկայ անհամապատասխանութիւնից սնուող մի դժգոհութիւն, որը, հակադարձօրէն, մարմնատրում է այդ սիրոյ խորքն ու վեհութիւնը: Չեմ ցանկանում ինձ անպայման հաւատան, սակայն ուզում եմ սխալած չլինել:

Երեւան ՆՈՐԱՅՐ ԱՂԱՎԵԱՆ



ԳԱՇՆԱԿԱՀԱՐ ՄԱՐԱԼ ՈՒՋՈՒՆԵԱՆԻ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

4 տարեկանին դաշնամուրի դասընթացքներու հետեւած եւ բազմաթիւ մրցանակներու տիրացած գանատահայ Մարալ Ուզունեան, որ անցեալ տարի առաջին կարգի պատուոյ յիշատակութեամբ աստուած էր Թորոնթոյի Արքայական երաժշտանոցը եւ արժանացած՝ յատուկ կրթաթոշակի, 12 Մարտ 1994ին, Նիւ Եորքի «Քարնէկի հոլ»ի «Weill Recital Hall» սրահին մէջ տուած է բացառիկ նուագահանդէս մը: 1980էն ի վեր Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան թեմի առաջնորդարանին կողմէ կազմակերպուող Musical Armenia կոչուող երգահանդէսներուն 13րդ ձեռնարկին հրաւերը այս տարի ուղղուած է երիտասարդ դաշնա-



կահարուի Մարալ Ուզունեանի, որ 12 Մարտի իր նուագահանդէսով հմայած է վերոնշեալ սրահը լեցուցած շուրջ 300 երաժշտասէրները: Ամենայն բժախընդրութեամբ պատրաստուած յայտագիրով մը, Մարալ Ուզունեան մեկնաբանած է բնորոշ յօրինումներ Մոցարթի, Պեթհովէնի, Պրահմսի, Շոփէնի, Կոմիտասի եւ Պապաջանեանի ըստեղծագործութիւններէն: Բարեսիրական նպատակով կազմակերպուած սոյն ձեռնարկին իր նիւթական մասնակցութիւնն ալ բերելու նախանձախնդրութեամբ՝ իբրեւ վարձատրութիւն իրեն տրուած պատուոյ գումարը Մարալ Ուզունեան նուիրած է Առաջնորդարանի կազմակերպած Հայաստանի որբերու օգնութեան ծրագիրին:


«ԱՆՏԵՍՈՒԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ»՝ ՌՈՒՄԱՆԵՐԷՆՈՎ

Ռումանիոյ մէջ վերջերս լոյս տեսած է Սարգիս Սէլեանի «Անտեսուած ցեղասպանութեան մը պատմութիւնը» գործին ռումաներէն թարգմանութիւնը: Հեղինակը Հայկական Ցեղասպանութիւնը ներկայացուցած է՝ հիմնուած տեղեկատուական զանազան աղբիւրներու վրայ: Անոր հիմնական մտահոգութիւնը եղած է Ռումանիոյ ժողո-

վորդին առարկայականօրէն ներկայացնել 1915ի Եղեռնը:

Յայտնենք, որ 15 Յուլիսին, Պուրէշի Պատմութեան Ազգային թանգարանին մէջ, վերոյիշեալ գիրքը գրասէր հասարակութեան ներկայացուցած է պատմութեան դոկտոր Փ. Չեռնովուտեանու:

Գիրքին մասին խօսքեր արտասանած են թանգարանի փոխ-տնօրէնը, «Սելիքս» հրատարակչատան տնօրէնը, երեսփոխան Վարուժան Ոսկանեան եւ հեղինակը:



րէր Հ.Ն. Գիտութիւններու Ակադեմիայի արուեստի հիմնարկութեան մէջ եւ կ'աշխատակցէր հայրենի մամուլին, որուն էջերուն կը ստորագրէր ճարտարապետական հարցերու նուիրուած վաւերական ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:

ԱՐՄԷՆ ԶԱՐԵԱՆ ՈՉ ԵՒՍ Է

Երեւանի մէջ, Երեքշաբթի, 31 Մայիսին, յետ երկարատեւ հիւանդութեան մահացած է վաստակաւոր ճարտարապետ, ճարտարապետութեան թեկնածու Արմէն Կոստանի Զարեանը, որ իր ճարտարապետական խոր հմտութեամբ եւ բազմաթիւ ուսումնասիրութիւններով՝ արդարօրէն կը նկատուէր իր մարզի Հայաստանի կարկանդակն ընկերէն մէկը:

Արմէն Զարեան ծնած է 1914ին՝ Պուլխս: 1932ին, Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանը աւարտելէ ետք, մասնագիտական ուսումը կը շարունակէ նախ Վենետիկի ճարտարապետութեան կաճառին, ապա՝ Փարիզ, «Էքոլ տը Պոզար»ին մէջ: Այնուհետեւ կը յաճախէ Հռոմի համալսարանի ճարտարապետութեան կաճառը, ուրկէ կը ստանայ մասնագիտական իր բարձրագոյն վկայականը: Մինչեւ 1963 կ'աշխատի եւ կը գործէ Հռոմի մէջ, կառուցելով 252 ձեռնարկներ, իսկ 1963ին, Հայաստան ներգաղթելէ ետք՝ կը նախագծէ բնակելի եւ ուսումնական բազմաթիւ շէնքեր, բայց յատկապէս՝ Երեւանի գլխաւոր պողոտան: Իր կեանքի վերջին տարիներուն, այս արուեստագէտ ճարտարապետը կը պաշտօնավա-

«Ի ԶԷՆ, ՀԱՅԵՐ» ՏԵՍԵՐԻՉԸ

Խրախուսուելով Արցախի ազատամարտին նուիրուած «Ի ԶԷՆ, Հայեր» ձայներիգի վայելած ժողովրդային ընդունելութենէն, հրապարակ իջած է Կարինէ Աւագեանի նոյնանուն երաժշտական տեսերիզը:

Վաւերագրական եւ դաստիարակչական արժէք ներկայացնող արուեստի այս գործը կ'ընդգրկէ 9 ազգային երգեր՝ կատարողութեամբ պատանի երգչուհի Արմինէ Աւագեանի:

Աւագեանի երգեցողութեան պատկերները հիաւուած են Արցախի ազատամարտի վաւերագրական պատկերներով:

Ինչպէս ձայներիգին, տեսերիգին հասոյթը նաեւ ամբողջութեամբ պիտի տրամադրուի Արցախի Ֆոնտին:

Յիշենք, որ Կարինէ Աւագեանի վերոյիշեալ ձայներիգն ու տեսերիզը Արցախի Ֆոնտին ցարդ ապահոված են 52500 ամ. տոլար:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԱՐՈՒԵՍԻ ԵՒ ԱՐՀԵՍԻ ՓԱՌԱՏՕՆԻՆ

«Համազգային»ի Քրեթեմա Հովիտի մասնաճիւղը վերջերս մասնակցած է Կլէնտլի առաջին "Rose Float Arts & Crafts Festival"ին, որ տեղի ունեցած է Շաբաթ եւ Կիրակի, 13-14 Օգոստոսին:

Ցուցադրութիւնը ներառած է արւեստի եւ արհեստի հետեւեալ ճիւղերը՝ նկարչութիւն, քանդակագործութիւն, լուսանկարչութիւն, բրուտագործութիւն, ապակեգործութիւն, փայտագործութիւն, մետաղագործութիւն, ծաղկայարդարում, ասեղնագործութիւն եւ գորգագործութիւն:

Այս փառատօնին «Համազգային»ը մասնակցած է գլխաւորաբար առաջնորդուելով երկու մտահոգութեւէ. առաջին՝ շրջանին մէջ հայ հասարակութեան ներկայացնել հայկական արւեստներն ու արհեստները, ինչպէս նաեւ՝ երաժշտութիւնն ու պարը, երկրորդ՝ առիթ ընծայել տեղւոյն հայ արուեստագէտներուն՝ ցուցադրելու եւ վաճառելու իրենց ստեղծագործութիւնները:

«ՎԵՐՋԻՆ ԿԱՅԱՆ»Ը Կ'ԱՐԺԱՆԱՆԱՆ 8 ՄՐՅԱՆԱԿՆԵՐՈՒ

Մանթա Մոնիքայի (Քալիֆորնիա) մէջ, վերջերս ցուցադրուած է Արմենֆիլմ սթիւտիօ-Բարեւ ֆիլմերու արտադրութեամբ եւ 95 վայրկեան տեւողութեամբ «Վերջին կայան» անուն հայրենի առաջին անգլիախօս ժապաւէնը, բեմադրութեամբ հայրենի արւեստագէտ Յարութիւն Խաչատրեանի: Երաժշտութեան հեղինակն է հայրենի երգահան Աւետ Տէրտէրեան: Շարժապատկերի հերոսներն են Նորա Արմանի եւ Ժիրարյ Փափազեան: Իրենց

մասնակցութիւնը բերած են նաեւ հայ եւ օտար դերակատարներ, յատկապէս՝ նախկին Խ.Միութեան մէջ մեծ համբաւի տիրացած Արմէն Ջիգարխանեան: Ժապաւէնին նկարահանումները կատարուած են Փարիզի, Լոնտոնի, Լոս Անճելըսի, Երեւանի եւ ֆրանսական Աւինիոն քաղաքին մէջ, իսկ յետ արտադրական խմբագրումներն ու համադրումի աշխատանքները՝ Երեւանի մէջ:

«Վերջին կայան»ը ցարդ ներկայացւած է 4 երկրամասերու 20 գլխաւոր քաղաքներու մէջ եւ արժանացած՝ 8 մրցանակներու, շնորհիւ Արմանի եւ Փափազեան զոյգին հայերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներու տիրապետումին, ինչպէս նաեւ՝ հայկական, ամերիկեան եւ եւրոպական թատերախումբերու մէջ իրենց արձանագրած յաջողութիւններուն:

...ՆԱԵՒ ՊԷԶՃԵԱՆԻ «ՄԻՍԵՌ»ԻՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ

Բեմադրիչ Նիկոլ Պէզճեանի «Միսեռ» ֆիլմը, որ պատրաստուած է 1992ին, 22-24 Յունիսին ներկայացւած է Նիւ Եորքի Մարք Կուտսըն թատերասրահին մէջ: ՀԲԸՄի արուեստի բաժանմունքի կազմակերպութեամբ եւ ոտքայ այս ցուցադրութեան ներկայ գտնուած է բեմադրիչը եւ պատասխանած ներկաներու հարցումներուն:

Ժապաւէնը կը ներկայացնէ կեանքը լիբանանահայ երեք երիտասարդներու, որոնք կը փորձեն գոյատեւել Լոս Անճելըսի հայկական գաղութին մէջ: «Միսեռ»ի նկարահանումը տեւած է 42 օր, 3 տարիներու ընթացքին:

«Միսեռ»ը հայկական առաջին ժապաւէնն է, որ ներկայացուած է Չինաստանի մէջ, 1993ի Շանկիայի Միջազգային ֆիլմի փառատօնին, 3000 հանդիսատեսներու ներկայութեամբ:

...ԵՒ «ՀԱՅԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ»

Հ.Յ.Դ. Լիբանանի Տեղեկատու Գըրասենեակի գործակցութեամբ՝ պատկերասփիւռային բեմադրութեան մէջ մասնագիտացած Միլատ Հաշէմ իրականացուցած է լիբանահայ գաղութի եւ անոր արմատներուն նուիրուած առաջին վաւերագրական ժապաւէնը՝ «Հայերը Լիբանանի մէջ», որ լիբանանցի հասարակութեան հրամցուեցաւ Չորեքշաբթի, 5 Յունուար 1994ի երեկոյեան, LBCI (Լիպանիզ Պրոտքասթինկ Զորփորէշըն Ինթերնէշընըլ) պատկերասփիւռի կայանէն:

Լիբանանի ամէնէն նշանաւոր կայաններէն՝ LBCIի արտադրութիւնը հանդիսացած «Հայերը Լիբանանի մէջ»ի նկարահանումը տեւած է վեց ամիս: 110 վայրկեան տեւողութեամբ այս ժապաւէնին շուրջ 40 վայրկեանը տրամադրուած է Հայոց Պատմութեան եւ Հայաստանին, հայ ժողովուրդի պատմութեան գլխաւոր հանգրուաններուն, հայ մշակոյթին (ձարտարապետութիւն, գրականութիւն, մանրանկարչութիւն, կերպարուեստ, պարարուեստ, թատրոն, եայլն) եւ Հայաստանի Հանրապետութեան հիմնահարցերուն եւ տագնապներուն՝ այս բոլորին մասին համընդհանուր այլ ամփոփ գաղափար մը փոխանցելու նախանձախնդրութեամբ: Նոյն նպատակով, ներկայացուցչական դրուագներու ընդմէջէն նաեւ ներկայացուած են լիբանանահայ գաղութի կազմութիւնն ու նուաճումները՝ իր եկեղեցիներով, դպրոցներով, միութիւններով, հիւղաւաններով, նորակառոյց թաղամասերով, ասանդակաւ բարքերով, եայլն, ինչպէս նաեւ՝ Լիբանանի կազմաւորման եւ զարգացման մէջ հայութեան բերած հրատարակչական, թատերական, երաժշտական, գեղանկարչական, մարզական, ընկերային, ձարտարարուեստական, արհեստագիտական եւ այլ նպաստներով: Ժապաւէնը հարստացած է հայրենի եւ լիբա-

նանահայ ներկայացուցիչ անձնատրութիւններու եւ պարզ հայորդիներու հետ կատարուած կարճ հարցազրոյցներով: Բեմադրիչ Միլատ Հաշէմի օժանդակած են Սարգիս Կիրակոսեան (բեմագրութիւն եւ մեկնաբանութիւն), Վերա Եագուպեան (ընդհանուր յարաբերութիւններ), Ժոզէֆ Ապի Տահէր (արաբերէն մեկնաբանութիւններ) եւ բազմաթիւ նկարահաններ ու արհեստավարժներ:

ՍԷՆԹ ԷՔԶԻԹԵՐԻԻ ՆՈՒԻՐՈՒԱՄ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

14 Սեպտեմբերին, Երեւանի Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին մէջ տեղի ունեցած է ֆրանսացի գրող եւ օդաչու Անթուան Տը Սէնթ Էքզիպիերիի մահուան 50ամեակին նուիրուած երեկոյ, կազմակերպութեամբ Հայաստան-Ֆրանսա ընկերութեան:

Այս առիթով, Հայաստանի մօտ ֆրանսական դեսպանատան մշակութային հարցերու կցորդ Փաթրիք Տօնապետեան ձեռնարկը կազմակերպողներուն տրամադրած է գրողին կեանքն ու ստեղծագործութիւնը բնորոշող որմագոյներ, որոնք զետեղուած են թանգարանի սրահին պատերուն:

Երեկոյի բացման եւ ներածական խօսքերով հանդէս եկած են ընկերութեան վարչութեան նախագահ փրոֆեսօր Ռուբէն Սահակեան եւ թանգարանի տնօրէն Հենրիկ Բախչինեան: Թարգմանչուի Սոֆի Աւագեան ներկայացուցած է «Փոքրիկ իշխան»ի հեղինակի կեանքին հանգրուանները, ինչպէս նաեւ՝ ստեղծագործական աշխարհը:

Գործադրուած է գեղարուեստական յայտագիր: Դաշնակահարուի Զեմֆիրա Բարսեղեան մեկնաբանած է Կոմիտաս վարդապետի յօրինումներէն նմոյշներ, իսկ մեներգչուի Սուսաննա



**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԹԱՏՐՈՆԸ
ՄԱՍ ԿԸ ԿԱԶՄԷ
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ՀԻՄՆԱՐԿԻՆ**

Հայաստան դարձած է 1947ին ըստեղծուած Թատրոնի Միջազգային Հիմնարկի 84րդ անդամը, Պանկլատեղին, Թրինիտատէն եւ Թոպաքոյէն ետք:

ԹՄՀի Հայկական ազգային կեդրոնի առաջին նախագահ, թատերական գործիչ Ռաֆայէլ Յակոբջանեան յայտնած է, որ այս հիմնարկին անդամակցելով, հայկական թատրոնին առջեւ կը բացուին նոր հեռանկարներ՝ միջազգային թատերական շրջանակներուն մէջ:

Կեդրոնին փոխ նախագահն է թատերագիր Պերճ Զէյթունցեան, իսկ վարչական խորհուրդին մաս կը կազմեն բեմադրիչ եւ դերասան Սօս Սարգսեան, պետական օփերայի տնօրէն Տիգրան Լետնեան եւ բեմադրիչներ Ալեքսանդր Գրիգորեան եւ Վահէ Շահվերդեան:

Մարտիրոսեան կատարած է օտարարուեստագէտ-երաժիշտներէ քանի մը երգ: Յուցադրուած են նաեւ Աէնթ Էքզիւփերիի ստեղծագործութիւններու ֆրանսերէն վերջին հրատարակութիւնները:

Յառաջիկայ Հոկտեմբերին Հայաստան-Ֆրանսա ընկերութիւնը ծրագրած է կազմակերպել «Կոմիտասը Ֆրանսայի մէջ» թեմայով երեկոյ մը, նուիրուած՝ Կոմիտաս վարդապետի ծննդեան 125ամեակին:



ԼՈՅՍՍ ՏԵՍԱՆ

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

«ՀԱՏԸՆՏԻՐ»

(ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՑԻՄՆԱՄԵԱՅ ՑՈՒԲԵԼԵԱՆԻՆ ԱՌԻԹՈՎ)

Պէյրուք, 1994, 111 էջ, տպարան ԾԻՐԱԿ, «ՄԱՇՏՈՑ» մատենաշար, թիւ Բ.

ՍԵՒ ՔԱՐԵՑԻ ՍԱՔՕ

«ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ»

Պէյրուք, 1994, 192 էջ, Հ. Յ. Դաշնակցութեան երիտասարդական «ԿԱՅԾԵՐ» մատենաշար, թիւ 3

ԳԷՈՐԳ ԱԲԷԼԵԱՆ

«ԱՆՆԱ ՀԱՐՍԸ»

(ՎԷՊ՝ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

Լիբանան, 1994, 293 էջ, տպարան՝ ԶԷՅՆ ԷԼ ՏԻՆ ԲՐԷՍ

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ (գոյգ թիւ) 5.000 Լ.Ո.
Տարեկան բաժնեգին 30.000 Լ.Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ (գոյգ թիւ) 100 Ս.Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

باكين

مجلة شهرية ، ادبية فنية وعامة
المدير المسؤول
السيد ارتين كارنيك قزانيان

•
P A K I N E
REVUE MENSUELLE
LITERAIRE & ARTISIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•
Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր
ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

Խմբագրութեան անդամ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցէ՝

Centre Culturel SHAGHZOYAN
Bourdj Hammoud — Liban